Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1903

5° ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ
ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԱՒԵՐԱՑՈՒԱԾ Է ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՇՈՒՐԴԷՆ

معارف نظارت جلیله‌سنك ١١٢ و ٢٦ نیسان سنه ٣١٩
تاریخلی رخصتیله طبع اولنمشدر .

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ
Պապը-Ալի հաստէսի թիւ 38

1903

491.542-5
Դ--29

11.06.2013

18 MAY 2013

04 MAY 2010

425
53-ԴԱ

5° ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1004
163366

Ա.ՇԽԱՏԱՍԱՐԵՑ
ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆ

معارف نظارت جلیله‌سنك ۱۱۲ و ۲٦ نیسان سنه ۳۱۹
تاریخلی رخصتیله طبع اولنمشدر .

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԳՍԵԱՆ
Պապը-Ալի ճաւտէսի թիւ 38

1903

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ի ՅԱՆԻ ԱՍՎԱՍ

Դասատուներէն կը խնդրուի ճշդի՛ւ գործադրել դասաւանդման եղանակը որ դրուած է այս գիրքին սկիզբը :

1 Օգոստոս, 1903

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Տարրական Քերականութեան այս Երկրորդ կամ Լրացուցիչ Շրջանն ուրիշ բան չէ, բայց եթէ նախորդն՝ աւելի ճոխացած բազմազան հրահանգներով։ Աշակերտը, որ կ'աւարտէ Առաջին եւ Հաւնաոs ընթացքը, այս Ընդարձակին վրայ կըրկնութիւն մը կ'ընէ նախորդ շրջանի դասերուն, և նոր նոր հրահանգներուն շնորհիւ, աւելի ճիշդ, յստակ ու հիմնական կերպով կ'ըմբռնէ և կը գործադրէ դասագրքիս տեսական մասը։

ԴԱՍԱՒԱՆԴՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Կը խնդրենք որ Պատ. Ուսուցիչը հոգ տանի գործադրելու դասաւանդման եղանակը զոր ստորև կը գծենք, և ի հարկին աւելի ընդլայնելով՝ բայսարէ զայն աշակերտներո՛ւն ալ։

ԴԱՍԱՏՈՒՆ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

Կ'ուզեմ քանի մը խօսքով ձեզի հասկցնել թէ ի՛նչպէս պիտի կարդանք աս գիրքը որ ձեզի պիտի սորվեցնէ Հայերէն լեզուն ուղիղ խօսիլ, կարդալ եւ գրել։ Ասոր մէջ կան այլ և այլ տեսակ նիւթեր, սորվելիք առարկաներ։

1. Կանոններ. — Դասի ատեն, ես ձեզի պիտի կարդամ կանոնները, որ գրքին անզոյգ էջերուն վրայ են, և դուք՝ աչքի առջև ունենալով ձեր գիրքը՝ մտիկ պիտի ընէք։ Կանոնները պիտի բացատրեմ՝ օրինակներ գրելով սև տախտակին վրայ։ Յետոյ ձեզ պիտի հարցափորձեմ, գիտնալու համար թէ լաւ հասկցած, ըմբռնած էք նոյն կանոնները. ձեզի՛ ալ պիտի գտնել տամ օրինակներ, և եթէ ճիշդ են, պիտի գրել տամ Քերականութեան Կանոններու տետրակին մէջ, այդ տետրակին մէն մի էջը պիտի կրէ դասագիրքին էջերուն թիւը, անոր մէջ պիտի գրէք նախ կանոնը և տակն ալ նոյն կանոնին վերաբերեալ ծանօթութիւններ, դիտողութիւններ, գի-

տեղիմներ, բացատրութիւններ և օրինակներ։ Վաղը ձեզի պիտի հարցնեմ այս դասը, և դուք պիտի պատասխանէք իմ հարցումներուս, բայց գրքին մէջի կանոնները նոյնութեամբ ըսելու պարտաւոր չէք, կրնաք ուրիշ բառեր գործածել, բաւական է որ նո՛յն միտքը բացատրէք, և օրինակներով հաստատէք ձեր սորված կանոնները։

2. Հրահանգներ. — Ձեր գիրքին մէջ հրահանգներ գրուած են. ասոնք պարզապէս քերականական կանոններուն, բառագիտութեան և բառակազմութեան վրայ գործնական վարժութիւններ են, որոնք պիտի նպաստեն նոյն կանոնները լաւ տպաւորելու ձեր միտքին մէջ։ Պիտի սորվիք նաև թէ բառերը ի՛նչպէս կը կազմուին, արմատները և մասնիկները որո՞նք են։ Այս վարժութիւնները նախ դասարանին մէջ պիտի ընենք միասին՝ բարձրաձայն։

Ամէն մէկ բառը և խօսքը կարդացած ատենդիդ, յիշեցէք վերի կանոնը և, եթէ պակաս մասեր կան, ամբողջացուցէք։ Բերանացի կատարուած նոյն հրահանգները յետոյ, սերտողութեան ատեն — կամ ձեր տունը — գրաւոր ալ պիտի կատարէք պարտականութեան տետրակին մէջ։ Հոլովելի բառերը, խոնարհելի բայերը գրելով՝ այլ և այլ վարժութիւններն ամբողջ կատարեցէք և միտքերնիդ պահեցէք անոնց ձեւն և կանոնը։ Զգիացածնիդ կամ մոռցածնիդ ուրիշին կրնաք հարցնել։ Հո՛գ տարէք մաքուր գրելու, ճի՛շդ և անթերի կատարելու նոյն հրահանգները։ Տետրակները մաքուր պահող աշակերտին քարեմիշ կուտամ։ Վաղը, դասի ատեն, նոյն գրածնիդ պիտի կարդաք և, եթէ սխալ կայ, պիտի սրբագրէք։ Կրնանք մէկուն գրածն ուրիշի մը տալ սրբագրելու համար. ասով ամէն ոգայ առիթ կ'ունենայ իր ընկերոջ գրածին վրայ կարծիք յայտնելու, դիտողութիւններ և դատողութիւններ ընելու։

3. Ընթերցում. — Ընտիր հատուածները զորս պիտի գտնէք այս Քերականութեան մէջ, պէտք է նախ ընթերցման

նիւթ ընենք։ Ես պիտի սկսիմ կարդալ, և դուք պիտի հետեւիք. գիրքին յառաջ ձեր աչքն ու միտքը՝ ուշադրութեամբ մտիկ պիտի ընէք։ Պիտի կարդամ՝ բարձրաձայն, յստակ, հասկնալի կերպով. կէտերուն, շեշտերուն և ձայնի եղեւէջներուն հոգ տանելով։ Վերջը ձեզի՝ ալ պիտի կարդացնեմ կարգով. ո՛ւր որ հարկ կայ, դիտողութիւններ պիտի ընեմ՝ ըսելով. «Շատ արագ կը կարդաս, կեցի՛ր, չո՛ւնչ առ, սա բառը չեշտելու է, միօրինակ ձայնով կարդալու չէ, մանաւանդ երգելու պէս բան մը կ'ընես։ Բա՛րձր, աւելի՛ բարձր կարդա՛, բայց ո՛չ թէ պոռալով։ Յստակ հնչէ, որպէս զի ընկերներդ լսեն ամէն մէկ բառի, վանկի, գիրի ձայնը, և հասկնան գրուածը։ Այսպէս լա՛ւ է, ապրի՛ս։ Հիմա դուն կարդա՛, Պողոսիկ։»

Ընթերցումը պէտք է շատ պարզ և բնական ըլլայ, նիւթին՝ իմաստին համեմատ, խօսակցութեան ձեւով և ո՛չ թէ բռնազբօսիկ։

4. Հատուածին վրայ խօսակցութիւն. — Ամէնքդ ալ կարդացիք, այնպէս չէ՞։ Հիմակ ալ աս հատուածին վրայ քիչ մը խօսակցինք. դժուար բառերուն բացատրութիւնը և օգտակար տեղեկութիւններ պիտի տամ ձեզի աս նիւթին վրայ։ (Եւ դասատուն կը սկսի մեկնաբանել հատուածին մէջն մի բառը. նիւթը կը բացատրէ, իրագիտական, մտամարզական, աշխարհագրական, պատմական, քերականական և այլ կարեւոր կէտերը աշակերտներուն կը յիշեցնէ)։ Յետոյ ձեզի կրկնել պիտի տամ այս ծանօթութիւններս ու դիտողութիւններս։ Ուրեմն միտքերնիդ պահեցէք. տեսնեմ ո՞վ պիտի կրնայ ամբողջ այս բացատրութիւնները կրկնել։ Եթէ չէք հասկցած, նորէն ըսեմ։ Շատ զուարճալի է, անանկ չէ՞։ Ձեմ ուզեր որ ձանձրանաք։ Հիմա վստահ եմ թէ լաւ կը հասկնաք քնագիրը զոր կարդացինք։ (Դասատուն կրնայ հատուածներուն վրայ հարցումներ ընել և անոնց պատասխանը պահանջել բերանացի և գրաւոր կերպով, ինչպէս էջ 92, հրահանգ Բ.)։

5. Լեզուի եւ ոճի վարժութիւն. — Տեսնեմ կրնա՞ք սա կտորը կրկնել՝ առանց գրքին վրայ նայելու։ Ըսէ՛, Խաչիկ, պատմէ՛ սա գրուածը, միայն մի՛տքը հասկցուր, հոգ չէ թէ ուրիշ բառերով՝ քու գիտցած բառերովդ ըլլայ։ Դո՛ն ըսէ հիմա, Թորո՛ս։ Շատ դիւրին բան է, ի՛նչ որ հասկցար, նոյնը ինծի ալ զրուցէ՛, մի վարանիր։ Դուն ալ պատմէ, Դաւի՛թ, ըսէ՛, ըսէ՛. — հեքեաթ զրուցել չե՞ս գիտեր, ճիշդ այնպէս ըրէ։ Այսպէսով ձեր միտքը ուրիշին յայտնելու՝ խօսելու կը վարժուիք. խօսիլն ալ, մանաւանդ լա՛ւ խօսիլը՝ կարեւոր բան է։

6. Ընդօրինակութիւն եւ ուղղագրութիւն. — Այս հատուածը զոր կարդացիք, բացատրեցիք և պատմեցիք, հի՛մա ալ ուշադրութեամբ պիտի օրինակէք. մտքերնիդ պահեցէք թէ բառերը ի՞նչ գիրով կը գրուին, չսխալի՛ք. ասոր ուղղագրութիւն կ'ըսեն. դ գրին տեղ թ չդնէք. բ ի տեղ փ, խ ի տեղ ղ, ե ի տեղ է, գ ի տեղ ք, հ ի տեղ յ, ռ ի տեղ ր, ւ ի տեղ վ, օ ի տեղ ո, չ ի տեղ ջ, չդնէք. ինչպէս որ գրուած է, նոյնութեամբ օրինակեցէք։

7. Զրուցագրութիւն. — Վաղը նոյն հատուածին վրայ ուրիշ վարժութիւն մը պիտի ընենք. ե՛ս պիտի կարդամ, դուք ալ, առանց գիրքին վրայ նայելու, նոյն հատուածը պիտի գրէք պարտականութեան տետրակին մէջ. — ասոր կ'ըսեն զրուցագրել։ Վերջը՝ գրածնիդ իրարու հետ պիտի փոխանակէք՝ սրբագրելու համար։ Գիրքը պիտի բանաք, ձեր ընկերին գրածը գիրքին մէջ գրուածին հետ պիտի բաղդատէք. սխալ գրուած բառերն ու գիրերը պիտի ուղղագրէք. գլխագիրներուն, կէտերուն, և այլն՝ ուշադրութիւն ընելով։ Սխալ գրուած բառին տակը խաչանիշ մը դրէք, և նոյն տողին լուսանցքին վրայ ալ ուղղաձիգ գիծ մը քաշեցէք, որպէս զի սխալները համրել դիւրին ըլլայ։ Նայեցէ՛ք որ սխալ չփախցնէք, ամէնքն ալ ուղղէք, նշանակէք և համրէք։ Անսխալ ուղղագրութեան համար 10 նիշ պիտի տամ, որ ըսել է քաջալաւ։ Երբ բառի մը ուղղագրութեան վրայ տարակոյս ունիք, ե՛ս պիտի բացատրեմ. պատճառը, կանոնը, պիտի յիշեցնեմ ձեզի որպէս զի գիտակցաբար՝ հասկնալով ուղղէք սխալները և ճիշդ ուղղագրութիւնը միտք պահէք։

8. Արտասանութիւն. — Շատ հաճոյք պիտի զգաք, երբ դասագիրքին մէջի հատուածներէն, զոր երէկ կարդացինք և բացատրեցինք, ձեզի ցոյց տամ՝ գոց սորվելու համար։ Ես կը վարժեցնեմ գոց ընելու, և պէտք եղած կերպով արտասանելու։ Հատուածը կրնաք կարդալ, բառերուն նշանակութիւնը գիտէք, նիւթին իմաստը հասկցած էք։ Կարդացէ՛ք նորէն՝ առաջին երկու տողը, գոցեցէք գիրքը և ջանացէք նոյն տողերը կրկնելու բարձրաձայն և նիւթին համեմատ ձայնով ու շեշտերով։ Յետոյ երկու տող ալ նոյն կերպով կը սորվիք և առաջինին հետ կը կրկնէք, առանց գիրքին նայելու։ Այս կերպով կամաց կամաց կը սորվիք ամբողջ հատուածը միտք պահել և գոց զրուցել՝ յաջորդ օրուան դասին։ Ուրիշ գիրքերէ ալ աղուոր կտորներ, զուարճալի առակներ գոց պիտի ընել տամ, և, տարեգլխուն, կը նայիք որ շատ մը հատուած գոց ըրեր էք. հանդէսներու և գումարումներու մէջ կրնաք այս կտորները զրուցել ձեր ծնողքին և բարեկամներուն առջև։

9. Գործնական վարժ. — Հատուածներուն տակ ուրիշ հրահանգներ ալ գրուած են, իբր կրկնութիւն նախորդ հրահանգներու և կանոններու։ Նոյն վարժութիւններէն պիտի սորվիք, աւելի գործնական կերպով, լեզուին օրէնքները և բառերու գործածութեան կերպն ու պատճառը։ Միւս հրահանգներուն պէս, այս վարժութիւններն ալ դասարանի մէջ կատարելէ ետքը պիտի գրէք պարտականութեան տետրակին մէջ։

10. Վերլուծութիւն. — Ձեր սորվածը աւելի լաւ տպաւորելու համար ձեր մտքին մէջ, վերլուծութիւններ պիտի ընէք, այսինքն բերանացի և գրաւոր պիտի ըսէք թէ այս ի՛նչ բառը ո՞ր մասն քանիին է, ո՞ր տեսակէն և ո՞ր ձեւէն է, ի՞նչ փոփոխութիւններ կրած է, ի՞նչ պաշտօն կը վարէ։ Շատ

զաւ վարժութիւն մ'է վերլուծութիւնը, անմիջապէս կը յիշէք քերականական ո՛ր և է կանոն։

11. Հարցումներ. — Կանոններու կրկնութիւնը կրնաք ընել անոնց վրայ գրուած հարցումներով, մէն մի հարցում կը կրէ կանոնին թիւը. անոնց պատասխանը գիրքին մէջ է, բայց մտացի աշակերտ մը պէտք չունի գիրքին նայելու, քանի որ արդէն սորված է։ Հարցումին պատասխանը յիշելով՝ կրնաք խօսկոյն օրինակներ տալ, որով անդրադարձած կ'ըլլաք նախորդ դասին, պարզապէս տեսակ մը կրկնութիւն՝ կանոնները ձեր յիշողութեան մէջ տպաւորելու համար։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ինչպէս յիշեցինք աշակերտը պէտք է ունենայ, հետևեալ չորս տետրակները։

1. Կանոններու

2. Հրահանգներու

3. Ընդօրինակութեան, Ուղղագրութեան և Գրուցագրութեան։

4. Արտասանելի հատուածներու համար։

Գրավարժութեան դասը մասնաւոր խնամով կ'աւանդուի ի հարկէ։ Պէտք է շատ հոգ տանիլ որ աշակերտը վարժուի մաքուր պահելու իր տետրակները. ասով կը վարժուի նաև հոգածու և նախանձախնդիր ըլլալ դպրոցական թէ տնական ամէն առարկայի մաքրութեան։ Դասատուն ստիպուած չէ հրահանգները գիրքիս ընթացքին համեմատ կատարել տալու. ի հարկին կրնայ այս կամ այն հրահանգը զանց ընել կամ վերապահել՝ առաջիկային, յարմարագոյն առթիւ կատարել տալու համար։

Ս. ԴԱՒԹԵԱՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. Մեր խօսած կամ գրած շեզուն կը կազմուի բառերէ։

2. Բառերով կը բացատրենք մեր գաղափարներն ու զգացումները։

3. Բառերը կը կազմուին վանկերէ և վանկերը՝ տառերէ կամ գիրերէ։

4. Վանկ կը կոչուին տառ մը կամ քանի մը տառեր որ մէկ անգամէն կը հնչուին։

5. Տառ կամ գիր կը կոչուին այբուբէնի 38 նշանները կամ ձեւերը։

6. Երկու տեսակ գիր կայ. Ձայնաւոր և Բաղաձայն։

7. Ձայնաւոր են ա, ե, է, ը, ի, ո, ւ, օ որ առանձին կ'արտաբերուին։

8. Բաղաձայն են բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, Ք։

Ասոնք ձայնաւորներուն հետ միասին կը հնչուին։

ՇՐԱՇԱՆԳ 1. — Դասատուն հատուած մը ցոյց կուտայ ընթերցանութեան գիրքին եւ աշակերտները նոյն հատուածին բառերն ուղղահայեաց սիւնակի մէջ կ'օրինակեն՝ վանկերը զատելով։

ՄԵՐ ՊԱՐՏՔԵՐԸ

Մանուկը պէտք է սիրէ Հայ Եկեղեցին և մասնակցի Եկեղեցիին սուրբ խորհուրդներուն։

Մանուկը միշտ պէտք է յիշէ Աստուծոյ պատուէրները՝ պատուելով իր ծնողքը, վարժապետները, յարգելով Եկեղեցիին պաշտօնեաները։ Մանուկը ի՞նչպէս սիրած կ'ըլլայ իր ծնողքը, իր վարժապետը, իր ընկերները, Լայն, եթէ չմեծարէ զանոնք, եթէ չհնազանդի անոնց։

Մանուկը պէտք է աշխատասէր ըլլայ և բարի վարք ունենայ։

Հրահանգ Ա. — Գրեցէք վերի հատուածը, վանկերը զատելով եւ բառերուն մէջ ուղղագիր գիծ մը քաշելով։

Հրահանգ Բ. — Սա վանկերուն սկիզբը մէյմէկ բաղաձայն դիր եւ երկերկու բառ կազմէ, այսպէս. Ազ — հազ, մազ։

1. — . աթ — . ակ — . աղ — . ամ — . ան — . աս։
2. — . եծ — . եռ — . իւ — . էր — . իծ — . իր։
3. — . ոհ — . ոչ — . ոմ — . ով — . ոտ — . որ — . ոց։
4. — . ութ — . ուկ — . ուն — . ուշ — . ուռ — . ուտ։
5. — . այլ — . այտ — . այր — . ոյլ — . ոյն — . ոյս։
6. — . իւթ — . իւղ — . իւն — . իւս։
7. — . արդ — . արթ — . արկ — . անձ։

Հրահանգ Գ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

1. Ի՞նչ բաներէ կը կազմուի լեզուն։ 2. Բառերով ի՞նչ կը բացատրենք։ 3. Վանկերով ի՞նչ կը կազմուի, տառերո՞վ։ 4. Ի՞նչ է վանկը։ 5. Ի՞նչ է գիրը։ 6. Քանի՞ տեսակ գիր կայ։ 7. Որո՞նք են ձայնաւոր։ 8. Որո՞նք են բաղաձայն։

9. Երբ քանի մը բառեր ամբողջ իմաստ տան, կը կազմեն խօսք։

10. Հայերէն լեզուի բառերը տասը կարգ են. Անուն կամ Գոյական, Ցոյ, Ածական, Դերանուն, Բայ, Դերբայ, Մակբայ, Նախադրութիւն, Շաղկապ, Զայնարկութիւն։

11. Այս տասը տեսակ բառերը կը կոչուին խօսքի մասեր։

12. Քերականութիւնը կը սորվեցնէ որոշել խօսքին մասերը, ճանչնալ անոնց յատկութիւնը, փոփոխութիւնները, իրարու հետ ունեցած յարաբերութիւնները, Լայն։

ԿԷՏԱԳՐՈՒԹԻՒՆ

13. Կէտադրութիւնն է զատել խօսքին անդամները կամ մասերը՝ այլ և այլ նշաններով որոնց պէտք է ուշ դնել գրութեան մէջ։

14. Այս նշաններն են, Ստորակէտ (,), Միջակէտ (·), Բոլոր (՝), Վերջակէտ (։), Շեշտ (՛), Պարոյկ (՞), Երկար (՜), Կախում (...), Գիծ (—), Զակերտ («»), Փակագիծ (()), Ապաթարց (՝), Ենթամնայ (-)։

Ծանօթ. — Դասատուն ընթերցանութեան միջոցին օրինակներով կը բացատրէ այս նշաններուն գործածութիւնը։

ՀՐԱՀԱՆԳ Զ. — Գտէք տասը հատ միավանկ բառ, տասը՝ երկավանկ բառ, տասը՝ եռավանկ, եւայլն։ Ապա անոնց վանկերը զատեցէք ուղղագիր գիծով։

ԿԱՂՆ ՈՒ ԿՈՅՐԸ

Երկու մարդ, օր մը, իրարու հանդիպեցան առուակի մը եղերքը, և կ'ուզէին դիմացի կողմն անցնիլ։ Մէկը կաղ էր ու չէր կրնար տեղէն շարժիլ, միւսն ալ թէև ոտք ունէր, բայց չէր կրնար քալել. աչքերը կոյր էին։

Նայեցէք ինչպէս ըրին դիմացի եղերքն անցնելու համար։

Կոյրը շալկեց կաղը և քալել սկսաւ. կաղն ալ, իր ընկերին կռնակին վրայէն կը ցուցնէր ճամբան։ Այսպէսով երկուքն ալ անվտանգ հասան դեռին միւս եղերը։

Մարդիկ պարտաւոր են իրարու օգնելու։

Հրահանգ Ա. — Զաս զաս սիւնակներու մէջ գրեցէք վերի հատուածին բառերը՝ միավանկ, երկավանկ, եռավանկ, եւայլն։

Հրահանգ Բ. — Գրեցէք տասը անուն երիկ մարդու եւ տասը անուն կնիկ մարդու։

Հրահանգ Գ. — Կէտերուն տեղ ձայնաւոր գիրերը դնելով բառեր շինեցէք։

Ա = ձ · գ — հ · ղ — բ · լ — վ · խ — բ · հ — մ · ճ —
ճ · չ — կ · պ — ծ · ռ — դ · ս — կ · բ — հ · ց։
Ե = բ · մ — լ · ռ — գ · տ — ծ · վ — հ · բ — կ · բ։
Է = տ · գ — ս · բ — տ · բ — մ · կ — մ · գ — կ · տ։
Ի = բ · ծ — ք · թ — ծ · ծ — լ · ճ — կ · բ — ն · գ —
Ո = գ · մ — բ · բ — ք · ս — ծ · մ — մ · մ — չ · ղ —
թ · ք — չ · բ — թ · ռ — խ · ղ — հ · տ — հ · բ։

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

9. Ի՞նչ է խօսքը։ 10. Բառերը քանի՞ տեսակ են։ 11. Ի՞նչ կը կոչուին տասը տեսակ բառերը։ 12. Ի՞նչ կը սորվեցնէ Քերականութիւնը։ 13. Ի՞նչ է կէտադրութիւն։ 14. Որո՞նք են կէտադրութեան նշանները։

ԳԼՈՒԽ Ա.

ԱՆՈՒՆ ԿԱՄ ԳՈՅԱԿԱՆ

15. *Մարդ, անասուն և առարկայ ցուցնող բառերը կը կոչուին Անուն կամ Գոյական։*

Ինչպէս՝ Պօղոս, ձի, գիրք։

Գիտելիք. — *Կան անուններ որոնք միայն կ'ըմբռնուին. սոնք կը կոչուին անհատական կամ մասնաւոր։*

Ինչպէս. Սէր, խելք, ջանք, ցաւ, եւայլն։

ՀՐԱՀԱՆԳ 3. — Որոշեցէք *մարդ* (անձ), *անասուն* (կենդանի) եւ *առարկայ* (իր) ցուցնող բառերը եւ զաս զաս սիւնակներու մէջ գրեցէք։

Ընկոյզ, խղուանջ, մշակ, աղամանդ, Ադամ, բարձ, ականջ, դատաւոր, հովանոց, կաքաւ, Կայէն, մարգարէն, արև, Գրիգոր, եզ, սեւամորթ, ճպուռ, տախտակ, կեռաս, Պոլսեցի, գիրք, էշ, ստամոքս, ընկեր, դաշտ, տաշտ, Բենիամին, կնքահայր, չաքար, կէտ, մժեղ, նաւ, ուղտ։

ՀՐԱՀԱՆԳ 4. — Որոշեցէք *տեսանելի* կամ *նիւթական* բաներ, եւ *անտեսանելի* կամ *մտաւոր* բաներ ցուցնող անունները։

Գրիչ, թռչուն, հոգի, խաչ, պատկեր, հրեշտակ, աբոր, Աստուած, սեղան, ապրուստ, աքաղաղ, եռանդ, մարդ, բաժակ, սէր, աշխոյժ, ալիւր, կաքաւ, կաղամբ, պատիւ, միտք, դրամ, աշխատանք, կացին։

ՀՐԱՀԱՆԳ 5. — Գտէք հինգ *անձի՝* հինգ *կենդանիի* եւ հինգ *առարկայի* անուն։

ՀՐԱՀԱՆԳ 6. — Գտէք տասը *տեսանելի* (նիւթական, բանձրացեալ) եւ տասը *անտեսանելի* (մտաւոր, վերացեալ) առարկայի անուններ։

Զ Ի

Զկայ կենդանի մը որ այնչափ ծառայութիւն մատուցանէ մարդուս՝ որչափ ձին։ Ընդհանրապէս հլու և խելացի է ձին, և թմբուկի ձայնը կը սիրէ։ Զին կ'ուտէ վարսակ, խար և խոտ։ Մինչև քսան տարի կրնայ ապրիլ։ Մէկ ձին եօթը կամ ութը մարդու ոյժ ունի։ Իր աշխուժութեամբ և արագընթացութեամբ գերազանց է ուրիշ կենդանիներէն։ Իր տիրոջ հաւատարիմ է։ Մատակ ձին կը կոչուի զամբիկ, իսկ փոքրիկ ձին կը կոչուի մտրուկ։ Այլ և այլ դոյներով ձիեր կան, աշխէտ, ճարտուկ, դորշ, թուխ, կարմիր, մոխրագոյն, շէկ, և ն։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք վերի հատուածն, usnրագծելով գոյականները։

Հրահանգ Բ. — Վերի հատուածին գոյականները չորս սիւնակներու մէջ զատ զատ գրեցէք. 1. Անձ, 2. կենդանի, 3. իր նշանակող անուններն եւ 4. միայն մտքով հասկցուող (վերացեալ) անուններ։

Հրահանգ Գ. — Կտեղուն տեղը դրէք տողին սկիզբը գտնուող երկբարբառը, այսպէս. կուզ, թուզ, եւայլն։

ՈՒ = կ. զ — թ. զ — ց. լ — մ. խ — լ. ծ — շ. ն — թ. շ — ն. շ — փ. շ — ն. ռ — ս. տ — մ. բ։

ԻՒ = ձ. թ — ճ. զ — շ. զ — ձ. ն — ս. ն — խ. ս — հ. ս — հ. զ — գ. զ։

ՈՑ = մ. գ — թ. լ — բ. ն — թ. ն — լ. ս — բ. ս — կ. բ — ք. բ — կ. ս — թ. բ — բ. բ — գ. ն։

ԱՑ = մ. թ — գ. լ — ք. լ — խ. ծ — կ. ծ — պ. տ — փ. տ — ծ. բ — ս. լ — հ. բ — մ. բ։

ԵՒ = դ. — թ. — հ. — խ. — ձ. ս. —։

Հրահանգ Դ. — Պատասխանեցէք բերանացի եւ գրաւոր։

15. Ի՞նչ է անուն կամ գոյական։ Օրինակներ տուր։ Ի՞նչ է վերացեալ անունը. Օրինա՞կ։ Ի՞նչ է վերացեալին հակառակը. Օրինա՞կ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.P. Պետական Հանրային Գրադարան
7/XI-1.1932
ՀԱՅԿԱՅԻՆԻ ԱՆՎԱՆ

ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆ, ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ

16. Անունը երկու տեսակ է. Հասարակ եւ Յատուկ։

17. Հասարակ անունը կրնայ յարմարիլ տեսակի մը ամէն անհատին, ինչպէս. Մարդ, ձի, քար։

18. Յատուկ անունը տեսակի մը մէկ անհատին կրնայ ըսուիլ, ինչպէս. Ադամ, Եւա, Եգիպտոս։

Գիտելիք Ա. — Մարդերու, քաղաքներու, գիւղերու, գետերու, երկիրներու, ծովերու անուններն յատուկ անուն են։

Գիտելիք Բ. — Յատուկ անունները գլխագիրով կը սկսին։

ՀՐԱՀԱՆԳ Հ. — Յատուկ եւ հասարակ անունները զատ զատ սիւնակներու մէջ գրեցէք։

Եկեղեցի, ձի, Մարիամ, գետ, տուն, Յակոբ, տղայ, վառեակ, Տրապիզոն, ժամկոչ, եղբայր, պարտէզ, Երուսաղէմ, քուռակ, ցորեն, ժամացոյց, հովանոց, Էջմիածին, ծառ, թռչուն, սենեակ, օդ, անտառ, Յիսուս, Բեթղէհէմ, Պոլիս, Ամաղջն, վագր, մարմարիոն, սոխ, գարի, Յաբեթ, աբեթ, սանդուխ, Պէյրութ, Վարդենի, Մարմարա, Պրուսա։

ՀՐԱՀԱՆԳ Ե. — Աջակերտը թող գրէ երեք յատուկ անուն որ ցուցնէ

Մարդ, կին, քաղաք, գիւղ, գետ, երկիր, ծով, լեռ, ազգ, թագաւոր, մարգարէ, սուրբ։

ՀՐԱՀԱՆԳ Զ. — Աջակերտը թող գրէ երեք յատուկ անուն

Գաւառի, թաղի, փողոցի, վանքի, եկեղեցականի, վաճառականի, վարժապետի, տօնի։

Ս. ՄԵՍՐՈՊ

Սկիզբները այս Հայերէն տառերը չկային։ Հայերը՝ Հայերէն կը խօսէին ու կը գրէին, բայց ուրիշ ժողովուրդներու գիրերով։ Ս. Մեսրոպ անուն վարդապետը դտաւ Հայերէն տառերը։ Ս. Մեսրոպը Վարդան անուն գիւղացի մարդու մը զաւակն էր։ Իր մանկութեան օրերը գիւղն անցուց, և որովհետև ուսմունքի շատ փափաք ունէր, գիշեր ցորեկ կ'աշխատէր որ իր մայրենի լեզուն լաւ սորվի։ Ս. Մեսրոպին օգնեցին Սահակ Կաթուղիկոս և Վռամշապուհ։ Նաև Հաբէլ քահանան և Դանիէլ սարկաւագը։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք վերի հատուածն եւ Յատուկ անուններուն տակ մէկ գիծ, Հասարակ անուններուն տակ երկու գիծ քաշեցէք։

Հրահանգ Բ. — Կէտերուն տեղ յատուկ անուններ դրէք։

Իմ անունս . . . է, մականունս է . . . , հօրս անունն է . . . իսկ մեծ հօրս անունը . . . ։ — Մենք կը բնակինք . . . քաղաքի . . . Թաղին . . . փողոցը։ — Մեր Թաղին եկեղեցին կը կոչուի . . . , աւագերէցն է . . . ։ — Մեր թեմին առաջնորդն է . . . , որ կը նստի . . . քաղաքը։ — Մեր դպրոցին անունն է . . . , և դասատուներն են . . . , . . .։

Հրահանգ Գ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

16. Քանի՞ տեսակ է անունը։ 17. Ո՞րն է հասարակ անունը։ Օրինա՞կ։ Ո՞րն է յատուկ անունը։ Օրինա՞կ։ Ո՞ր անուններդ յատուկ կ'ըսուին։ Ի՞նչ գիրով կը սկսին յատուկ անունները։

ԹԻՒ

19. Թիւը երկուք է. Եզակի և Յոգնակի։

20. Անունն եզակի է երբ մէկ անձ, մէկ անասուն, մէկ իր միայն կը ցուցնէ։

Ինչպէս՝ Հայր, գիրք, աթոռ։

21. Անունն Յոգնակի է երբ շատ անձ, շատ անասուն, շատ իր կը ցուցնէ։

Ինչպէս՝ Հայրեր, գիրքեր, աթոռներ։

22. Եզակի անունն Յոգնակի ընելու համար պէտք է ծայրը եր կամ ներ աւելցնենք։

ԵՐ աւելցնելու է, եթէ անունը միավանկ է։

ՆԵՐ „ „ „ „ բազմավանկ է։

Գիտ. Ա. — Քանի մը միավանկ բառեր կան որոնք իր բնէ և ունենալով իրենց ծայրը, սովորութիւն եղած է յոգնակիի մէջ այս և գիրը դնել։ Ասոնք են. *եզ—եզներ, ղեռ—ղեռներ, բեռ—բեռներ, հարս—հարսներ, մաս—մասներ։*

Գիտ. Բ. — Յ ով վերջացող բազմավանկ անուններուն յ տառը կը ջնջուի յոգնակիի մէջ. *քահանայ—քահանաներ։*

ՀՐԱՀԱՆԳ 10. — Հետեւեալ անուններն յոգնակի դրէք։

Հաց, կերակուր, դպրոց, եկեղեցական, պարտէզ, գեղագիր, բժիշկ, գեղ, ոպասաւոր, ծառայ, աղախին, ներ, քոյր, աներ, հօրաքոյր, մանուց, ասեղ, կար, գերեզման, մահ, արտմութիւն, ուրախութիւն, ցաւ, հասակ։

ՀՐԱՀԱՆԳ 11. — *Եզակիներն* յոգնակի դրէք, *յոգնակիներն՝* եզակի։

Մայրեր, աղաներ, մարդեր, պարտէզ, այգի, ձիեր, եզներ, դամէշ, էշեր, ցուլեր, տեսարակ, գիրքեր, մանուկ, նեղութիւն, ամիս, եղբայրներ, քոյր, քաղաք, լեռներ, ծաղիկ, պսակ, ձիաւոր, փողեր, աներ, զմեղիններ, ներ, ընկեր, խօսքեր, բառ, գիծ, լեարդ, մոլորակ, անգլ, գամբռ, որայ։

Ե Զ

Եղն ալ, ձիուն պէս, ընտանի կենդանիներուն մէջ ամենէն օգտակարն է։ Գրէթէ տան և հինգ տարի կ'ապրի. շատ ուժեղ և հեզաբարոյ է։ Այլ և այլ ծառայութիւններ կ'ընէ. արօր և սայլ կը քաշէ, և երբ ծերանայ ու չկրնայ ծառայութիւն մատուցանել, լաւ մնուցանելով կը գիրցնեն, որպէս զի մորթեն ու միսն ուտեն։ Եղջիւրներն ու մորթն ալ զանազան պէտքերու կը գործածեն։ Եղը կ'ուտէ ամէն տեսակ խոտեր ու տերեւներ։ Որոնաղու յատկութիւն ալ ունի, այսինքն իր մնունդը ստամոքսէն բերանը կը բերէ նորէն ծամել ծաքել և կլեալ համար։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք վերի հատուածը եւ ստորագծեցէք գոյականները։

Հրահանգ Բ. — Երկու սիւնակի մէջ զատ զատ գրեցէք եզակի անուններն ու յոգնակի անունները։

Հրահանգ Գ. — Սա բառերուն սկիզբը դրէք պատշաճ մասնիկը։

1. ԻԿ = Հայր, մայր, եղբայր, խաչ, մատն, թաթ, փոր։
2. ԱԿ = Գետ, լեզու, ծով, նաւ, դաս, ձոր, ծիծեռն։
3. ՈՒԿ = Աչ, գառն, ձագ, հորթ, հարսն, պապ։
4. ԵՆԻ = Վարդ, խնձոր, սալոր, տանձ, կեռաս, մոր։
5. Ի = Դեղձ, ծիրան, բալ, հաց։
6. ՈՐԴ = Սայլ, նաւ, անց, որս։

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

19. Քանի՞ է թիւը։ 20. Անուն մը ե՞րբ եզակի է, օրինա՞կ։ 21. Անունը ե՞րբ յոգնակի է. օրինա՞կ։ 22. Անուն մը ինչպէս յոգնակի կ'ըլլայ։ Օրինա՞կ։ Քանի մը միավանկ բառերու յոգնակին ինչպէս կ'ըլլայ, ինչո՞ւ։ Ց գրով վերջացող յազմավանկ անունները ինչպէս յոգնակի կ'ըլլան։ Օրինա՞կ։

ՀՈԼՈՎ

23. Եզակի թէ յոգնակի անուններուն ծայրը կերպ կերպ կը փոխուի. այս է Հոլովը.

Քար, քարի, քարէ, քարերու, և այլն։

24. Հոլովը վեց է. Ուղղական և Հայցական, Սեռական և Տրական, Բացառական, Գործիական։

25. Անուն մը հոլովելու ընդհանուր ձեւն է.

	Եզակի	Յոգնակի
Ուղղական և Հայցական	Հաց	Հաց եր
Սեռական և Տրական	Հաց ի	Հաց երու
Բացառական	Հաց է	Հաց երէ
Գործիական	Հաց ով	Հաց երով

Գիտ. — Ուղղականի մէջ ա ով վերջաւորող Ցատուկ անուններ՝ եզակի հոլովման տեղն յ կ'առնեն, ներդաշնակութեան համար։ Եւա, Եւայի, Եւայէ, և այլն։

ՀՐԱՀԱՆԳ 12. — Հոլովեցէք սա միավանկ անունները։

Խաչ, քար, փայտ, կաթ, վարդ, ծառ։

Եզ, բեռ, լեռ, հարս, մատ։

ՀՐԱՀԱՆԳ 13. — Հոլովեցէք սա բազմավանկ անունները։

Ականջ, երես, սեղան, աթոռ, դպրոց, վարժապետ։

Հոլովեցէք նաեւ. Կլիմա, Սինա, Եւա, Ովսաննա, Գողգոթա, Մեսիա, Եհովա, Պրուսա, Ատանա, Գոնեա, Մուտանիա, Կալաթիա, Մարսիլիա, Պանտրմա, Մարթա։

ՀՐԱՀԱՆԳ 14. — Հոլովը նոյն պահելով եզակի դրէք։

Հացեր, խաչերու, փայտերէ, քարերով, կովերու, տուներէ, ձիեր, վարդերու, ծովերու, ծառերու, քիթերով, բերաններ, ականջներէ, երեսներու, սեղաններով, աթոռներու, դպրոցներ, թաշկինակներու, պատառներով, կերակուրներէ։

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Աւագ շաբաթ իրիկուն Օննիկ եկեղեցիէն տուն դարձաւ հօրը հետ։ Ընթրիքը պատրաստ էր. սեղանին վրայ շարուած էին ուտիքի կերակուրներ՝ հաւկիթ, մածուն, պանիր և իւղով տապակած սպանախ։ Օննիկ՝ մեծ ախորժակ ունէր ուտելու, վասն զի ամբողջ եօթը շաբաթ պահք բռնած էր։ Ճաշի նստան ամէնքը, միայն Օննիկ ոտքի վրայ կեցած՝ ըսաւ Տէրունական աղօթքը, յետոյ նստաւ և ընթրեց։ Ընթրիքէն վերջը հրաման առաւ և գնաց պառկեցաւ։ Սրտին մէջ հըրճուանք կը զգար մտածելով որ միւս օրը Զատիկ է, նոր հագուստներ պիտի հագնի և կանուխ եկեղեցի պիտի երթայ Յարութեան գիրքը կարդալու։

Հրահանգ Ա. — Վերի հատուածը գրեցէք եւ գոյականներն ստորագծեցէք։

Հրահանգ Բ. — Ըսէք, ի՞նչ թիւ եւ հոլով են նոյն գոյականները։

Հրահանգ Գ. — Սա բառերուն սկիզբը դրէք պատշաճ մասնիկը։

7. ԱՍՏԱՆ = ծառ, անդ, Ռուս, Զին, Պարսիկ, ծաղիկ։
8. ԱՊԱՆ = պահ, ուղտ, ձի, ախոռ, թաթ։
9. ՅԻ = Անգղիա, Զմիւռնիա, Ասիա, Երուսաղէմ։
10. ԱՅԻ = Նարեկ, խել, գիւղ, քաղաք։
11. ԵՅԻ = Պոլիս, դաշտ, թաղ, ձոր, Մուշ։
12. ՈՅ = Շար, մատն, ձեռն, փող, ակն, վարժ։

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

23. Ի՞նչ է հոլովը։ Օրինա՞կ։ 24. Քանի՞ է հոլովը։ 25. Ո՞րն է անուն մը հոլովելու ընդհանուր ձեւը։ Ո՞ր հոլովներ իւարու կը նըմանին։ Ի՞նչպէս կ'ըլլան ա ով վերջացող անուններ։ Օրինա՞կ։

ՀՈԼՈՎՄԱՆ ԵՐԵՔ ՁԵՒԵՐ

26. Հոլովման երեք ձեւեր ալ կան, որոնք եզակիի մէջ ուրիշ կերպ կ'ըլլան, բայց յոգնակիի մէջ ընդհանուր ձեւին կը հետեւին։

	— Ա —	— Բ —	— Գ —
Ո. և Հ.	Մարդ	Մեծութիւն	Օձում
Ս. և Տ.	Մարդու	Մեծութեան	Օձման
Բացառ.	Մարդէ	Մեծութենէ	Օձումէ
Գործիակ.	Մարդով	Մեծութեամբ	Օձումով

Գիտելիք Ա. — Երրորդ ձեւին պէս, Սեռականի և Տրականի մէջ ան կ'ըլլան շատ մը բառեր, թէև ում չեն վերջաւորիր. կնիկ, աղջիկ, մանուկ, անուն, տուն, շուն, ձուկ։

Գիտելիք Բ. — Նոյնպէս Սեռականի և Տրականի մէջ ուան կ'ըլլան ժամանակ ցուցնող բառեր, ինչպէս. ժամ, օր, տարի։

Ատոնց բացառականը կրնայ ուրնէ վերջաւորիլ, ինչպէս՝ գիշերուրնէ, առտուրնէ, ևայլն։

ՀՐԱՀԱՆԳ **15.** — Մարդ բառին պէս հոլովեցէք. Զի, կով, ծով, նաւ, Հայ, շահ, դար, մահ, թի, արև, ժամ, շաբաթ (շաբթու), տղայ (տղու), ճամբայ (ճամբու)։

ՀՐԱՀԱՆԳ **16.** — Մեծութիւն բառին պէս հոլովեցէք. Նեղութիւն, տաքութիւն, քաջութիւն, ողորմութիւն։

ՀՐԱՀԱՆԳ **17.** — Օձում բառին պէս հոլովեցէք. Խոստում, թաղում, բացում, խթում, հոլովում, յաւելում։

ՀՐԱՀԱՆԳ **18.** — Նոյն կերպով հոլովեցէք. Կնիկ, աղջիկ, մանուկ, անուն, տուն, շուն, մուկ, ծունկ, դուռ, լեռ։

ՀՐԱՀԱՆԳ **19.** — Բ. Գիտելիքին պէս հոլովեցէք. Ժամ, օր, շաբաթ, ամիս, տարի, ամառ, ձմեռ, ցորեկ, գիշեր, առտեն, ժամանակ, կէսօր։

ՊԷՏՔ Է ԱՇԽԱՏԻԼ

Ամէն մարդ կ'աշխատի որ ապրուստ ճարէ։

Կենդանիներն ալ կ'աշխատին որ կերը գտնեն, եւ ալ կ'աշխատիմ որ դասս լաւ սորվիմ։

Հայր մը կ'աշխատի իր ընտանիքին համար. իր աշխատութեամբ կը պահէ կինն ու զաւակները։ Պըզտիկներն ալ երբ մեծնան, կարգը անոնց է աշխատելու, սակ վաստկելու եւ ծնողքը պահելու։

Ամէն մարդ իրեն համար կ'ընտրէ աշխատութեան ճիւղ մը. մէկը միտքով կ'աշխատի, դիւտ մը կ'ընէ, եւ անով ուրիշներուն օգտակար կ'ըլլայ։ Գործաւորն ալ իր ձեռքին աշխատութեամբ կը զբաղի։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք այս հատուածն եւ գոյականներուն տակը գիծ քաշեցէք, յետոյ ըսէք թէ ի՞նչ հոլով են եւ ո՞ր ձեւին վրայ կ'երթան։

Հրահանգ Բ. — Սա բառերուն սկիզբը դրէք պատշաճ մասնիկը։

13. ԱՆՈՑ = աղքատ, հիւանդ, հիւր, խոհ. զօր, յարդ։
14. ԱՐԱՆ = կրակ, դաս, վարժ, բնակ, երգ, տաղ, խօս։
15. ՅՈՒ = քահանայ, վարդապետ, հարսն, փեսայ։
16. ՈՒՀԻ = ընկեր, դերձակ, Տիգրան, աշակերտ, Վարդ։
17. ԱՆՈՒՇ = սէր, քուրմ, դից, Սահակ։
18. ԴՈՒԽՏ =

Հրահանգ Գ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

26. Հոլովման ուրիշ ձեւեր ալ կա՞ն։ Որո՞նք են։ Ո՞ր բառեր Գ. ձեւին պէս կը հոլովուին։ Ի՞նչ գիտէք ժամանակ ցուցնող բառերուն վրայ։

ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

27. Քանի մը բառեր նախորդ ձեւերէն կը տարբերին. սոնք կը կոչուին Անկանոն հոլովումներ։

Ուղղակ. և Սեռ.	Սէր	Հայր	Տէր
Սեռա. և Տրա.	Սիրոյ	Հօր	Տիրոջ
Բացառական.	Սէրէ	Հօրմէ	Տիրոջմէ
Գործիական.	Սիրով	Հօրով	Տիրոջմով.

Ծանօթ. Ա. — Ասուած բառը կը հոլովուի սեր բառին պէս, միայն Բացառականը կ'ըլլայ Ասուծմէ։

Ծանօթ. Բ. — Նոյն ձեւին կը հետեւին նաեւ իր վերջաւորող յատուկ անուններ, ինչպէս. Կեսարիա, Անթաքիա, Ամասիա, Հունգարիա, Մոլտավիա, Անգղիա, Իտալիա։

Կարեւոր գիտելիք. — Հոլովներու այս զանազան ձեւերը կրնան ընդհանուր ձեւին պէս (էջ 21) ալ գործածուիլ, ինչպէս՝ արեւին, գինիի, խոստումի, անունի, ցորեկի, սէրի, հայրի, եայլն։

(Հանգամանք է այս միօրինակ ձեւն ընդհանրացնել)։

28. Կան բառեր որոնց ձայնաւոր գիրերը կը փոխուին կամ կը կորսուին եզակի հոլովներուն մէջ.

Տէր — տիրոջ։ Սէր — սիրոյ։ Գիծ — գծի։
Գիր — գրի։ Բերան — բերնի։ Մանուկ — մանկան։

ՀՐԱՀԱՆԳ 20. — Հոլովեցէք հետեւեալ բառերը։

1. Ասուած, սէր, խորհուրդ։
2. Ասիա, Անգղիա, Մալաթիա, Գերմանիա, Իտալիա։
3. Մայր, կնքամայր, կնքահայր, սանամայր, եղբայր, հօրեղբայր, մօրեղբայր, ծծմայր, վանահայր։
4. Կին, տիկին, քոյր, մօրաքոյր, հօրաքոյր, ընկեր, դասընկեր, տալ, աներ, ներ, տագր, կեսուր։

Հրահանգ Ա. — Սա բառերը արական սեռի անուններ են, զտէ՛ք անոնց իգականը :

1. Որձ, ձի, ոչխար, ծերունի, պապ, անկը, պարոնտատ, փեսայ, մանչ, եղբայր, այր, հայր, ուսար, պարոն, երէց, քեռի, տաղր, սանահայր, կնքահայր : 2. Խնամակալ, իշխան, տէր, վարդ, սուրբ, աշակերտ, դեղջուկ, ուսուցիչ, դրացի, երիտասարդ : 3. Սահակ, քուրմ, Վարդ, Խոսրով :

Հրահանգ Բ. — Գտէք սա բառերուն հականիշը :

Ուղի, ճամբորդ, սար, նուէր, ագի, իղձ, որմ, ցընծութիւն, աղդ, մագիլ, ժանիք, խաւար, նկար, խաչնարած, մորթ, տիղմ, ոսա, կղակ, ատամն, հեր, հուր, կեղտ, սար, վէճ, ընծայ, արփի, ոտնաման, գլխարկ, եղանակ, վիշտ, թուր, կարոց, դրամ, համար :

Հրահանգ Գ. — Գտէք սա բառերուն հականիշը :

Աղքատութիւն, տգեղութիւն, կորուստ, լոյս, բարեկամ, թանկութիւն, ծնունդ, չատութիւն, ծառայ, մեծութիւն, ատելութիւն, սկիզբ, ջերմութիւն, առողջութիւն, գեղացի, արեւելք, հարաւ, երջանկութիւն, դիւրութիւն, չարութիւն, խելացութիւն :

Հրահանգ Դ. — Հետեւեալ երկու գոյականներն իրարու կցեցէք ա յօդակապով, այսպէս. Մեղրի մոմ = մեղրամոմ:

Խաչի փայտ, աւազի կոյտ, նամակի տուն, գործի տուն, որթի տունկ, ծովու հէն, սեղանի տուն, զօրքի պետ, հողի գունտ, նաւի տորմ, վանքի հայր, դպիրի տուն, խունկի աման, հողի բլուր, ճակատի գիր, աղերսի գիր, դպիրի պետ, գետի բերան, լեռան չղթայ, իւղի գին, մոմի գին :

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք:

27. Որո՞նք են անկանոն հոլովումները : Ի՞նչպէս կ'ըլլան իա վերջացող բառեր : Օրինա՞կ : Ի՞նչ գիտելիք կայ հոլովման այլ եւ այլ ձեւերուն վրայ : Օրինա՞կ : 28. Հոլովման մէջ ձայնաւոր գիրերը ի՞նչ կրնան ըլլալ : Օրինա՞կ :

29. Վեց հոլովները զանազանելու համար սա հարցումներն ընելու է :

Ուղղականի	համար	ո՞վ	կամ	ի՞նչ բան
Սեռականի	»	որո՞ւն	»	ի՞նչ բանին
Տրականի	»	որո՞ւ	»	ի՞նչ բանի
Հայցականի	»	զո՞վ	»	ի՞նչ բանը
Բացառականի	»	որմէ՞	»	ի՞նչ բանէ
Գործիականի	»	որո՞վ	»	ի՞նչ բանով

ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ—ՅԱՏԿԱՑԵԱԼ

30. Յատկացուցիչ կը կոչուի այն սեռական հոլով անունը՝ որ կը ցուցնէ թէ բան մը որո՞ւն է :

Օրինակ. — Գիրքի կողք, ծառի ճիւղ :

Յատկացուցիչ ունեցող բառը կը կոչուի Յատկացեալ:

Գիրքի և ծառի բառերն յատկացուցիչ են, իսկ կողք և ճիւղ բառերը՝ յատկացեալ են :

ՀՐԱՀԱՆԳ 21. — Հարցումներով գտէք անուններուն հոլովը :

Հայրս կը կարդայ : — Ջուրը հեղուկ է : — Կաղնին ծառ է : — Բահանան ունի չուրջառ : — Հացին միջուկը կակուղ է : — Բարեկամիս նամակ գրեցի : — Ծառին քար նետեցի : — Ո՞վ ծեծեց քոյրս : — Պտուղը Բաղեցինք : — Պարգև առի վարժապետէս : — Գինին կը չինուի խաղողէ : — Ջորեպանով զրկեցինք բեռները : — Մածունը կը չինուի կաթով : — Աստուած դրախտէն վռնտեց Ադամն ու Եւան՝ ինչու որ արգիլուած պտուղէն կերած էին :

ՀՐԱՀԱՆԳ 22. — Հետեւեալ բառերն իրարու կապեցէք այնպէս որ առաջինը յատկացուցիչ ըլլայ, երկրորդը յատկացեալ:

Գրիչ ծայր, խնձոր կուտ, սալոր կեղև, գուռ բանալի, կատու պոչ, նամակ հասցէ, առիւծ բաշ, փողոց սալարկ, դպրոց տեսուչ, աղքատ հագուստ, ժամացոյց չղթայ, քաղաք բնակիչ, թուր պատեան, քահանայ չուրջառ, աչք լոյս :

ՄԵԼԱՆ

Մելանը շատ պիտանի է. անով գիր կը գրենք։ Կայ սև մելան որ փայլուն հեղուկ մ'է. կայ նաև կարմիր, կապույտ, մանիշակագոյն մելան։

Դպրոցի տղաք հիմա շատ դիւրութեամբ կը գտնեն մելանը որ շիշերով կը ծախուի. կրնան նաև կարիպայտի կոչուած փայլուն-կապույտ փոշի գնել մանրավաճառէն և ջուրի մէջ հալեցնելով՝ մելան շինել։

Հին ատենները մելանը ածուխով կը շինէին, ինչպէս կ'ընեն մինչև հիմա ալ Հնդկաստանի մելանը։

Սև մելան շինելու համար պէտք է գխտոր, երկաթի ծծմբատ կամ կանաչ արջասպ և խեժ կոչուած նիւթերը։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք հատուածը. ստորագծեցէք անունները. յետոյ պատճառ հարցումներով գտէք անոնց հոլովը։

Հրահանգ Բ. — Շեղագիր բառերը սեռական ըրէք, յետոյ նոյն բառերով մէյմէկ խօսք շինեցէք. այսպէս։

Վարժապետին տղան իմ դասընկերս է։

Ծառ տերև, այգի դուռ, մարմին անդամներ, լեռ ստորոտ, հայր խրատ, մօրաքոյր որդի, Աստուած պատուէր, աղաւնի փետուր, գլուխ մազեր, եկեղեցի հասոյթ։

Հրահանգ Գ. — Սա բառերը վերլուծեցէք օրինակին պէս։

Վարդի եղ, եղան լուծ, գետի բերան, Մարիամի, կառքերով, լեռներէ, ձայնի, այրով, թռչուններու։

Օրինակ. — Վարդի՝ հասարակ անուն եղակի սեռական՝ յատկացուցիչ եղ բառին. — եղ՝ հասարակ անուն եղակի ուղղական, յատկացեալ՝ վարդի բառին։

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

29. Վեց հոլովներն ի՞նչպէս կը զանազանուին։ Օրինա՞կ։ 30. Ի՞նչ է յատկացուցիչը։ Օրինա՞կ։ Ի՞նչ է յատկացեալը։

ԳԼՈՒԽ Բ.

ՅՕԳ

31. Յօդ կը կոչուի և կամ ը գիրը որ կը դրուի գոյականին ծայրը, երբ որոշեալ միտքով գործածուած է։

Օրինակ. — Խնձորի ծառ ըսելով կը հասկնանք ո՛ր և է խնձորի ծառ մը, բայց երբ կ'ըսենք խնձորին ծառը, այն ատեն որոշ խնձորի ծառը կը հասկնանք։

Գիտելիք Ա. — Զայնաւորով վերջացող անուններ միշտ և յօդը կ'առնեն։ Զ'ըսուիր՝ կատուը՝ այլ կատուն։

Բ. — Իսկ անձայն յ ով վերջացող բառեր, երբ յօդ առնեն, սովորաբար այս յ տառը կը կորսնցնեն, ինչպէս, սատանայ-սատանան, տղայ-տղան։

Գ. — Գոյականին ծայրը կը դրուին նաև ս. դ. և. կամ ը գիրերը որոնք դիմորոշ յօդ կը կոչուին։

ՀՐԱՀԱՆԳ **23.** — Անուններուն ծայրը յօդ դիր եւ ըսէ՛ թէ ի՞նչ կ'ըլլայ խօսքին իմաստը։

Զիէ չի վախնար։ — Թուղթ տուր ինծի։ — Զայն լըսեցի։ — Միհրան պարտիզպանի տղայ է։ — Եղբայրդ գիրք կարդա՞ց։ — Կերա՞ր հաց։ — Ես հաց կ'ուզեմ, դուն ջուր կուտաս։ — Դպրոցի աշակերտ։ — Աշակերտի թուղթ։ — Ջուրի ման։ — Պատուհանի փեղկ։ — Գիրքի կողք։

ՀՐԱՀԱՆԳ **24.** — Սա անուններէն որո՞նք յօդ ունին։

Զին, եկեղեցին, գմելին, անկիւն, անկողին, մեղրն, հայը, լուսին, կանոն, սալորն, ոլոռն, արեւը, աղքատն, սայլապան, ամառն, ման, ալիւր, քթան, տղայ, բան, բժիշկ, ձուկն ու մուկը, փիղը, հովիւն, մատեան, գիրք, կորիւն, մելան, թանաքը, դուռ, պատեան, կօշիկն։

ՀՐԱՀԱՆԳ **25.** — Յօդով հոլովեցէք սա անունները։

Կատու, ձի, լեղու, շուկայ, հաւ, դև, Հայ, տղայ։ Լուսին, կտաւ, կողի, կուրծք, ծիծ։

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԷՋ

Երբ առաջին անգամ դպրոց եկայ, սիրտս սաստիկ կը զարնէր։ Մանաւանդ երբ տեսայ սրահին մէջ շատ աշակերտներ, պատերուն վրայ կախուած պատկերներ և աշխարհացոյցներ, և դասատուն՝ բարձր տեղ մը նստած. ա՛յնչափ չփոթեցայ որ կարծեցի թէ չորս կողմս ամէն բան կը դառնայ։

Բայց նայեցայ որ աշակերտներուն մէջ իսմէ փոքր մանուկներ ալ կային, որոնք ուշադիր էին իրենց դասին և կ՚աշխատէին։ Այն ատեն, սիրտս առի և մտքովս ըսի. — Է՞հ, ե՛ս ալ կրնամ աշխատիլ։

Երբ դասը լմնցաւ, վարժապետը քովս եկաւ և ժպտելով ըսաւ. « Տղա՛ս, դուն ալ անոնց պէս ըրէ, աշխատէ՛, բա՛ն սորվէ որ ծնողքիդ ուրախութիւն և պատիւ բերես։ »

Հրահանգ Ա. — Օրինակեցէք այս հատուածն, usnrագրեցէք գոյականները եւ ցոյց տուէք յօդերը։

Հրահանգ Բ. — Նոյն հատուածին հոլովուած բառերուն եզակի ուղղականը գրեցէք։

Հրահանգ Գ. — Վերլուծեցէք հետեւեալ անունները։

Խաղողին ողկոյզը, պայուսակս, լուսին, կոշիկիդ ներբանը, լուսինին մահիկը, կացին, հացին, կայմով, ամառուընէ, կանոնէն, քթան, որայ, քահանային փիլոնը։

Օրինակ. — Խաղողին՝ հասարակ անուն եզակի սեռական և յօդով որոշեալ, յատկացուցիչ է ողկոյզը բառին։ Ողկոյզը՝ հասարակ անուն եզակի ուղղական, ը յօդով. — յատկացեալ՝ խաղողին գոյականին։

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

31. Լո՞ճ է յօդը։ Օ ինա՞գ։ Վա՞յ գիտցիր կայ յօդի վրայ։

ԳԼՈՒԽ Գ.

ԱԾԱԿԱՆ

32. Ածական կը կոչուի այն բառը որ կը ցուցնէ գոյականին որպիսութիւնը, կամ կ՚որոշէ՝ կը սահմանաւորէ անոր իմաստը։

Օրինակ. — Մեծ գիրք, երկու տղայ։

33. Հինգ տեսակ ածական կայ. Որակական, Ցուցական, Ստացական, Թուական, Անորոշ։

1. ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

34. Որակական ածականը գոյականին որպիսութիւնը կը ցուցնէ։

Օրինակ. — Խելօք տղայ, ճերմակ թուղթ։

Գիտցիր. — Ածականը գոյականէն առաջ կը գրուի և չի հոլովուիր։ Բայց երբ մինակ (առանց գոյականի) է, կրնայ հոլովուիլ և յօդ առնել։

Օրինակ. — Ճերմակին, մեծերուն, երեքով։

ՀՐԱՀԱՆԳ **26.** — Որոշեցէք Որակական Ածականները ու Գոյականները։

Համեստ աղջիկ, բարի Աստուած, չար սատանայ, կատաղի առիւծ, դժուար դաս, դիւրին գործ, անվախ տղայ, անհոգ մարդ, մատղաշ հասակ, ազնիւ ծառայ, սև մազ, ցած ձայն, անուշ հոտ։

ՀՐԱՀԱՆԳ **27.** — Սա գոյականներուն Որակական Ածականներ կցէ՛։

Տղայ, գլուխ, գլխարկ, թաշկինակ, գիւղ, աղուէս, մարդ, դաս, կոշիկ, դանակ, տուն, գագաթ, ընութիւն, աշակերտ, բժիշկ, մայր, վարդ, լուսին։

ՀՐԱՀԱՆԳ **28.** — Հետեւեալ Որակական Ածականներուն գոյականներ կցէ՛։

Ծանր, գեղեցիկ, կակուղ, կանաչ, մաքուր, թաց, չոր, սուր, ուղիղ, խոր, սև, ծոյլ, անհամ, անլի, աղէկ, կարմիր, խարտեաշ, սիրելի, հաստ։

Հրահանգ Ա. — Էջ 28 ի հատուածը (ՄԵԼԱՆ) նորէն գրեցէք եւ որակական ածականներուն տակը գիծ քաշեցէք :

Հրահանգ Բ. — Օրինակին նման խօսքեր շինեցէք :

Կարծր, հեղուկ, կազային, ծանր, թեթեւ, թափանցիկ, անուշ, լեղի, թթու, կծու, դեղին, կանաչ, կապոյտ, սեւ, ճերմակ, կարմիր, աշխոյժ, շիկ, խարտեաշ :

Օրինակ. — *Քարը կարծր է :*

Հրահանգ Գ. — Վերլուծեցէք հետեւեալ բառերը :

Կարմիր վարդին տերեւը, դեղին աղբեղութենէն, լեղի խնձորս, դեղին կտաւ, կատաղի առիւծին բաշը, աշխէտ ձիովդ, կակուղիկ բարձիդ երեսը, խելօք աղուն :

Օրինակ. — *Կարմիր՝ որակական ածական, կը ցուցնէ վարդին որպիսութիւնը : Վարդին՝ հասարակ անուն եզակի սեռական և յոգով, յատկացուցիչ տերեւը բառին : Տերեւը՝ հասարակ անուն եզակի ուղղական՝ ը յոգով, յատկացեալն է վարդին ին :*

Հրահանգ Դ. — Օրինակին պէս խօսքեր շինեցէք *յոգնակի*:

Մուրճ, մկրատ, գրոց, քերիչ, բահ, վրձին, թրիչ, խարազան, ծեփիչ, թիակ, խարտոց, կացին, գրիչ, ցնցուղ :

Դարբին, հողագործ, հանքագործ, նաւավար, քանդակագործ, նկարիչ, դերձակ, փայտահար, սայլապան, այգեորդ, գրագէտ, հիւսն, որմնադիր, կոպղարար (չիլինկիր), պարտիզպան :

Օրինակ. — *Դարբինները կը գործածեն մուրճեր :*

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք:

32. Ո՞ր բառեր ածական կը կոչուին : Օրինա՞կ : 33. Քանի՞ տեսակ ածական կայ : 34. Ի՞նչ կը ցուցնէ Որակական ածականը : Օրինա՞կ: Ածականը գոյականէն առա՞ջ թէ վերջը կը դրուի : Օրինա՞կ : Ածականը ե՞րբ կը հոլովուի : Օրինա՞կ :

35. *Որակական ածականներէն գոյական կը շինուի ութիւն մասնիկով, ինչպէս՝ Մեծ-մեծութիւն :*

Գիտելիք. — *Անձ, կենդանի և առարկայ ցուցնող (նիւթական, տեսանելի, թանձրացեալ) անուններէն շատը մտաւոր, անտեսանելի կամ վերացեալ անուն կ'ըլլայ ութիւն մասնիկով :*

Ինչպէս. Հայր-հայրութիւն, տղայ-տղայութիւն :

36. *Շատ անգամ գոյականներուն ծայրը մասնիկներ կցելով՝ ածական կը կազմուի : Այս մասնիկներն են. ական, ային, աւոր, եան, ելի, ալի, ոտ, ուտ, եղէն, եայ, եղ, ող, ած, իչ, ևայլն :*

ՀՐԱՀԱՆԳ **29.** — Հետեւեալ ածականներն ու գոյականները վերացեալ անունի փոխէ՝ *ութիւն* մասնիկը աւելցնելով:

Քաջ, հիւանդ, լաւ, եղբայր, սիրելի, թանձր, աղնիւ, մանուկ, աղուոր, կառավար, տկար, տէր, ատելի, ծեր, տխուր, ծոյլ, դասատու, անառակ, մայր, հայր, բարի, ցած, ժամկոչ, քահանայ :

ՀՐԱՀԱՆԳ **30.** — Ածականը գոյական ըրէ՝ եւ փոխադարձաբար :

Սիրելի աղայ, ճշմարիտ Աստուած, մարդկային յանցանք, խաղաղասէր մանուկ, մթին գիշեր, անմեղ հրեշտակ, փայլուն կրակ, ծեր հայր, բարեսիրտ մարդ, շնորհալի աղջիկ, կապոյտ երկինք, գեղեցիկ հրաշք, մաքուր հոգի :

ՀՐԱՀԱՆԳ **31.** — *Որակական ածականները* գոյականի փոխեցէք՝ մասնիկները ջնջելով :

Դպրոցական, հայրական, ծովային, կանոնաւոր, փափաքելի, շնորհալի, փայլուն, ուժեղ, քոսոտ, քարուտ, արծաթեղէն, ներող, ընկերական, հաբաւային, փառաւոր, մատնիչ, ողորմած, գէորգեան, արծաթեայ :

ՓՈՔՐԻԿ ՎԻՐԳԻՆԷՆ

Վիրգինէ փոքրիկ աղջիկ մ'է, վառվռուն ու սրամիտ։ Վեց տարեկան է և արդէն սկսած է կարդալ, գրել ու կար կարել։ Կարդացածը կը հասկնայ և իր գրածն ալ կը կարդացուի։ Մաքուր ու դեղեցիկ գիր մ'ունի։ Ուշադրութիւն կ'ընէ որ գիրերէն մէկը մեծ՝ միւսը փոքր, մէկը ծուռ՝ միւսը շիտակ, շատ լայն կամ շատ նեղ չըլլան, այլ հաւասար չափով՝ ուղղութեամբ ու հեռաւորութեամբ կը գրէ, և պէտք եղած տեղերը կը դնէ կէտադրութեան նշանները։

Կարդացած առեն ալ հոգ կը տանի շեշտերուն և ձայնին ելեւէջներուն։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք վերի հատուածն եւ ցոյց տուէք հասարակ ածականները։

Հրահանգ Բ. — Նոյն հատուածին մէջ գտնուող ածականներն ու առարկայ ցուցնող (բանձրացեալ) անունները՝ ուրիւն մասնիկով վերացեալ անունի փոխեցէք։

Հրահանգ Գ. — Օրինակին համեմատ խօսքեր շինեցէք։

Առարկայ. — *Օղակ, գնտակ, հաւկիթ, պնակ, աղեղ, տապեղուլունք, ասեղ, դանակ, ձող, ոսկի։*

Ձեւ. — *Կլոր, բոլորշի, գուլ, երկայն, ձուաձեւ, սուրքառակուսի, բոլորակ, կիսաբոլորակ, կլորակ։*

Օրինակ. — *Օղակը կլոր է։*

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

35. *Որակական ածականը ի՞նչպէս գոյական կ'ըլլայ։ Օրինա՞կ։ Անձ, կենդանի եւ իր ցուցնող (բանձրացեալ) անուններեր ուրիւն մասնիկն առնելով ի՞նչ կ'ըլլան։* 36. *Գոյականներուն ծայրը ո՞ր մասնիկները կցելով ածական կը կազմուի. ուրի՞ մէյմէկ օրինակ։*

Բ. ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

37. *Ցուցական ածական են այս, սա, սոյն, այդ, աս, տա, այն, ան, նա բառերը որոնք իրր թէ մատով կը ցուցնեն առարկան։*

Գիտելիք. — *Այս, սա, աս կը ցուցնեն մօտ բան մը, այդ, տա, աս՝ քիչ մը հեռաւոր բան մը, այն, նա, ան, աւելի հեռուն եղող բան մը։*

Գիտելիք. — *Ցուցական ածականները չեն հոլովուիր և սովորաբար ցուցական ածական ունեցող գոյականները յոգ կ'առնեն։ Ինչպէս. Աս տունը, աս պարտէզը, և այլն։*

ՀՐԱՀԱՆԳ **32.** — Հոլովեցէք.

Աս մարդը, այդ ծառը, այն հողը, սա եկեղեցին, տա թուղթը, նա քարը։

ՀՐԱՀԱՆԳ **33.** — Որոշեցէք *ցուցական ածականները։*

Ո՞վ ստեղծեց այս աշխարհս։ — Միթէ սա՞ գիրքն է ձեր փնտռածը։ — Ո՞ւսկից կը բղխի այս վճիտ ջուրը։ — Սա տղան աւելի խելօք ու մտացի կ'երեւի։ — Աս մարգը, այդ լճակը, այն անտառները, նա հոյակապ դղեակին տիրոջն են։ — Ա՛ն օրը լսեցի քու գեղեցիկ ձայնդ։ — Սա ուսեալ կնոջ եղբայրն ո՞վ է։ — Տա դուռը զա՛րկ։ — Նա մարդն հմուտ ճարտարապետ մ'է։ — Ա՛ռ այս թուղթերն և ինծի տուր այդ կաղամարը։

ՀՐԱՀԱՆԳ **34.** — Կեսերուն տեղ Որակական ածական մը եւ գիծերուն տեղ Ցուցական մը դրէք, Օրինակ՝ *Այս անուշ խնձորին կուտը։*

Այս . . . խնձորին —։ Այդ . . . պարտէզին —։ Այն . . . աղբիւրին —։ Նա . . . թռչունին —։ Սա . . . դասարանին —։ Տա . . . գառնուկին —։ Աս . . . պատկերին —։ Ան . . . ժամացոյցին —։ Սա . . . մարդուն —։ Ան . . . դիշերներուն —։

Հրահանգ Ա. — Հետեւեալ բառերուն սկիզբը դրէք *ան*, *ապ*, *ս*, *չ*, *դժ* նախադաս մասնիկները, որոնք բառին իմաստը *ժխտականի* կը փոխեն :

1. *Ամօթ*, *առակ*, *բան*, *խօս*, *գործ*, *գին* :
2. *Երախտ*, *շնորհ*, *ուշ*, *օրէն* :
3. *Դէտ*, *գեղ*, *կար* :
4. *Գոյ*, *տես*, *քահանայ* :
5. *Գոհ*, *բաղդ*, *կամակ* :

Հրահանգ Բ. — Դնէք սա բառերուն համանիշը :

Զուարթ, *տխուր*, *նուրբ*, *ջերմ*, *փոքր*, *յոռի*, *հիւանդոտ*, *կեղտոտ*, *ճարտար*, *սաստիկ*, *թերի*, *մութ*, *յստակ*, *անհուն*, *թշուառ*, *անսուաղ*, *ցած*, *սպիտակ*, *քաղցր*, *հեզ*, *կենդանի*, *երկչոտ*, *հանդարտ*, *բոլորակ*, *շողշողուն*, *չքեղ*, *ջինջ*, *լոկ*, *սին*, *որոշ* :

Հրահանգ Գ. — Բառերուն սկիզբը դրէք պատշաճ մասնիկը :

(*Ծան.* — *Քանի մը մասնիկներ Ա. յօդակապով կը կցուին բառերուն*) :

1. ԿԱՆ = *Հայր*, *մայր*, *եղբայր*, *որդի*, *ծնող*, *տղայ* :
2. ՅԻՆ = *Ընկեր*, *դաշտ*, *ծով*, *ցամաք*, *օդ*, *հանք*, *հարաւ* :
3. ԻՈՐ = *Ահ*, *զօր*, *կամ*, *նշան*, *հոչակ*, *չահ*, *մեծ* :
4. ԻԷՏ = *Խոտ*, *խաչն*, *դալար*, *բուրումն*, *հոտ*, *չահ* :
5. ԳԻՆ (1) = *Ցաւ*, *դառն*, *տրտում*, *ողբ*, *հիւանդ* :
6. ԴՈՅՆ (2) = *Քաղցր*, *առատ*, *մեծ*, *փոքր*, *կրտսեր*, *լաւ* :
7. Է = *Ադամանդ*, *բեհեղ*, *փղոսկր*, *բիւրեղ*, *արծաթ* :

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք :

37. *Ո՞ր բառեր ցուցական ածական են : Ի՞նչ գիտելիք կայ անոնց վրայ : Ցուցական ածականները կը հոլովուի՞ն :*

---

(1) *Գին մասնիկը հոս չի նշանակեր արժէք* :
(2) *Դոյն* » » » *երանգ* :

3. ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

38. *Ստացական ածականները կը ցուցնեն թէ բան մը որո՞ւ ստացուածքն է* :

39. *Ստացական ածական են* .

Ա. Դէմք՝ իմ, մեր . Բ. Դէմք՝ քու, ձեր . Գ. Դէմք՝ իր, իրենց, անոր, անոնց :

Գիտելիք . — *Ստացական ածականները չեն հոլովուիր և երբեմն ստացական ածականին տեղ անունին ծայրը ա, ի, ն կամ ը դիմորոշ յօդերը կը դրուին : Օրինակ* .

Մատս՝ (*փոխանակ ըսելու*) *իմ մատս* :
Քղանցքդ՝ (» ») *քու քղանցքդ* :

ՀՐԱՀԱՆԳ **35.** — Հոլովեցէք .

Իմ գրիչս, *քու ձեռքդ*, *իր աչքը*, *անոր քոյրը*, *մեր հասակը*, *ձեր փողոցը*, *իրենց մայրը*, *անոնց պտուղը* :

ՀՐԱՀԱՆԳ **36.** *Ստացականներն* յոգնակի ըրէք :

Իմ նոր բնակարանս : — *Քու անխոհեմ վարքդ* : — *Իմ անկեղծ փափաքս* : — *Անոր մեծ սեղանը* : — *Իր գեղեցիկ դէմքը* : — *Քու կապոյտ շրջազգեստդ* : — *Իմ ընդարձակ կալուածներս* : — *Անոր խոհեմ ընթացքը* : — *Այս ծառն ու իր համեղ պտուղը* : — *Քու սև մազերդ* : — *Իմ սիրելի ծնողքս* : — *Իր աչքէս ձին ու իմ հուժկու ջորիներս* :

ՀՐԱՀԱՆԳ **37.** — Գիծերուն տեղ դիր *ստացական ածական մը* :

Մովսէս կ'ըսէր — ժողովուրդին, եթէ պատուէք — ծնողքը, — կեանքն երկարաւոր կ'ըլլայ : Երջանիկ է այն աշակերտը որ — ջանքով — աշխատութեամբ և — բարի վարքով սիրելի եղած է — ուսուցիչներուն : Բարի հայր մը կը սիրէ — զաւակները բայց չի սիրեր — թերութիւնները : Սիրեցէք — զաւակները, բայց մի՛ սիրէք — թերութիւնները : Կը սիրեմ — բայց չեմ սիրեր — բնաւորութիւնդ : Ամենքս ալ յարգանք ու սէր կը պարտինք — ծնողքին : Սարդը կ'ապրի — ոստայնով, ինչպէս որսորդն — որսով :

ՀԱՒ

Աքաղաղին էգն է հաւը, զոր շատ լաւ կը ճանչնաք իր ածած հաւկիթներուն շնորհիւ։ Մէկ տարուան մէջ մինչև երկու հարիւր հաւկիթ կրնայ ածել. բայց այս թիւը հետզհետէ կը նուազի։ Հաւը կրնայ տասնըհինգ տարի ապրիլ։ Մանաւորապէս կը սիրէ ուտել միջատներ, որդեր և հացաբոյսեր։ Տարօրինակ և զարմանալի է հաւուն սէրն ու խնամքը իր ձագին համար որ վառեակ կը կոչուի։ Թխսելով կը հանէ ձագերը զորոնք այնքան խնամով կը պահպանէ։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք այս հատուածն, եւ ցուցական ածականներուն տակ մէկ գիծ, Սեպական ածականներուն տակ երկու գիծ քաշեցէք։

Հրահանգ Բ. — Նոյն հատուածին մէջ ո՞ր գոյականներ յօդ ունին՝ սեռագծեցէք։

Հրահանգ Գ. — Օրինակին համեմատ վերլուծեցէք սա բառերը։

Այս տունին տիրոջը, մեր ձիին թամբով, զրպանիս բերանը, վարժապետէդ, դասընկերներուն, ան տարուան հունձքերով, տա խեղճ մարդը, իր գործին, անոնց զաւակներուն։

Օրինակ. — *Այս՝ ցուցական ածական, կ'որոշէ տունին բառը։ Տունին՝ հասարակ անուն եզակի սեռական, յատկացուցիչ՝ տիրոջը ին, և յօդ։ Տիրոջը հասարակ անուն եզակի սեռական, յատկացեալ՝ տունին բառին, ը դիմորոշ յօդ։*

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

38. *Ի՞նչ կը ցուցնեն սեպական ածականները։* 39. *Որո՞նք են սեպական ածականները։ Ի՞նչ կը կոչուին ս, դ, ն գիրերը եւ ո՞ր բառերուն ծայրը կը դրուին։*

4. ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

40. *Թուականները կը ցուցնեն քիւ և կարգ։*

41. *Թուական ածականները երկու տեսակ են։*

1. *Բացարձակ՝ որ առարկային քանի հատ ըլլալը կը ցուցնէ։ Մէկ, երկու կամ երկուք, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասը, տասնը մէկ, տասն երկու, և այլն։*

2. *Դասական՝ որ դաս, կարգ, աստիճան կը ցուցնէ և կը շինուի բացարձակին վրայ որդ կամ երորդ աւելցնելով։ Առաջին (և ոչ միներորդ), երկրորդ, երրորդ, չորրորդ, և ն։*

Գիտ. Ա. — *Բացարձակներուն վրայ ական մասնիկը դնելով կ'ունենանք բաշխական թուականներ։ Ինչպէս. երեքական, տասնական, և այլն։*

Նոյնպէս նոց մասնիկով կը կազմուին արժէք և չափ ցուցնող թուականներ. երկուքնոց, չորսնոց, և այլն։

Գիտ. Բ. — *Թուական ածականները, եթէ առանց գոյականի են, կը հոլովուին՝ հոլովման ընդհանուր ձևին պէս։*

ՀՐԱՀԱՆԳ **38.** — Գրեցէք բացարձակ թուականները մինչեւ հարիւր։

ՀՐԱՀԱՆԳ **39.** — Գիծերուն տեղ հարկ եղած բացարձակները դիր։

Աստուած աշխարհս — օրուան մէջ ստեղծեց։ Երկու անդամ ուխտ — կ'ընէ։ Ամսուան մէջ — օր կայ։ — տարին դար մ'է։ Քրիստոսի առաքեալները — էին։ Այբուբենը — գիր կը պարունակէ։ Տարին — եղանակի բաժնուած է։ Ամէն մէկ եղանակ — ամիսէ կը բաղկանայ։ Շաբթուան մէջ — օր կայ գործի և — օր հանգիստի։ Դրպտոցներու արձակուրդները սովորաբար — չաբաթ կը տեւեն։ Մէկ Օսմանեան ոսկին — դահեկան կ'արժէ։ Մէկ դահեկանը — փարա և մէկ փարան — ստակ։

ՀՐԱՀԱՆԳ **40.** — Հոլովեցէք բացարձակ թուական ածականները՝ մէկէն մինչեւ տասը։

ՁԵՌՔԸ

Ամէն մէկ ձեռքիս վրայ ունիմ հինգ մատ։ Առաջին մատս, որ ամէնէն աւելի հաստ է, կը կոչուի բոյթ կամ բութանաս, երկրորդը՝ զոր բան մը ցուցուցած ատենս կ'երկնցնեմ՝ կը կոչուի ցուցանաս, երրորդը՝ ամենէն մեծը՝ որ ճիշդ մէջտեղն է, կ'ըսուի միջնանաս, չորրորդը որուն վրայ կ'անցընեն մատանին, կը կոչուի մատնեանաս, իսկ հինգերորդը՝ ամէնէն փոքրը՝ կը կոչուի ճկոյթ։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք վերի հատուածն եւ ցոյց տուէք բուական ածականները։

Հրահանգ Բ. — Գիրով գրեցէք սա բուանշանները։
5, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 16, 17, 19, 20, 28, 30, 141, 250, 362, 478, 1080, 2097։

Հրահանգ Գ. — Բացարձակ, դասական, բաշխական եւ արժէք ու չափ ցուցնող բուական ածականները չորս սիւնակի մէջ գրեցէք դէմ առ դէմ։

Բացարձակ	Դասական	Բաշխական	Արժէք ցուցնող
Մէկ	Առաջին	Մէյմէկ	Մէկնոց
Երկու	Երկրորդ	Երկերկու	Երկուքնոց
Երեք	Երրորդ	Երեքական	Երեքնոց
Չորս	Չորրորդ	Չորսական	Չորսնոց

(Շարունակեցէք այսպէս)

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

40. Ի՞նչ կը ցուցնեն բուական ածականները։ 41. Քանի՞ տեսակ բուական ածական կայ։ 1. Ի՞նչ կը ցուցնեն բացարձակները եւ որո՞նք են։ 2. Ի՞նչ կը ցուցնեն դասականները եւ ի՞նչպէս կը շինուին։ Օրինա՞կ։ Ա.—Բաշխական բուական ածականներն ի՞նչպէս կը շինուին։ Օրինա՞կ։ Արժէք եւ չափ ցուցնող բուականներն ի՞նչպէս կը կազմուին։ Օրինա՞կ։ Բ.—Թուականները ե՞րբ եւ ի՞նչպէս կը հոլովուին։ Օրինա՞կ։

5. ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆ

42. Անորոշ ածական են այն բառերը որ գոյականին կուտան անորոշ և ընդհանուր իմաստ մը։

43. Անորոշ ածական են. մը, քանի մը, միեւնոյն, նոյն, ամէն, բոլոր, ուրիշ, միւս, ինչ ինչ, այս ինչ, այն ինչ, անձնիւր, իւրաքանչիւր, ի՞նչ, ո՞ր, քանի՞, ո՞րչափ, ո՞րքան, ի՞նչպիսի, այսչափ, այսքան, ոչ մէկ, ամէնամէկ, և այլն։

Գիտելիք Ա. — Անորոշ ածականներն ալ (բացի մը էն) իրենց գոյականէն առաջ կը դրուին և չեն հոլովուիր։

Օրինակ. — Քանի մը տարիէն, միեւնոյն տան մէջ։

Գիտելիք Բ. — Մը անորոշին ը տառը կրճատուելով՝ տեղը ապաթարց կը դրուի եթէ յաջորդ բառը ձայնաւորով կը սկսի։ Ինչպէս՝ Մարդ մ'եկաւ, խնձոր մ'առի։

ՀՐԱՀԱՆԳ 41. — Անորոշ ածականները ստորագծեցէք։

Գրիչ մը, ամէն մէկ ճիւղ, քանի մը հոգի, մի և նոյն օրը, նոյն միջոցին, ամէն մարդ, բոլոր տարին, ուրիշ տեղ, միւս քոյրը, ի՞նչ գործ, ինչ ինչ խնդիրներ, այս ինչ գիրքը, այն ինչ բանը, քանի մը գիւղացիներ, անձնիւր քաղաքացի, իւրաքանչիւր աշակերտ, ի՞նչ խօսք, ո՞ր փողոց, ո՞րչափ ծաղիկ։ Ի՞նչ գիրք է սա։ Այն ինչ տեղը մեզի սպասէ։

ՀՐԱՀԱՆԳ 42. — Ի՞նչ տեսակ են հետեւեալ ածականները։

Մեծ, մէկ, մը, իմ, մեր, այս, առաջին, տաք, բարակ, սա, այդ, նոյն, քու, հինգ, հին, չորրորդ, երերուն, երեսուն, միւս, անձնիւր, հարիւր, լաւ, այն, տա, յիսուն, երրորդ, նեղ, երկչոտ, կլոր, ճերմակ, չորսնոց, տասնամեայ, քանի՞, ո՞ր, տասներորդ, այն ինչ, պատուական, անորոշ, բիւր, հինգական, սուղ, մեր, գիւղական, հարիւրնոց։

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Պէտք է մեր հոգին ամէն բանի ընդունակ ըլլայ. Աստուծմէ պարգևուած հուր մ'է այն, պէտք է որ արծարծենք ու անուշանենք զայն ամէնէն թանկագին նիւթերով։ Պէտք է բանանք մեր խելքին ու սիրտին դռները՝ ամէն տեսակ դիտութիւններու։ Անխելքութի՛ւն է զարգացման ո՛ր և է առարկայ զանց ընել։ Մեր միտքն ու հոգին կրնան պարփակել ուսումներուն թէ արուեստներուն ամէն ճիւղերն ալ՝ բա՛ւ է որ պէտք եղած չափով ու ոճով ուսուցուին նոյն ճիւղերը։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք հատուածն, եւ անորոշ ածականներն ստորագծեցէք։

Հրահանգ Բ. — Նոյն հատուածին մէջ ուրիշ տեսակ ածականներ ալ կա՞ն. որո՞նք են, ցոյց տուէք։

Հրահանգ Գ. — Օրինակին համեմատ վերլուծեցէք սա բառերը։

Տասներկու տարուան աղայ մը, հինգնոց ոսկիին արժէքը, չորրորդ դասարանի աշակերտներուն, այս ինչ մարդուն, ո՞ր բանէն, մի և նոյն սենեակին բանալիներով, ամէն թաղի տուները, տասնական ոսկիի պարգեւը։

Օրինակ. — *Տասներկու՝ դասական թուական ածական, կ'որոշէ տարուան բառը։ Տարուան հասարակ՝ անուն եզակի սեռական։ Տղայ հասարակ անուն եզակի ուղղական։ Մը անորոշ ածական, կը վերաբերի տղայ բառին։*

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

42. Ի՞նչ կ'ընեն անորոշ ածականները եւ 43. Որո՞նք են։ Օրինա՞կ։ Ի՞նչ գիտէք մը անորոշ ածականին վրայ։

ԳԼՈՒԽ Գ.

ԴԵՐԱՆՈՒՆ

44. Դերանունը բառ մ'է որ կը դրուի արդէն յիշուած բառի մը տեղ, զայն չկրկնելու համար։ Ինչպէս՝

Աստուած արդար է. Ան կը պատժէ յանցաւորները։

45. Հինգ տեսակ դերանուն կայ. Էական (կամ Անձնական), Ցուցական, Ստացական, Անորոշ և Յարաբերական։

1. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

46. Անձնական դերանունը կը ցուցնէ անձերը կամ դէմքերը որ երեք են.

	Եզակի	Յոգնակի
Ա. Դէմք	Ես	Մենք
Բ. »	Դուն	Դուք
Գ. »	Ան, անիկա	Անոնք
	Ինք	Իրենք

Գիտելիք. — Անձնական դերանուն են նաև իրարու, միմիանց։

ՀՐԱՀԱՆԳ **43.** — Որոնեցէք անձնական դերանուններն եւ ըսէք թէ ո՛ր բառերուն տեղ դրուած են։

Յակոբ չատ կը սիրէր Յովսէփը, ան հագցուց անոր գեղեցիկ կապայ։ — Կովն ու չունը կը քալէին իրարու հետ։ — Տղա՛ք, պէտք է դուք օգնէք իրարու։ — Զին, կովն և եզը ըսին. մենք դաշտը կանանչ խոտ պիտի ուտենք։ — Ցուսիկ և Յակոբ լաւ աշակերտներ են. անոնք դպրոց կ'երթան և իրարու հետ դաս կը սերտեն։ — Յիսուս աշխարհ եկաւ. ան չարչարուեցաւ։ — Ես գիտցածս ըսի, դուն ալ պատասխան տուր։ — Մենք ալ պիտի երթանք, դուք ալ։ — Թոյրդ կ'ըսէ թէ ինք քեզմէ պզտիկ է։ — Մէկմէկու վրայ չուր կը նետեն։

Հրահանգ Ա. — Բառերուն սկիզբը դրէք պատշաճ մասնիկը :

8. ԵԱՆ = *Արեւել, Բաբելոն, Ներսէս, Դաւիթ, Մեսրոպ :*
9. ԱԼԻ = *Շնորհ, ցաւ, պանծ, ցանկ, զարման, ողբ :*
10. ԵԼԻ = *Գով, պարսաւ, յարգ, պատիւ, սէր, փափաք :*
11. ԵՂ = *Ահ, զօր, համ, հիւթ, մազ, ուժ, հանճար :*
12. ԵՂԷՆ = *Արծաթ, բոց, բանջար, հող, քար, մազ :*
13. ԵՐԷՆ *կամ* ԱՐԷՆ = *Թուրք, Հայ, Յոյն, Գերման :*
14. ՈՐԴ = *Նախ, ձախ, յաճախ, առաջին, յաջ, միջին :*

Հրահանգ Բ. — Սա բառերն իրարու կցեցէք, ածականը գոյականէն առաջ դնելով, այսպէս. *Ձայնը-բարձր՝ բարձրաձայն :*

Տունը-մեծ, վիզը-երկայն, քիթը-խոշոր, ճակատը-լայն, սիրտը-փափուկ, միտքը-թարձր, միտքը-ուղիղ, սիրտը-ազնիւ, ձայնը-քաղցր, միտքը-մեծ, լեզուն-քաղցր, սիրտը-բարի, դէմքը-գեղեցիկ, մարմինը-թանձր, միտքը-թեթեւ, փեռուրը-նոր, բազուկը-երկայն, քայլը-թեթեւ, սիրտը-քար :

Հրահանգ Գ. — Սա բառերուն կցեցէք պատշաճ մասնիկը:

15. ԻԿ = *Փոքր, սիրուն, աղուոր, անուշ, կակուղ, քնքուշ:*
16. ԱԿ = *Կլոր, բոլոր, անուշ, յաջող, կապոյտ, դաչն :*
17. ՈՒԿ = *Սեւ, խաժ, ճերմակ, տաք, պաղ, կարմիր :*
18. ԻՋ = *Աւեր, երգ, պահպան, փարատ, կափար :*
19. ՈՂ = *Շահ, բեր, խօս, կատար, շուրջ, ծեծ, աքծան :*
20. ԱԾ = *Ծիլ, ծալ, ողորմ, խորշոմ, կոտոր, կատար, ման :*
21. ՈՒՆ = *Սող, զեռ, խօս, շարժ, փայլ, հաս, հաստատ :*

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք:

44. *Ի՞նչ է Դերանունը : Օրինա՞կ :* 45. *Քանի՞ տեսակ Դերանուն կայ :* 46. *Ի՞նչ կը ցուցնէ Անձնական դերանունը : Դէմը քանի՞ է :*

47. Անձնականները կը հոլովուին այսպէս.

Ա. Դէմք

Եզակի	Յոգնակի	Եզակի	Յոգնակի
Ո. *Ես*	*Մենք*	*Դուն*	*Դուք*
Ս. *Իմ*	*Մեր*	*Քու*	*Ձեր*
Տ. *Ինծի*	*Մեզի*	*Քեզի*	*Ձեզի*
Հ. *Իս, զիս*	*Մեզ, զմեզ*	*Քեզ, զքեզ*	*Ձեզ, զձեզ*
Բ. *Ինձմէ, ինէ*	*Մեզմէ, մենէ*	*Քեզմէ, քենէ*	*Ձեզմէ, ձենէ*
Գ. *Ինձմով*	*Մեզմով*	*Քեզմով*	*Ձեզմով*

Գ. Դէմք

Եզակի	Յոգնակի	Եզակի	Յոգնակի
Ո. *Ան, անիկա*	*Անոնք*	*Ինք*	*Իրենք*
Ս. *Անոր*	*Անոնց*	*Իրեն*	*Իրենց*
Տ. *Անոր*	*Անոնց*	*Իրեն*	*Իրենց*
Հ. *Ան*	*զԱնոնք*	*զԻնք*	*զԻրենք*
Բ. *Անկէ* (*)	*Անոնցմէ*	*Իրմէ*	*Իրենցմէ*
Գ. *Անով*	*Անոնցմով*	*Իրմով*	*Իրենցմով*

Գիտելիք. — *Իրարու և մեկմեկու դերանուններն ուղղական չունին :*

Սեռական եւ տրական	*Իրարու*	*Մէկմէկու*
Հայցական	*Իրար*	*Մէկզմէկ*
Բացառական	*Իրարմէ*	*Մէկմէկէ*
Գործիական	*Իրարմով*	*Մէկմէկով*

ՀՐԱՀԱՆԳ 44. — Որոշեցէք սա դերանուններուն *թիւն* ու *հոլովը* : Յետոյ *եզակիներն յոգնակի* ըրէք եւ *յոգնակիներն՝ եզակի* :

Ես, քեզմով, իրենցմէ, ինք, անկէ, մեզմով, իմ, դուն, իրենք, ձեզի, զիս, իրենց, անոնց, ան, քեզմէ, մեզ, իրեն, իս, ձեզմէ, անով, իրենցմով, անոր, անոնք, իրմէ, ինձմէ :

(*) *Կամ՝ անկիից, անորմէ :*

ՀՈՎԻՒԸ

Իր ոչխարներուն քովիկը, ոտքի վրայ կայնած է հովիւը՝ ուշադիր և հոգածու։ Աչքն անոնց վրայ է, անոնց կը հետեւի, անոնց կ'առաջնորդէ՝ դէպ ի խոտաւէտ տեղեր։ Եթէ ոչխարները ցրուին, իրարմէ հեռանան, ինքը կը վազէ անոնց ետեւէն և կը հաւաքէ։ Եթէ հեռուէն նշմարէ թէ գայլ կուգայ, իսկոյն շունը կ'արձակէ անոր վրայ և կը փախցնէ։ Իր սիրուն ոչխարներուն վրայ կը դուրգուրայ, զանոնք կը սնուցանէ, կը խնամէ և կը պաշտպանէ։ Օրը երկու անգամ իր սրինգին ձայնով զանոնք կ'առաջնորդէ աղբիւրը կամ առուին եղերքը՝ ջրելու համար։ Ինք է որ կը խուզէ անոնց բուրդը և մեղի կը ծախէ։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք այս հատուածն եւ usnրագծեցէք էական դերանունները, որոշելով դէմք, թիւ, հոլով։

Հրահանգ Բ. — Հոլովեցէք. Ոչխար, ոտ, հովիւ, տեղ, գայլ, սրինգ, ձայն, աղբիւր, առու, եզերք, բուրդ։

Հրահանգ Գ. — Օրինակին համեմատ վերլուծեցէք սա էական դերանունները։

Իրմով, զքեզ, մեզի, անոնցմով, իրենք, անոր, դուք։

Օրինակ. — Իրմով էական դերանուն, երրորդ դէմք, եզակի դործիական. ուղղականն է ինք։

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

47. Ինչպէս կը հոլովուին անձնական դերանունները։

Զ. ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

48. Ցուցական դերանուններն իբր թէ մատնանիշ կ'ընեն, կը ցուցնեն անձերն ու իրերը։

49. Ցուցական դերանուն են. Այս, սա, աս. Այդ, տա, աս. Այն, նա, ան։ Ասոնք առանց գոյականի կը գործածուին։

Կը գործածուին նաև ասիկա, ասիկա, անիկա (կամ սուիկա, տուիկա, նուիկա) միայն եզակի ուղղական և հայցական։

50. Այս, աս, և այն կը հոլովուին սապէս.

	Եզակի	Յոգնակի
Ուղղական եւ Հայց.	Այս, աս	Ասոնք
Սեռական եւ Տրակ.	Ասոր	Ասոնց
Բացառական	Ասկէ, ասորմէ	Ասոնցմէ
Գործիական	Ասով	Ասոնցմով

Եզակի. — Ատ, ատոր, ատկէ, ատով

Յոգնակի. — Ատոնք, ատոնց, ատոնցմէ, ատոնցմով։

Իսկ սա, տա, նա կը հոլովուին այսպէս.

Եզակի. — Սա, սրուոր, սրկէ, սրուով։

Յոգնակի. — Սրուոնք, սրուոնց, սրուոնցմէ, սրուոնցմով։

ՀՐԱՀԱՆԳ **45.** — Հոլովեցէք ցուցական դերանունները։

ՀՐԱՀԱՆԳ **46.** — Եզակի ցուցականներն յոգնակի բրէք եւ փոխադարձաբար։

ն. Ասոնցմէ, ան, այն, տա, ատով, անոնք։ — Ասկէ ալ հրամեցէք։ — Ատոր ինչ անուն կուտան։ — Անոնցմէ ինչո՞ւ չառիր։ — Սա աղուոր չէ՞։ — Անոնց գրկէ։ — Ատկէ աւելի մեծ յանցանք չ'ըլլար։ — Ատոր որչա՞փ յոգնեցայ։ — Անոնցմէ՞ ատիր թէ ասկէ։ — Քեզի՛ կուտամ սա, եթէ կարդաս։ — Ատով դոհ չե՞ս։ — Անոնցմէ քեր։ — Ատոր ալ տո՛ւր, անոնց ալ։ — Իմ փնտուածս ատ չէ։ — Ան ո՞վ, աս ո՞վ։ — Ասիկա՞ ընտրեցիր թէ անիկա։ — Սրուո՞ր նայէ։

Հրահանգ Ա. — Գրեցեք հինգ խօսք որ ցուցական դերանուն պարունակեն :

Հրահանգ Բ. — Շեղագիր դերանունները պատշաճ հոլովին փոխէ :

Մեր ծնողները մենք համար կ'աշխատին, պէտք է որ անոնք հնազանդ ըլլանք մենք : — Վարժապետս ես շատ կը սիրէ և ես բարենիշ կուտայ, երբ դասս գիտնամ : — Ես դուն չեմ վախնար : — Հայրս սրդողեցաւ դուն դէմ : — Դուն գրիչ մը կ'ուզեմ : — Քիչ մը թուղթ ալ տուր ես : — Դուք հիւանդ կը կարծէի ես : — Սերովբէ ես աւելի մեծ է : — Առ սա ծրարը և տար անոնք : — Ես շատ կ'ախորժիմ դեղձէն և կ'ուտեմ ան. կարծեմ դուն ալ կը սիրես դեղձն ու կ'ախորժիս ան : — Այդ տղեկը ես չի ճանչնար :

Հրահանգ Գ. — Օրինակին պէս վերլուծեցէք ցուցական դերանունները : Գրեցէք այսպէս. *Ասկէ՝ ցուցական* դերանուն *եզակի բացառական, ուղղականն է աս :*

Ասկէ, աս, ասոնցմէ, ատով, անոնց, անով :

Հրահանգ Դ. — Գրեցէք սա բառերուն *սեռականը, բացառականը* եւ *գործիականը*, եզակի եւ յոգնակի :

Սէր, դասատիարակ, շահ, գլուխ, տղայ, ճամբայ, Ասիացի, գին, գինի, սուր, հիւանդութիւն, երդում, ձիւն, ատամոքս, սիւն, տաճար, ծնունդ, խթում, թոժիւն, կին, ձի, ցին, աներ :

Հրահանգ Ե. — Նոյն բառերուն ածական մը կցեցէք :

Օրինակ. — Անկեղծ սէր, հնոտ դասատիարակ, զուտ շահ, գեղեցիկ գլուխ, սիրուն տղայ, Լայլն :

Հրահանգ Զ. — Նոյն հրահանգի բառերուն հով դրէք ուրիշ բառ մը : Ինչպէս. *Սիրոյ նշանը, դասատիարակին խրատը*, եւայլն : Ցեռոյ անոնցմով մէյմէկ խօսք կազմեցէք, այսպէս. *Շահուն կիսը ձեզի կը թողու. — Գլխուն մազերը ներմկեցան :*

Հրահանգ Է. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք :

48. *Ի՞նչ է ցուցական դերանունին պաշտօնը :* 49. *Որո՞նք են ցուցական դերանուններն :* 50. *Ի՞նչպէս կը հոլովուին :*

3. ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

51. *Ստացական դերանունները կը ցուցնեն թէ բան մը որո՞ւ կը վերաբերի, որո՞ւ ստացուածքն է* (¹) :

52. *Ստացական դերանունները կը շինուին Ստացական ածականներէն՝ ս, դ, ն (կամ ր) դիմորոշ յօդերով այսպէս.*

	Եզակի					
Ա.	Դեմք *Իմս*	կամ	*Իմինս*	*Մերը*	կամ	*Մերինը*
Բ.	» *Քուկդ*	»	*Քուկինդ*	*Ձերը*	»	*Ձերինը*
Գ.	» *Իրը*	»	*Իրենը*	*Իրենցը*	»	*Իրենցինը*
	Անորը	»	*Անորինը*	*Անոնցը*	»	*Անոնցինը*

Յոգնական. — *Իմիններս, մերիններդ, քուկիններդ, ձերիններ, իրեններ, Լայլն :*

53. *Ստացականները կը հոլովուին այսպէս.*

Եզակի. *Իմինս, իմինիս, իմինէս, իմինովս :*

Յոգ. *Իմիններս, իմիններուս, իմիններէս, իմիններովս :*

ՀՐԱՀԱՆԳ **47.** — Հոլովեցէք *ստացական* դերանունները :

ՀՐԱՀԱՆԳ **48.** — *Ստացական* դերանունները գտէք եւ նոյն խօսքերն յոգնական բրէք *և* բառին տեղ *են* դնելով եւ *գոյականներն* ալ *յոգնականի* վերածելով :

Այս պարտէզն իմս է : — Այդ տունը քուկդ է : — Այս նաւակը մերն է : — Այդ արտն անորն է : — Այս գլխարկը քուկինդ է : — Ո՞ր ծրարն է անոնցինը : — Այս պարտէզն է ձերինը : — Հոն չէ քուկինդ : — Հոս է ձերինը : — Ահա անոնցինը : — Անորինը տեսար թէ իմինս : — Այս սպասաւորը ձերինն է : — Այս գրիչն իմս է թէ քուկդ : — Այս զանգակը ո՞ր եկեղեցիին է. ասորինը թէ անորինը : — Ո՞ր խանութէն առիր այս կաւը, ասոնցինէ՞ն թէ անոնցինէն :

(¹) *Ստացական դերանունը կը դրուի Ստացական ածական ունեցող գոյականի մը տեղ : Օրինակ, իմ գիրքս = իմինս :*

Հրահանգ Ա. — Սացական դերանունով հինգ խօսք գրեցէք :

Հրահանգ Բ. — Շեղագիր բառերուն տեղ յարմար դերանուն մը դրէք, այսպէս. *Սիրենք մեր ծնողքը եւ ջանանք օգտակար ըլլալ անոնց :*

Սիրենք մեր ծնողքն և ջանանք օգտակար ըլլալ մեր ծնողքին : — Վարժապետս եկաւ և դասս կարդացի վարժապետիս : — Խմորը կը թրեն և խմորով ալիւր կը շինեն : — Կաթը կը կթեն կովէն և կաթեն մածուն կը մակրդեն : — Մարթա և Նեկտար դաս չեն գիտեր. Մարթա և Նեկտար պիտի պատժուին : — Գրիգոր իր մայրը գրկեց, Անդրիկ ալ իր մայրը գրկեց : — Մօրեղբօրս տունը աւելի մօտ է, քան մեր տունը : — Եթէ թշնամիդ անօթի է, հաց տուր թշնամիդ : — Պետիկ չատախօս տղայ մ'է, Պետիկ չի կրնար զսպել իր լեզուն : — Ահա երկու գիրք, ասս գիրքը աւելի սուղ է քան թէ ան գիրքը :

Հրահանգ Դ. — Օրինակին պէս վերլուծեցէք Սացական դերանունները : Օրինակ. *Իմիններուս՝* սացական դերանուն, Ա. Դէմք, յոգնակի սեռական կամ տրական :

Իմիններուս, իրենցը, քուկիններէդ, մերինը, ձերը, իմինէս, քուկինիդ, իրեններուն, անորինով, իմինիս, անորինը :

Հրահանգ Դ. — Սա գոյականներուն կցէ յարմար ածական մը : Օրինակ. *Երջանիկ ծերունին, տկար աշակերտները :*

Ծերունին, աշակերտները, օդը, մարդը, երկրագործը, տղաքներ, դատաւորը, բարեկամը :

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք:

51. *Ի՞նչ կը ցուցնեն սացական դերանունները :* 52. *Ի՞նչպէս կը շինուին :* 53. *Ի՞նչպէս կը հոլովուին :*

4. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

54. *Անորոշ դերանուններն ընդհանուր և անորոշ գաղափար մը կուտան այն անձերուն և իրերուն որոնց տեղ կը դրուին :*

55. *Անորոշ ածականներն են նաև անորոշ դերանուն, միայն թէ գոյականի հետ չեն գործածուիր և կրնան հոլովուիլ :*

Գիտելիք. — *Անորոշ դերանուններէն մէկ քանին հոլովման այլ և այլ ձեւեր ունին : Ասոնք են* (¹) *մէկը, ամէն, ո՞վ, ո՞ր, ինչ, ոչինչ, ոչ մէկը, եայլն :*

ՀՐԱՀԱՆԳ **49.** — Հոլովեցէք սա *անորոշ* դերանունները՝ հոլովման ընդհանուր ձեւին համեմատ :

Իւրաքանչիւր, միւս, ուրիշ, մէկ քանի, նոյն, բոլոր, շատեր, ոչինչ, այսինչ, անձնիւր, քանի, որչափ, այսչափ, այսքան, այնպիսի, ասանկ, ատանկ, անանկ :

ՀՐԱՀԱՆԳ **50.** — Աշակերտն ստորագծէ *անորոշ* դերանունները :

Ինչ որ կ'ուզես որ ուրիշը քեզի ընէ, նոյնն ըրէ ուրիշին : — Շատեր կը պնդեն թէ Դանիացիները գտած են Ամերիկան Քրիստափոր Գոլոմպոսէն առաջ : — Ոչինչ այնքան քաղցր է որքան բարեգործութիւնը : — Ոչ մէկը պիտի դայ : — Այս աղջիկը իւրաքանչիւրը իր կարծիքն ըսաւ : — Ո՛վ որ կ'ուզէ, հետս թող պարտէզ դայ : — Մենք ամենքս ծառայ ենք Աստուծոյ : — Մէկ քանին ինձի տուր : — Բոլորն ալ պզտիկներուն տուաւ :

(¹) Դասատուն ասոնց հոլովումը կը գրէ տախտակին վրայ և աշակերտները կ'օրինակեն :

Հրահանգ Ա. — Խօսքերն ամբողջացուցէք սա երկու տեսակ նմանաձայն բառերով: — 1. *Դուռ, դուր, թուր։* 2. *Հոս, հօս։*

1 . . . *դոց պահէ, դրացիդ գոզ չբռնես։* 2. *Սպային մէջքէն . . . մը կախուած էր։* 3 . . . *անհրաժեշտ գործիք մ'է հիւսնին, կահագործին և սաղմագործին համար։* 4. *Վարդն անուշ . . . կը բուրէ։* 5. *Հովիւն իր . . . կ'առաջնորդէ արօտաւայտ տեղեր։*

Հրահանգ Բ. — Նոյն հինգ բառերուն սահմանը տուէք: Օրինակ. — *Դուռ* = Տունին այն մասը ուրկէ ներս կը մտնուի:

Հրահանգ Գ. — Գտէք սա վերջաւորութիւնն ունեցող երեքական բառ:

Ած, ուած, ուածմ, անմ, ունմ, ութիւն, ուս, իւն, ուն, ոյթ, ուրդ, ուք։

Անհաւասիկ մէյմէկ օրինակ. — *Կատարած, դիպուած, գրուածմ, մեղադրանմ, ցոլմունմ, ինուութիւն, թափուս, հնչիւն, խօսուն, ծածկոյթ, յագուրդ, մտմտուք։*

Հրահանգ Դ. — Վերլուծեցէք սա անորոշ դերանունները:

Մէկուն, ամենէն, որո՞ւ, ինչէ՞, մէկէն, բոլորին, անձնիւրէն, այսչափով, իւրաքանչիւրը, միւսներուն։

Օրինակ. — *Մէկուն՝ անորոշ դերանուն եզակի սեռական, և դիմորոշ յօդ։*

Հրահանգ Ե. — Ցեսադաս մասնիկները կցեցէք սա բառերուն:

22. ՈՒՏ. = *Սպառած, աւազ, քար, թաւ, ոսկր։*
23. ՈՏ. = *Արիւն, եռանդ, ժանգ, ծակ, խոց, քոս։*
24. ԿՈՏ. = *Վախ, դանդաղ, նուազ, դեղեւ։*
25. ՈՒՐԴ. = *Արձակ, պարապ, յագ, աճ, նուազ։*
26. ԱՏ. = *Պոչ, լեզու, ձեռն, ճիւղ, քուն, հուր։*

Հրահանգ Զ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք:

54. *Ի՞նչ կ'ընեն անորոշ դերանունները։ Օրինակ։* 55. *Որո՞նք են անորոշ դերանունները։ Գրեցէք ամբողջական եւ հոլովեցէք։*

5. ՑԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

56. *Յարաբերական դերանուն կը կոչուի որ բառը, և կանխաւ ըսուած անուն կամ դերանուն մը կը յիշեցնէ։*

57. *Այն բառն՝ որուն կը վերաբերի յարաբերական դերանունը՝ կը կոչուի յարաբերեալ։*

Օրինակ — *Թռչունը որ կ'երգէ։ Նամակը զոր բերաւ։*

Այս խօսքերուն մէջ որ, զոր են յարաբերական դերանուն. և յարաբերեալ են՝ թռչունը, նամակը։

58. *Որ դերանունը կը հոլովուի այսպէս.*

Եզակի. *Որ, որուն, զոր, որմէ, որով։*

Յոգնակի. *Որոնք, որոնց, զորս, որոնցմէ, որոնցմով։*

ՀՐԱՀԱՆԳ **51.** — Որոշեցէք *յարաբերականներն* ու *յարաբերեալները։*

Հաւը զոր վաճառեցինք։ — Հիւրերը որոնք ներս մտան։ — Գրիչները զորս կոտրեցիր։ — Մանգաղը որով կը հնձեն։ — Աղքատները որոնց հաց տուիք։ — Ո՞վ է որ կը խօսի։ — Այն մարդը որուն տղան կը ճանչնաս։ — Ընկերս որուն ընծայեցի գիրք մը։ — Հարցումը զոր ըրիք։ — Ծառը որմէ քաղեցինք սալոր։ — Նաւերն որոնցմով ճամբորդեցինք։ — Այծերն որոնցմէ կաթ կթեցինք։

ՀՐԱՀԱՆԳ **52.** — Զանազանեցէք *անորոշ ածականները* եւ *անորոշ դերանունները։*

Ոչինչ այնքան հաճելի է, որչափ աշխատութիւնը։ — Գրիչ մը տուր։ — Ամէն մէկ տղայ մէյմէկ ղրուշ պիտի բերէ։ — Քանի մը ծառ տնկեցի։ — Մէկ քանին ինծի տուր։ միւսներն ալ դուն առ։ — Այս մարդերէն մէկը հայրս է, միւսը՝ հօրեղբայրս։ — Եղբայրներէս մէկը երաժշտութիւն կ'ուսանի։ — Բոլոր գիշերն հսկեցինք։ — Բոլորն ալ ձեզի տամ։ — Ո՞ր տղան է սիրելի և ո՞րն է ատելի։ — Ծառ մը կտրեց։ — Ծառերէն մէկը կտրեց։ — Ուրիշ տղաք ալ կուգան։ — Ուրիշը կը ճանչնա՞ք։

Հրահանգ Ա. — Օրինակներեն մէջ գտնուող խօսքերը եւ ուշադրութիւն դրէք թէ *դերանունը* ինչպէս կը դրուի *գոյականին* տեղը :

1. *Աստուած Մովսէսին տուաւ տասը պատուէրներ և Մովսէս ալ Իսրայէլացիներուն տարաւ տասը պատուիրները :*

2. *Ահա երկու պատկեր, ո՞րն է գեղեցիկ, այս պատկե՞ր թէ այն պատկերը :*

3. *Իմ դասս լմնցաւ, քու դասդ դեռ կէս է :*

4. *Ծաղիկները — մենք քաղեցինք ծաղիկները — շատ անուշ կը բուրեն :*

5. *Մարդ մը թող գայ սա բեռը վերցնէ :*

1. *Աստուած Մովսէսին տուաւ տասը պատուէրներ և ան ալ Իսրայէլացիներուն տարաւ զանոնք :*

2. *Ահա երկու պատկեր, ո՞րն է գեղեցիկ, ա՞ս թէ ան :*

3. *Իմ դասս լմնցաւ, քուկինդ դեռ կէս է :*

4. *Ծաղիկները, զորս մենք քաղեցինք, շատ անուշ կը բուրեն :*

5. *Մէկը թող գայ սա բեռը վերցնէ :*

Հրահանգ Բ. — Ընտրեցէք թէ երկրորդ սիւնակին շեղագիր բառերը ի՞նչ տեսակ դերանուն են :

Հրահանգ Գ. — Այս օրինակներուն համեմատ, իւրաքանչիւրն մէյմէկ խօսք շինելով՝ դէմ առ դէմ գրեցէք :

Հրահանգ Դ. — Վերլուծեցէք սա յարաբերականները :

Օրինակ. — *Որով* = Յարաբերական դերանուն, եզակի գործիական :

Որով, որոնց, որմէ, որու, զորս, որոնք, որ, որոնցմէ :

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք :

56. *Ի՞նչ կը ցուցնէ յարաբերական դերանունը եւ ո՞րն է :* 57. *Ի՞նչ է յարաբերեալ : Օրինա՞կ :* 58. *Ի՞նչպէս կը հոլովուի որ բառը :*

ԳԼՈՒԽ Ե.

ԲԱՅ

59. *Բայ կը կոչուի այն բառը որ գործողութիւն կամ վիճակ կը ցուցնէ, այսինքն՝ ընել կամ ըլլալ :*

Օրինակ. — *Հայրս կը գրէ : Արեւը պայծառ է :*

ՏԷՐ ԵՒ ԱՆՏԷՐ ԲԱՅԵՐ

60. *Բայի մը տէրը կամ ենթական է գործողութիւնը կատարող անձը կամ իրը :*

Ինչպէս. Մովսէս կը խաղայ : Հացը կ'ուտուի :

Մովսէս բառը կը խաղայ բային տէրն է. այսինքն՝ Մովսէս է որ խաղալու գործը կը կատարէ : Հացը բառը՝ կ'ուտուի բային ենթական է :

61. *Բայի մը ենթական ճանչնալու համար քովը դնելու է ո՞վ կամ ի՞նչ հարցումը :*

Կը խաղայ. Ո՞վ — Մովսէս : Կ'ուտուի. Ի՞նչը — Հացը :

Դիտելիք. — *Շատ անգամ տէր բային յայտնի չի դրուիր, բայց զօրութեամբ կամ լռելեայն կ'իմացուի, օրինակ. Երեք ժամ անընդհատ խաղեցի (տէր բայի, ես, զօրութեամբ կ'իմացուի :)*

ՀՐԱՀԱՆԳ **53.** — Որոշեցէք *բայն* ու *ենթական* :

Օձը կը սողայ : — Ձուկը կը լողայ : — Տղան կը խաղայ : — Ծոյլը կը կաղայ : — Աւազակները կ'ուզին : — Գլուխս կը ցաւի : — Տերեւները կը դեղնին ու կը թափին : — Մարդիկ կը խորհին ու կը խօսին : — Դուն ո՞վ ես : — Ո՞վ են այս պարոնները : — Ես կ'աշխատիմ. դուք ալ աշխատեցէք : — Աստուած ողորմած է. Ան կը ներէ զղջացողներուն : — Հաւերը կ'ածեն հաւկիթ և մենք կ'ուտենք : — Հաւկիթն ունի ճերմկուց ու դեղնուց : — Դեղնուցն է օգտակար մեր մնունդին համար :

Ա Յ Ծ

Ոչխարին նման խոտակեր կենդանի մ'է այծն ալ։ արուն նոխազ կը կոչուի, մինչև 15 տարի կրնայ ապրիլ։ Աշխոյժ և քմահաճ բնաւորութիւն մ'ունի և կը սիրէ հօտէն զատուիլ, ժայռերու վրայ մագլցելու կամ ըլուրներուն վրայ ելլելու համար։ Խոտ կ'ուտէ, մացառներէն կը կրծէ իր ճաշակին յարմար ծիլեր, ծղօտներ ու տերեւներ։ Այծէն կը ստանանք իր կաթը որ ոչխարին ու կովին կաթէն աւելի օգտակար է, մանաւանդ տղոց և հիւանդներու համար. ասկէ զատ, իր մազը շատ պիտանի է մեզի՝ կերպասներ շինելու համար։ Նշանաւոր է Էնկիւրիի այծը որուն բուրդը կամ մազը կը կոչուի պրոն։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք վերի հատուածն եւ որոշեցէք բայերն ու տեր բայիները։

Հրահանգ Բ. — Նոյն հատուածին մէջ ո՞ր բառերը գոյական են, որո՞նք են ածական եւ որո՞նք դերանուն։

Հրահանգ Գ. — Գտէք սա բառերուն հականիշը։

Աղի, խակ, առողջ, հասուն, գեղեցիկ, բարձր, փափուկ, դիւրին, աջ, զէր, գերի, կանուխ, ուժան, ամբողջ, կուշտ, լայն, մեծ, երկայն, իրաւ, մօտ, ծանր, պաղ, հին, կակուղ, մաքուր, թաց, ծոյլ, ծուռ, բարակ, սեւ, մութ, արտում, պղտոր, բարի, սուտ, կարծր, հարուստ, մանր, հպարտ, բաց։

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

59. Ո՞ր բառեր բայ կը կոչուին. Օրինա՞կ։ 60. Ո՞ր բառեր բայի տեր կամ ենթակայ կը կոչուին. Օրինա՞կ։ 61. Ինչպէս կը ճանչնաս բայիները։

ԲԱՑԻՆ ԽՆԴԻՐԸ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՑԻՉԸ

62. Խնդիր կամ Լրացուցիչ կը կոչուի այն բառը որ բային իմաստը կ'ամբողջացնէ։

63. Երկու տեսակ խնդիր կայ. սեռի խնդիր և բնութեան խնդիր։

1. ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

64. Սեռի խնդիրը կը ցուցնէ անձ կամ իր մը՝ որուն վրայ կը կատարուի բային ցուցուցած գործողութիւնը։

65. Բայի մը սեռի խնդիրը գտնելու համար քովը սա հարցումները դնելու է. զո՞վ (անձերու համար) և ի՞նչ բանը (իրերու համար)։

Օրինակ — Կը պաշտեն Աստուած։ Դուն խաղեցիր վարդը։ Զո՞վ կը պաշտեն = Աստուած։ Դուն ի՞նչը խաղեցիր = վարդը։

ՀՐԱՀԱՆԳ 54. — Գտէք բայերը, ենթակայները եւ սեռի խնդիրները։

Երկրագործը կը մշակէ երկիրը։ — Աստուած պիտի դատէ մեր գործերը։ — Նաւազը վարեց նաւը։ — Լաւ գիրքերը կը զարդարեն միտքն ու կը մշակեն սիրտը։ — Յովսէփ ազատեց Եգիպտոսը սովէ։ — Կիրքերը կը կուրցնեն զքեզ։ — Արեւը կը լուսաւորէ աշխարհ։ — Իմ քոյրս շատ կը սիրէ զիս։ — Տղաք իրենց դասերը կը սերտեն։ — Յուսիկ կը սիրէ իր մեծ աղջիկը։ — Աստուած օրհնեց Աբրահամը։

ՀՐԱՀԱՆԳ 55. — Գիծերուն տեղ սեռի խնդիր դրէք։

Աստուած դրախտէն վռնտեց —։ Մովսէս Եգիպտոսէն հանեց —։ Անձրեւը կը զովացնէ —։ Ակռան կը մանրէ —։ Կատուն կը լրտեսէ —։ Աստուած անիծեց —։ Ձին կը ճանչնայ —։ Շունը կը պահպանէ —։ Հովիւը կ'արածէ —։ Յուդա համբուրելով մատնեց —։ Ս. Մեսրոպ գտաւ —։

Հրահանգ Ա. — Ցարմար *սեռի խնդիրը* դի՛ր կէտերուն տեղ :

ՍԵՌԻ ԽՆԴԻՐ . — *Նաւերը , փողոցները , հունձքերը , մարգագետինը , ամպերը , երկիրը , լեռները , դաշտերը , կերակուրները :*

Դեռը կ'ոռոգէ . . . : — Առուակը կ'արգասաւորէ . . . : — Հովը կը վանէ . . . : — Արեւը կը տաքցնէ . . . : — Կարկուտը կ'աւերչակէ . . . : — Ձիւնը կը պատէ . . . : — Կազը կը լուսաւորէ . . . : — Շոգին կը քալեցնէ . . . : — Կրակը կ'եփէ . . . . :

Հրահանգ Բ. — Օրինակին համեմատ խօսքեր շինեցէք :

ՏԷՐ ԲԱՑԻ . — *Արև , լուսին — ձի , եզ — կով , այծ — հայր , մայր — գետ , առու — սոխակ , խայտիտ :*

ԲԱՑ . — *Երգել , սիրել , ոռոգել , լուսաւորել , տալ , քաշել :*

ՍԵՌԻ ԽՆԴԻՐ . — *Արօր , երգեր , զաւակներ , երկիր , մարգագետին , կաթ :*

Օրինակ . — *Արեւն ու լուսինը կը լուսաւորեն երկիրը :*

Հրահանգ Գ. — Վերլուծեցէք օրինակին պէս :

Յովսէփ կը կարդայ իր համարը : — Ես կը կարդամ դասերս : — Թռչունը որ թռաւ իր բոյնէն : — Միւսները ճամբէ : — Միւս տղան քու եղբայրդ է , իմինս մեծ է :

Օրինակ . — *Կը կարդայ՝ բայ է , ինչու որ գործողութիւն կը նշանակէ : Ո՞վ կը կարդայ : — Յովսէփ : Յովսէփի յատուկ անուն եղակի ուղղական . տէր բայի կը կարդայ բային . իր՝ ստացական ածական , կը վերաբերի համարը բային . համարը հասարակ անուն եղակի հայցական , ը դիմորոշ յօդով :*

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք:

62. *Ի՞նչ է խնդիր կամ շրացուցիչ :* 63. *Քանի՞ տեսակ խնդիր կայ:* 64. *Ի՞նչ է սեռի խնդիրը : Օրինա՞կ :* 65. *Ի՞նչպէս կը գտնուի սեռի խնդիրը : Օրինա՞կ :*

Զ. ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

66. *Բնութեան խնդիրը կ'ըլլայ՝ տրական , բացառական և գործիական հոլով Անուն կամ Դերանուն մը, առանձին՝ կամ մէջ , տակ , վրայ , քով , եւայլն բառերուն հետ :*

Օրինակ . — Երկաթը *մուրճով* կը ծեծուի : Սա գիրքը *քեզի* կը նուիրեմ : Գնա՝ *ծառին տակ* նստ :

67. *Բնութեան խնդիրը կը ճանչցուի սա հարցումներով :*

Անձերու համար	Իրերու համար
Տրակ. *Որո՞ւ , որո՞նց .*	*Ի՞նչ բանի , ի՞նչ բաներու .*
Բաց. *Որմէ՞ , որոնցմէ՞ .*	*Ի՞նչ բանէ , ի՞նչ բաներէ .*
Գործ. *Որո՞վ , որոնցմով .*	*Ի՞նչ բանով , ի՞նչ բաներով :*

Նաև սա *հարցումներով . Ե՞րբ , ո՞ւր , ո՞ւսկից , ինչո՞ւ , ինչի՞ն , ի՞նչպէս , եւայլն :*

ՀՐԱՀԱՆԳ **56.** — Գտէք *բնութեան խնդիրը՝* պատշաճ հարցումով :

Մարդս հնազանդելու է իր խղճի ձայնին : — Դիմադրէ՛ չար միտումներուդ : — Կ'ողբամ այն տղուն վրայ որ կը հնազանդի իր կիրքին : — Մայր մը դիւրաւ կը ներէ իր զաւկին : — Ժիր գործաւորը կարօտ չ'ըլլար չապիկի : — Անձրեւը կը տեղայ երկինքէն :

ՀՐԱՀԱՆԳ **57.** — Շեղագիր բառերը *սեռի՞ թէ բնութեան խնդիր են :*

Բարիք ըրէ մերձաւորներուդ : — Ագահը իր պատիւը կը զոհէ իր շահերուն : — Աստուած կուտայ սնունդ փոքրիկ թռչուններուն: — Նախընտրենք գիտութիւնը հարստութենէն: — Աղջիկը չուան կը մանէր իր սենեակին մէջ : — Պէտք է ներել ուրիշին թերութիւններուն : — Բարեգործութիւնը կը բերէ իր վարձը: — Մովսէս մարգարէ հաստատեց չատ իմաստուն օրէնքներ: — Մենք կրնանք զանազանել որոմը ցորենէն:

ԱՊՈՒՇ ՋԱՂԱՑՊԱՆԸ

Ի՞նչ կ'ըսես, երբ տեսնես ջաղացպան մը որ իր ջաղացքին քարը պարապ կը թողու, ցորեն չի լեցներ, և քարը կը դառնայ, կը դառնայ շարունակ, բայց առանց օգուտ տալու։ — «Ապո՞ւշ ջաղացպան, պիտի ըսես. աւելի աղէկ է որ քարը կոտրես, քան թէ զուր տեղը մտիկ ընես անոր ձայնը»։

Դո՛ւն ալ, ծո՛յլ տղայ, ճիշդ ու ճիշդ աս ջաղացպանին կը նմանիս. մտքիդ բան մը չես տար աղալու։

Հրահանգ Ա. — Գտէք վերի հատուածին մէջ բայերը, տէր բայիները, սեռի խնդիրները, բնութեան խնդիրը։

Հրահանգ Բ. — Օրինակեցէք սա ցուցակը եւ միտ պսպեցէք թէ հական դերանուններն ի՞նչպէս կը գործածուին խօսքի մէջ։

Եզակի

Տէր բայի	Ուղղ.	*ես*	*, դուն*	*, ան*	*ինք*
Ցատկացուցիչ	Սեռ.	*իմ*	*, քու*	*, անոր*	*իրեն*
Սեռի խնդիր	Հայց.	*զիս*	*, քեզ*	*, ան*	*ինք*
Բնութեան խնդիր	Տրակ.	*ինծի*	*, քեզի*	*, անոր*	*իրեն*
	Բաց.	*ինէ*	*, քեզմէ*	*, անկէ*	*իրմէ*
	Գործ.	*ինձմով*	*, քեզմով*	*, անով*	*իրմով*

Յոգնակի

Տէր բայի	Ուղղ.	*մենք*	*, դուք*	*, անոնք*	*, իրենք*
Ցատկաց.	Սեռ.	*մեր*	*, ձեր*	*, անոնց*	*, իրենց*
Սեռի. խն.	Հայց.	*մեզ*	*, ձեզ*	*, զանոնք*	*, զիրենք*
Բնութ. խն.	Տրակ.	*մեզի*	*, ձեզի*	*, անոնց*	*, իրենց*
	Բաց.	*մեզմէ*	*, ձեզմէ*	*, անոնցմէ*	*, իրենցմէ*
	Գործ.	*մեզմով*	*, ձեզմով*	*, անոնցմով*	*, իրենցմով*

Հրահանգ Գ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

66. *Ո՞ր բառեր բնութեան խնդիր կ'ըլլան եւ ի՞նչ հոլով, մէյմէկ օրինակ տուր։* 67. *Ի՞նչպէս կը ճանչցուի բնութեան խնդիրը։ Օրինա՞կ։*

ԲԱՑԻՆ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐԸ

68. *Բայը կը փոխուի դէմքին, թիւին, ժամանակին և եղանակին համեմատ։*

69. ԴԷՄՔ. — *Բայն ալ դերանուններուն պէս երեք դէմք ունի։ Ես (խօսողը), դուն (մտիկ ընողը), ան (բացակայ մէկը)։*

70. ԹԻՒ — *Գործ մ'ընողը կրնայ մէկ հոգի կամ մէկէ աւելի ըլլալ, անոր համեմատ բայն ալ եզակի կը դրուի կամ յոգնակի։*

71. ԺԱՄԱՆԱԿԸ *երեք է. ներկայ, անցեալ, ապառնի։*

Ա. *Բայը ներկայ ժամանակ կը ցուցնէ, երբ գործը կը կատարուի հիմա։* Օրինակ. *Կը կարդամ (հիմա)։*

Բ. *Բայը անցեալ ժամանակ կը ցուցնէ երբ գործը կատարուած է առաջ։* Օրինակ. *Կարդացի (առաջ)։*

Գ. *Բայը ապառնի ժամանակ կը ցուցնէ երբ գործը պիտի կատարուի վերջը։* Օրինակ. *Պիտի կարդամ (վերջը)։*

72. ԵՂԱՆԱԿ *կը նշանակէ ձեւ, կերպ, և կը ցուցնէ թէ գործ մը ի՞նչպէս կը կատարուի։*

Եղանակը վեց է. Սահմանական, Հրամայական, Ստորադասական, Անորոշ եւ Ընդունելութիւն (կամ Դերբայ)։

ՀՐԱՀԱՆԳ **58.** — *Որոշեցէք բայերուն դէմքը, թիւը եւ ժամանակը։*

Կ'երգեմ, պիտի երգեմ, կ'ուզենք, պիտի նստիք, կ'երթայ, կ'առնեն, թողուցիք, մեռան, պիտի մեռնինք, գրեցի, կը գրենք, պատժուեցաւ, պիտի քաղէ, գրէ՛, պիտի երթաս, երգէ՛, կը խաղային, մեռաւ, կերէք, խածաւ, կը հաչէր, կու գար, պիտի խօսինք։

ՀՐԱՀԱՆԳ **59.** — *Նոյն բառերուն սկիզբը ենթակայ մը (դերանուն կամ անուն) եւ խնդիրներ դնելով՝ խօսքն ամբողջացուցէք։*

Ո՞Վ ԳՏԱՒ ԱՄԵՐԻԿԱՆ

Փոքրիկ Մովսէս՝ քրոջը Ատրինէին հետ կը խաղար։ Շատ կը զուարճանային և շատ ալ աղմուկ կը հանէին։ Իրենց դաստիարակը, որ մօտակայ սենեակը կը գտնուէր, յանկարծ հարցուց անոնց։

« Տղա՛ք, ո՞վ գտաւ Ամերիկան »։

Մովսէս՝ կարծելով որ կը հարցնէ թէ « ո՞վ է աղմուկ հանողը՝ » իսկոյն պատասխանեց։

« Ճշմարիտ կ'ըսեմ, պատուե՛լի, քո՞յրս էր, ես չէի։ »

Հրահանգ Ա. — Օրինակեցէք եւ որոշեցէք բայերուն դէմքը, թիւը, ժամանակը։

Հրահանգ Բ. — Նոյն հատուածը Սահմանական եղանակ, ներկայ ժամանակ, եզակի Գ. դէմքի վերածեցէք այսպէս. — Փոքրիկ Մովսէս, քրոջը՝ Ատրինէին հետ կը խաղայ։ Շատ կը զուարճանան, և այլն։

Հրահանգ Գ. — Վերլուծեցէք սա խօսքերը։

Յակոբիկ գանգատեցաւ դասատուին. — Աղաւնիին քոյրը ինկաւ. — Քերականութեան կանոնները կը սորվիմ և հրահանգները կը գրեմ. — Դուն ի՞նչ կ'ուտես. — Փառք տանք Աստուծոյ որ մեզ ստեղծեց։

Օրինակ. — *Գանգատեցաւ՝ բայ. — Ո՞վ գանգատեցաւ՝ Յակոբիկ, յատուկ անուն եզակի ուղղական։ Յակոբիկ գանգատեցաւ. — Որո՞ւ. դասատուին. հասարակ անուն եզակի տրական, և դիմորոշ յօդով. բնութեան խնդիր է գանգատեցաւ բային։*

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

68. Ի՞նչ փոփոխութիւններ կը կրէ բայը։ 69. Ի՞նչ է դէմքը։ Օրինա՞կ։ 70. Ի՞նչ է թիւը։ Օրինա՞կ։ 71. Ի՞նչ է ժամանակը եւ քանի՞։ Բայը ի՞նչ ներկայ ժամանակ կը ցուցնէ, ե՞րբ անցեալ, ե՞րբ ապառնի. տո՛ւր օրինակներ։ 72. Ի՞նչ է եղանակը եւ քանի՞։

ԱՐՄԱՏ ԵՒ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆ

73. *Բայը կը բաղկանայ երկու մասէ. Արմատ և վերջաւորութիւն։*

74. *Արմատն է բային այն մասը որ կուտայ որոշ իմաստ և սովորաբար անփոփոխ կը մնայ։*

75. *Վերջաւորութիւնը կը փոխուի՝ դէմքին, թիւին, ժամանակին և եղանակին համեմատ։*

Օրինակ. — *գործ եցի — գործ եցէք, և այլն։*

ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

76. *Բայը խոնարհել՝ կը նշանակէ նոյն բային բոլոր ձեւերը գրել կամ ըսել։*

77. *Բայերը խոնարհելու երեք ձև կայ որոնք կը կոչուին Լծորդութիւն։*

Ա. Լծ. կը վերջաւորի *ել* եւ *նել*՝ (*սիրել*, *տեսնել*)
Բ. » » » *իլ* » *նիլ*՝ (*խօսիլ*, *հագնիլ*)
Գ. » » » *ալ* » *նալ*՝ (*կարդալ*, *գողնալ*)

78. *Կանոնաւոր են այն բայերը որ այս երեք Լծորդութիւններուն պէս կը խոնարհին։*

79. *Անկանոն կամ Զարտուղի կը կոչուի բայը երբ այս տիպար-օրինակներէն կը տարբերի։*

ՀՐԱՀԱՆԳ **60.** — 1. *Ի՞նչ կ'ընէ վարժապետը, մշակը, դերձակը, դարբինը, դահիճը, առաքինաբոյժը, պատկերահանը, հիւսնը, պայտարը, սափրիչը։*

2. *Գառնը կը մայէ, իսկ կո՞վը, ձի՞ն, է՞շը, շո՞ւնը, կատո՞ւն, սոխա՞կը, կաքա՞ւը, առլո՞ւծը, օ՞ձը, մեղո՞ւն, հա՞ւը (գտէք ասոնց ձայները)։*

Հրահանգ Ա. — Եզակիի վերածելով՝ usnրագծեցէք տէր բային :

Ձիերը կը վրնջեն կամ կը խխնջեն։ — Էշերը կը զռան։ — Եզները կը պոռոչան։ — Կովերը կը բառաչեն։ — Ոչխարները կը մայեն։ — Շուները կը հաչեն։ — Վագրերը կը խռնչեն։ — Տատրակները կը գուրգուրան։ — Կատուները կը մլաւեն կամ կը նուան։ — Խոզերը կը խանչեն։ — Հաւերը կը կրկռան։ — Վառեակները կը կոկոան։ — Կաքաւները կը կարկչեն։ — Աղաւնիները կը մնչեն։ — Ճնճղուկները կը ճլուրլան։ — Ծիծեռնակները կը ճռուողեն։ — Սոխակները կը դայլայլեն։ — Անծեղները կը կարկաչեն։ — Ագռաւները կը կռնչեն։ — Գորտերը կը կռկռան։ — Կոկորդիլոսները կ'աչխարեն։ — Լակոտները կը թնծկան։ — Սագերը կը ռնգեն։ — Աղուէսները կը կաղկանձեն։ — Լորերը կը կայկայեն։ — Եզնիկները կը բբան։ — Եղջերուները կը գոչեն։ — Գայլերը կ'ոռնան։—Առիւծները կը մռնչեն։ — Օձերը կը սուլեն կամ կը չչեն։ — Սիրամարգները կը ճչեն։ — Ճանճերը կը բզզան։ — Փիղերը կը գոչեն։ — Ճպուռները կը ճռճռան։ — Արծիւները կը կռռաչեն։ — Արջերը կը մրմռան։ — Արտոյտները կը զեղգեղեն։ — Արագիլները կը կափկափեն։ — Բուերը կը կ'աղաղակեն։ — Եղնորթները կը խորդան։ — Թութակները կը խօսին։ — Մուկերը կը ճռան։

Հրահանգ Բ. — Գտէք սա բառերուն համանիշը :

Պարգեւել, զրուցել, յայտնել, ամուսնանալ, կցել, ուչխել, ջախել, փչրել, յափշտակել, սատնալ, կամիլ, շարժել, հանդարտել, մերձենալ, սպառիլ, զատել, պահանջել, թուել, գարչիլ, ծիծաղիլ, վախճանիլ, պարզել, շողշողալ, ճմլել, թարշամիլ, նուազիլ, սթափիլ, արտասուել, խոնարհիլ :

Հրահանգ Գ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք:

73. Բայը քանի՞ մասի կը բաղկանայ : 74. Ի՞նչ է արմատը : 75. Ի՞նչ է վերջաւորութիւնը : Օրինա՞կ : 76. Ի՞նչ է բայ խոնարհելը : 77. Բայ խոնարհելու քանի՞ ձեւ կայ, որո՞նք են : 78. Ո՞ր բայեր կանոնաւոր են : 79. Ե՞րբ անկանոն կամ զարտուղի է բայ մը :

ԷԱԿԱՆ ԲԱՑ

80. *Էական կամ Օժանդակ կը կոչուի եմ (ըլլալ) բայը որ ուրիշ բայերու կազմութեան կ'օժանդակէ, և կը խոնարհի այսպէս.*

	ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ	Ապառնի	ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
	Ներկայ	պիտի ըլլամ » ըլլաս	Ներկ. եւ Ապառ.
Ցոլնակի եզակի	Ա. դեմ եմ	» ըլլայ	ըլլամ
	Բ. » ես	» ըլլանք	ըլլաս
	Գ. » է	» ըլլաք	ըլլայ
	Ա. » ենք	» ըլլան	ըլլանք
	Բ. » էք	Ապառ. Անկատար	ըլլաք
	Գ. » են		ըլլան
	Անկատար	պիտի ըլլայի » ըլլայիր	Անկատար
Ցոլնակի եզակի	էի	» ըլլար	ըլլայի
	էիր	» ըլլայինք	ըլլայիր
	էր	» ըլլայիք	ըլլար
	էինք	» ըլլային	ըլլայինք
	էիք	ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ	ըլլայիք
	էին		ըլլային
	Կատարեալ	Ներկ. եւ Ապառ.	ԱՆԵՐԵՒՈՅԹ
Ցոլնակի եզակի	եղայ	Եզակի	ըլլալ
	եղար	Բ. դեմ եղիր	ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
	եղաւ	Ցոլնակի	Ներկայ՝ եղող
	եղանք	Ա. դեմ ըլլանք	Անցեալ՝ եղած
	եղաք	Բ. » եղէ՛ք	Ապառնի՝ ըլլալու
	եղան		

ՀՐԱՀԱՆԳ 81. Էական բային հետ խոնարհեցէք սա բառերը. Աշակերտ, զինուոր, խելօք, խոնարհ, բժիշկ :

Հրահանգ Ա. — Շեղագիր բառերը փոխելով՝ համանիշը դրէք :

1. Պարապ գործաւորը ապրուստի անձկութիւն կը կրէ :
2. Պարապ գործաւորը ապրուստի անձկութիւն կը կրէ :
3. Պարապ գործաւորը ապրուստի անձկութիւն կը կրէ :
4. Պարապ գործաւորը ապրուստի անձկութիւն կը կրէ :
5. Պարապ գործաւորը ապրուստի անձկութիւն կը կրէ :

ՀՈՄԱՆԻՇՆԵՐՆ ԵՆ . — Դատարկապորտ , բանւոր , սընունդ , նեղութիւն , կը քաշէ :

Հրահանգ Բ. — Գտէք սա բառերուն հականիշը :

Օրհնել , ատել , հրամայել , առնել , մերժել , պարտիլ , ծնիլ, միանալ, կանխել , հանել , դադրիլ , մոռնալ , կործանել , հեռանալ , գոհացնել , դանդաղիլ , շռայլել, գումարել, շեղիլ , հետեւիլ , աւելնալ , կորսնցնել , ամփոփել, անոսրանալ, փթթիլ, սթափիլ , արտասուել , պակսիլ , խօսիլ :

Հրահանգ Գ. — Կտեղուն տեղ յարմար տէր բային դրէք :

. . . կը քաշէ կառքը : — . . . կը հերկէ արտը : — . . . կը պահպանէ հօտը : — . . . կուտայ կաթ : — . . . կուտայ բուրդ : — . . . կ'ածէ հաւկիթ : — . . . կ'արտադրէ մեղր : — . . . կը բռնէ մուկերը : — . . . կ'ուտէ խայծը և կը կառչի կարթին : — . . . կը կրծէ թթենիին տերեւը : — . . . կը չինէ իր բոյնը : — . . . կը փորէ հողը : — . . . կ'ապրի իր պատեանին մէջ : — . . . կը թռչտի ծաղիկներուն վրայ :

Հրահանգ Դ. — Վերլուծեցէք սա եակաև բայերը :

Եղաւ , եղի՛ր , ըլլալու , ըլլանք , պիտի ըլլամ , է , պիտի ըլլայ , եղան , եմ , էիք , պիտի ըլլաս , եղող :

Օրինակ . — Եղաւ՝ էական բայ , սահմանական եղանակ, կատարեալ ժամանակ , եզակի երրորդ դէմք :

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք:

80. Էական կամ օժանդակ բայը ո՞րն է եւ ի՞նչպէս կը խոնարհի:

ՍՏՈՐՈԳԵԼԻ

81. *Ստորոգեալի կը կոչուի այն բառը որ ենթակային որպիսութիւնը կամ վիճակը կը ցուցնէ :*

Օրինակ.— Աստուած արդար է: Օդը ցուրտ պիտի ըլլայ:

Գիտելիք Ա. — Ստորոգելին կրնայ յոգնական դրուիլ :

Օրինակ . — Այս մարդիկ մեր բարեկամներն են :

Գիտելիք Բ. — Ստորոգելի կրնան ըլլալ գոյականն ու ածականը (ինչպէս վերի օրինակներուն մէջ) :

ՀՐԱՀԱՆԳ **62.** — Որոնեցէք ստորոգեալները :

Առիւծը կենդանիներուն գլխաւորն է : — Այս չէնքն ընդարձակ էր՝ բայց հին : — Մարգագետինը կանաչ է : — Պէտք է հնազանդ ըլլանք մեր ծնողքներուն : — Ջրհորը խոր է : — Ո՞րչափ մօտ է աս ճամբան : — Դուք իմ ընկերս էք : — Այս տարի բերքերն առատ պիտի ըլլան , անցեալ տարի սակաւ և սուղ էին : — Ե՞րբ ձեր պիտի ըլլանք : — Հաճելի չեմ ձեզի : — Աղէկ եղաւ : — Սա տղաքը ձեր աշակերտներն են :

ՀՐԱՀԱՆԳ **63.** — Գիծերուն տեղ ստորոգելի մը դիր :

Աստուած — է : Երկինքը — է : Խոտը — է : Նարինջը — է : Պնակներն — են : Ծծումբը — է : Կաթը — է : Մոլորակները — են : Լեղակը — է : Ապակին — է : Աշակերտները — են : Ծառերը — էին : Սկաւառակն ու անիւը — են : Օդը — եղաւ : Մենք — էինք : Դուք — պիտի ըլլաք: Տղա՛ս , մի ըլլար — : — պիտի ըլլամ : Մենք — ենք : Արեգակը — է : Ազոխն ու կիտրոնը — են : Անոնք — պիտի ըլլային: Տղաք թող — ըլլան իրենց ծնողքին: Բարեկամներն — ըլլալու են : Յիսուս եղաւ — աշխարհի :

ՀՐԱՀԱՆԳ **64.** — Իբր ստորոգելի գործածեցէք մէկ մէկ խօսքի մէջ :

Հանդարտ , մաքուր , քաջ , կարճ , չոր , թաց , խոհեմ , բարձր , հովիւ , քոյր , չէնք :

ԱՌԻԻԾ

Առիւծը կատուի յեղին կը պատկանի և, վագրին պէս, մսակեր կենդանիներուն ամէնէն զօրաւորն ու սոսկային է։ Մինչև երեսուն քառասուն տարի կ'ապրի և շատ ՁԼաս կը հասցնէ ոչխարներուն։ Դիշերը միայն իր որջէն կ'ելլէ և քիչ անգամ կը յարձակի մարդուն վրայ։ Երբ որսորդներէն վիրաւորուի, այն ատեն ցոյց կուտայ ծայրայեղ վայրագութիւն։ Առիւծը զօրաւոր ու վեհանձն է, և կը կոչուի կենդանիներու դիւրաւորը։ Կերպարանքը շատ փառաւոր է, բայց բարկացած ժամանակ սոսկալի տեսք ունի։ Առիւծին ձագը կը կոչուի կորիւն։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք այս հատուածը, որոշելով բայերը, տեր բայիները եւ ստորոգելիները։

Հրահանգ Բ. — Վերլուծեցէք սա խօսքերը։

Այս աղնիւ անձերը մեր ուսուցիչներն են։ — Խոսրով կնքահայր եղաւ։ — Անոնք երկու տարի առաջ ողջ էին։ — Այս տարուան հունձքերը առատ պիտի ըլլան։

Հրահանգ Գ. — Օրինակին համեմատ խօսքեր շինեցէք եւ որոշեցէք բառերուն պատշաճը։

Օրինակ. — *Մելանին (յատկացուցիչ), գոյնը (տեր բայի), կապոյտ (ստորոգելի), է (բայ)։*

ՏԵՐ ԲԱՅԻ. — *Դրիգորին մազերը, արծիւին կատուը, Մաննիկին ասեղը, պարտէզին ծառերը, հաւկիթին դեղնուցը։*

ՍՏՈՐՈԳԵԼԻ. — *Խարտեաշ, կոր, սուր, խիտ, յարգի։*

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

81. *Ինչ է ստորոգելի, ինչ բիւրով կը գործածուի։ Ո՞ր տեսակ բառեր ստորոգելի կրնան ըլլալ։*

82. Առաջին լծորդութիւն (*) — Ել

ՍԻՐԵԼ — արմատ՝ սէր

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ	Ապառնի	ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Ներկայ	*Պիտի սիր եմ*	Ներկ. եւ Ապառ.
Կը սիր եմ	» *սիր ես*	*սիր եմ*
» *սիր ես*	» *սիր է*	*սիր ես*
» *սիր է*	» *սիր ենք*	*սիր է*
» *սիր ենք*	» *սիր էք*	*սիր ենք*
» *սիր էք*	» *սիր են*	*սիր էք*
» *սիր են*	Ապառնի անկատար	*սիր են*
Անկատար	*Պիտի սիր էի*	Անկատար
Կը սիր էի	» *սիր էիր*	*սիր էի*
» *սիր էիր*	» *սիր էր*	*սիր էիր*
» *սիր էր*	» *սիր էինք*	*սիր էր*
» *սիր էինք*	» *սիր էիք*	*սիր էինք*
» *սիր էիք*	» *սիր էին*	*սիր էիք*
» *սիր էին*	ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ	*սիր էին*
Կատարեալ	Ներկ. եւ Ապառնի	ԱՆԵՐԵՒՈՅԹ
սիր եցի	Եզակի	Ներկ. եւ Ապառ.
սիր եցիր	*Բ. դէմք սիր է՛*	*սիր էլ*
սիր եց	Յոգնակի	ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
սիր եցինք	*Ա. դէմք սիր է՛նք*	Ներկայ՝ *սիր էլ*
սիր եցիք	*Բ. » սիր եցէ՛ք*	Անցեալ՝ *սիր ած*
սիր եցին		Ապառնի՝ *սիրելու*

ՀՐԱՀԱՆԳ 65. Խոնարհեցէք. *Գրել, շինել, պատմել, կարել, հանել, մխել, չարել, թրել, գործել։*

(*) *Այս լծորդութենէն բայեր գտէք և գրեցէք ձեր տետրին մէջ։*

ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ

Թարմ ու մաքուր օդը պիտանի է կեանքի և առողջութեան՝ ինչպէս լաւ սնունդը։

Իրօք՝ օդը սնունդ է, և առանց անոր, մեր կերածն ու խմածը անօգուտ պիտի ըլլային մեր մարմինին։ Մեր ծծած օդին մէջ թթուածին կայ, որ՝ արիւնին մէջ գտնուող ածխածին անուն կազին հետ միանալով՝ մեր սնունդին տաքութիւն կուտայ և մեր մարմինը կը սընուցանէ։ Այէն անգամ որ շունչ կ'առնենք, մեր թոքերը թթուածին կ'ընդունին օդէն, իսկ երբ շունչ կուտանք՝ մեր թոքերը թթուածինի տեղ ածխային թթու դուրս կը հանեն։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք եւ usnrոգելիներուն տակ գիծ մը քաշեցէք։

Հրահանգ Բ. — Նոյն հատուածին մէջ ո՞ր բառեր գոյական են, ի՞նչ հոլով եւ ի՞նչ թիւ։

Հրահանգ Գ. — Վերլուծեցէք սա բայերը։

Օրինակ. — *Փնտռեցի՝ բայ Ա. լծորդութեան, Սահմանական եղանակ, կատարեալ ժամ. եզակի Ա. դէմք՝ անորոշ ոյժին է փնտռել։*

Աղօթեցի, պիտի սիրէք, կարէ՛, չարեց, կը պատմեմ։

Հրահանգ Դ. — Սա բառերուն կցէ իմաստին յարմար բայ մը։

Աշնիւ ծերունին, յանցաւոր աշակերտները, մաքուր օդը, ագահ մարդը, ժիր երկրագործը, ծոյլ տղաները, արդարասէր դատաւորը, ճշմարիտ բարեկամը։

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

82. *Ո՞րն է Առաջին Լծորդութեան տիպարը։ Օրինա՞կ։*

83. Երկրորդ լծորդութիւն (*) — Իլ

ԽՕՍԻԼ — *արմատ՝ խօս*

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ	Ապառնի	ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Ներկայ	*Պիտի խօս իմ*	Ներկ. եւ Ապառ.
Կը խօս իմ	» *խօս իս*	*խօս իմ*
» *խօս իս*	» *խօս ի*	*խօս իս*
» *խօս ի*	» *խօս ինք*	*խօս ի*
» *խօս ինք*	» *խօս իք*	*խօս ինք*
» *խօս իք*	» *խօս ին*	*խօս իք*
» *խօս ին*	Ապառնի անկատար	*խօս ին*
Անկատար	*Պիտի խօս էի*	Անկատար
Կը խօս էի	» *խօս էիր*	*խօս էի*
» *խօս էիր*	» *խօս էր*	*խօս էիր*
» *խօս էր*	» *խօս էինք*	*խօս էր*
» *խօս էինք*	» *խօս էիք*	*խօս էինք*
» *խօս էիք*	» *խօս էին*	*խօս էիք*
» *խօս էին*	ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ	*խօս էին*
Կատարեալ	Ներկայ եւ Ապառնի	ԱՆԵՐԵՒՈՅԹ
խօս եցայ	*Եզակի*	Ներկ. եւ Ապառ.
խօս եցար	*Բ. դէմք խօս է՛*	*խօս իլ*
խօս եցաւ	*Յոգնակի*	ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
խօս եցանք	*Ա. դէմք խօս ի՛նք*	*Ներկայ՝ խօս ող*
խօս եցաք	*Բ.* » *խօս եցէ՛ք*	*Անցեալ՝ խօս ած*
խօս եցան		*Ապառնի՝ խօսելու*

ՀՐԱՇԱՆԳ **66.** Խոնարհեցէք. *Փայլիլ, աշխատիլ, բնակիլ, յոգնիլ, նայիլ, բուռնիլ, հաւնիլ, մաշիլ։*

(*) *Այս լծորդութեան բայերէն գտէք և գրեցէք ձեր տետրին մէջ։*

Հրահանգ Ա. — Շեղագիր բառերուն տեղ համանիշները դրեք : (Ծանօթ. — Համանիշները հրահանգին մէջ են) :

1. Բարի ծառան հաւատարիմ է իր տիրոջը : 2. Աղէկ ապաստարան մը անշուշտ հաւատարմութեամբ կը կատարէ իր տիրոջ գործերը : 3. Թերութիւններդ ուղղել չանալու ես : 4. Պէտք է աշխատիս պակասութեան մէջ չգտնուիլ : 5. Արդիւնքէն կը ճանչցուի արհեստաւորի մը ճարտարութիւնը : 6. Վարպետ գործաւոր մը միշտ կրնայ գործել : 7. Ամ տղաքը իրենց տետրակները կը բզքտեն պէտք է որ պատուած հագուստով դպրոց գան :

Հրահանգ Բ. — Օրինակին նման խօսքեր շինեցէք :

ՏԷՐ ԲԱՑԻ . — Շունն , արև , անձրև , փայտահար , հօրեղբայր , աշակերտ , քահանայ :

ԲԱՑ . — Կը տաքցնէ , կը պահպանէ , կը սիրէ , կը կարէ , կ'ուռոգէ , կ'ուսանի , կը կարդայ :

ՍԵՌԻ ԽՆԴԻՐ . — Այծեր , ոչխարներ . — մարդեր , կենդանիներ . — դաշտ , մարգագետին . — կաղնի , փեկոն . — եղբօրորդի , եղբօրդուստր . — քերականութիւն , թուաբանութիւն . — չարական , աւետարան :

Օրինակ . — Շունը կը պահպանէ այծերն ու ոչխարները :

Հրահանգ Գ. — Սա խօսքերուն կցէ՛ յարմար խնդիր մը (սեռի կամ բնութեան խնդիր) :

1. Աղնիւ ծերունին կը բնակի : 2. Ցանցաւոր աշակերտները կայնեցան : 3. Մաքուր օդը կը նպաստէ : 4. Ագահ մարդը կը գտնէ : 5. Ժիր երկրագործը կարօտ չ'ըլլար : 6. Ծոյլ տղաք կը զբաղին : 7. Արդարասէր դատաւորը կը գործադրէ : 8. Ճշմարիտ բարեկամը կը հասնի :

Հրահանգ Դ. — Վերլուծեցէք սա բայերը :

Կը խօսէին , կը բնակէինք , յոգնեցայ , մի՛ մաշիր , ըլլայ , կտրած , լուացող :

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք :

83. Ո՞րն է Բ. յծորդութեան տիպարը : Օրինակներ :

84. Երրորդ լծորդութիւն (*) — Ա.Լ.

ԿԱՐԴԱԼ — արմատ՝ կարդ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ	Ապառնի	ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Ներկայ	Պիտի կարդ ամ	Ներկ. եւ Ապառ.
Կը կարդ ամ	» կարդ աս	կարդ ամ
» կարդ աս	» կարդ այ	կարդ աս
» կարդ այ	» կարդ անք	կարդ այ
» կարդ անք	» կարդ աք	կարդ անք
» կարդ աք	» կարդ ան	կարդ աք
» կարդ ան	Ապառնի անկատար	կարդ ան
Անկատար	Պիտի կարդ այի	Անկատար
Կը կարդ այի	» կարդ այիր	կարդ այի
» կարդ այիր	» կարդ ար	կարդ այիր
» կարդ ար	» կարդ այինք	կարդ ար
» կարդ այինք	» կարդ այիք	կարդ այինք
» կարդ այիք	» կարդ ային	կարդ այիք
» կարդ ային	ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ	կարդ ային
Կատարեալ	Ներկայ եւ Ապառնի	ԱՆԵՐԵՒՈՅԹ
կարդ ացի	Եզակի	Ներկ. եւ Ապառ.
կարդ ացիր	Բ. դեմք կարդ ա՛	կարդ աշ
կարդ աց	Յոգնակի	ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ
կարդ ացինք	Ա. դեմք կարդ ա՛նք	Ներկ. կարդ ացող
կարդ ացիք	Բ. » կարդ ա՛ցէք	Անց. կարդ ացած
կարդ ացին		Ապր. կարդ աշու

ՀՐԱՀԱՆԳ 67. Խոնարհեցէք . Լողալ , դողալ , շողալ , կաղալ , աղալ , հաղալ , փնդռտալ , պժգալ , գոռալ :

(*) Այ վերջաւորող բայեր գտէք և գրեցէք ձեր տետրակին մէջ :

Հրահանգ Ա. — Եղակիի վերածեցէք :

Երկաթները կը չկահեն. — Ջուրի մէջ ինկած մարմինները կը ճողփեն. — Անիւները կը ճռնչեն. — Բիրերը կը խօշեն. — Դեռերը կը խոխոջեն. — Տերեւները կը խարշափեն կամ կը սոսաւեն. — Խարտոցները կը խռնտեն. — Ծղխնիները կը ճռնչեն. — Թմբուկները կը գոռան. — Հոգեվարքը կը հռնտայ. — Ժայռերը կ'արձագանգեն. — Բոցերը կը ճարճատեն. — Անձրեւները կը չառաչեն. — Ամպերը կը գոռան. — Ջանգակները կը ղօղանջեն. — Ոտքերը կը դոփեն. — Ձիերը կը դափրեն. — Առուակները կը կարկաչեն. — Անտառները կը խարշափեն. — Սրտերը կը տրոփեն. — Հողմերը կը սուլեն. — Ձեռքերը կը ծափահարեն. — Վտակները կը մրմնջեն. — Վիհերը կը դղրդին. — Անձաւները կը վանգեն. — Ականջները կը դռնչեն :

Հրահանգ Բ. — Կեսերուն տեղ յարմար տեր բային դրէք :

ՏԷՐ ԲԱՅԻՆԵՐ. — Դինին, ձուկ, ջուր, կոչնական, խոնարարութիւն, ճաշ, սպասները, փայտ, ապուր, միս, հաց, աղանդեր, աղ :

1. . . . կ'այրի վառարանին կամ ծխանին մէջ : 2. . . . կ'եռայ խալկինին մէջ : 3. . . . կը տապկուի տապակին մէջ : 4. . . . կը խորովուի շամփուրով : 5. . . . կ'եփի փուռին մէջ : 6. . . . կը սակէ բանջարեղէնը : 7. . . . համ կուտայ կերակուրներուն : 8. . . . սեղանին վրայ չարուած են : 9. . . . չիշին մէջ է : 10. . . . լեցուած է պնակներուն մէջ : 11. . . . եկած են : 12. . . . կերակուրէն վերջը կ'ուտուի : 13. . . . պատրաստ է :

Հրահանգ Գ. — Վերլուծեցէք սա բայերը :

Կը լողամ, կը կարդայիս, դողաց, պիտի աղայ, կարդա՛ :

Օրինակ. — Կը լողամ, բայ Գ. յծորդութեան, սահմանական եղանակ, ներկայ ժամանակ, եղակի թիւ, առաջին դէմք : Տէր բային, ես, զօրութեամբ իմացուած :

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք :

84. Ո՞րն է Գ. յծորդութեան տիպարը : Օրինա՞կ :

ԲԱՑԵՐՈՒՆ ՎՐԱՑ ԳԻՏԵԼԻՔ

86. Այն բայերը որ արմատին վերջի ծայրը և ունին, արմատական ժամանակներուն՝ այսինքն կատարեալին, հրամայականին և անցեալ ընդունելութեան մէջ նախորդ օրինակներէն կը տարբերին, այսպէս.

Կատարեալ

Մտայ, մտար, մտաւ, մտանք, մտաք, մտան.
Հագայ, հագար, հագաւ, հագանք, հագաք, հագան.

Հրամայական

Մտի՛ր, մտնե՛նք, մտէ՛ք.
Հագի՛ր, հագնի՛նք, հագէ՛ք.

Անցեալ ընդունելութիւն

Մտած, հագած :

Ասոնց կը հետեւին սկսիլ, պրծիլ, փրթիլ, նստիլ : Միայն հրամայականի մէջ սկսէ՛, պրծէ՛, փրթէ՛, նստէ՛ կ'ըլլան :

87. Նոյնպէս, չիլ վերջաւորող բայերէն շատը ասոնց կը հետեւին՝ կատարեալին, հրամայականին և անցեալ ընդունելութեան մէջ կորսնցնելով չ գիրը :

Ինչպէս. փախչիլ՝ փախայ, փախի՛ր, փախած :

88. Բառնալ, դառնալ և ասոնցմէ կազմուած բայերը այս կանոնին ենթակայ են, միայն թէ ոն գիրերը ռն ի կը փոխեն արմատական ժամանակներուն մէջ :

Օրինակ. — Դարձայ, դարձի՛ր, դարձած :

ՀՐԱՀԱՆԳ **68.** — Խոնարհեցէք :

1. Տեսնել, մտնել, իջնել, գտնել :
   Հասնիլ, հագնիլ, մեռնիլ, անցնիլ, բուսնիլ :
   Գողնալ, գիտնալ, կենալ, ունենալ :
2. Փախչիլ, թռչիլ, դպչիլ, փչիլ, կպչիլ :
3. Բառնալ, դառնալ, ամբառնալ, վերադառնալ :

Հրահանգ Ա. — Գտէք արմատական ժամանակները :

Խրտչիլ , կառչիլ , արտմիլ , փակչիլ , կպչիլ , դպչիլ , փչիլ , թռչիլ , թրջիլ , թրջել , տրանջալ , փախչիլ , պրծիլ , փրթիլ , սկսիլ , իյնալ (ինկայ , եւայն) , ծնանիլ , հագնիլ , հանիլ , բուանիլ , անցնիլ , մեռնիլ , տեսնել , մտնել , հատնիլ , գտնել , լիջնել , հեծնել :

Հրահանգ Բ. — Շեղագիր բայերը կատարեալի փոխեցէք:

ՈՐԹՆ ՈՒ ԵՂԷԳԸ

Որթատունկ մը կը տրտնջայ թէ ինչո՞ւ աւազատ ու անջրդի տեղ մը կը տնկուի , մինչդեռ անպէտ եղէգը առուին եղերքը կը բուսնի : Անծանօթ ձայն մը պատասխանելով՝ կ'ըսէ . « փափուկ եղէգը կը գօսանայ , և կը կորսուի , իսկ քու կլորիկ պտուղներդ կ'արտադրեն համեղ հիւթ մը որ խնարէ խրճիթներու մէջ մխիթարութիւն և ճոխ պալատներու մէջ բերկրանք կը ստեղծեն :

Հրահանգ Գ. — Նոյնը անկատար ըրէք :

Հրահանգ Դ. — Նոյնը ապառնի ըրէք :

Հրահանգ Ե. — Նոյնը սահմանական ներկայ ըրէք՝ ժըխտական ձեւով :

Հրահանգ Զ. — Սահմաններուն համապատասխանող բառը դրէք : (էջ 52 , Հրահանգ Ա.) :

1. *Շէնքի մը այն մասն ուսկից կը մտնենք և կ'ելլենք :*
2. *Գործիք մը որով հիւսնը փայտ կը յղկէ :*
3. *Երկայն երկաթ մը որով կը զարդարուին :*
4. *Ոչխարներու և արջառներու խումբ մը :*
5. *Քիթին ազդող (ներգործող) զգայութիւնը :*

Հրահանգ Է. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք:

86. *Ի՞նչ կ'ըլլան արմատին ծայրը և ունեցող բայերը : Օրինա՞կ : Ո՞ր ժամանակներ արմատական են:* 87. *Ի՞նչպէս կ'ըլլան չիլ վերջաւորող բայերուն շատը : Օրինա՞կ :* 88. *Ուրիշ ո՞ր բայեր ասոնց կը հետեւին : Օրինա՞կ :*

89. *Ցնել վերջաւորող բայեր՝ ինչպէս ցուցնել , հասցնել , եւայլն՝ կը վերջաւորին այսպէս .*

Կատարեալ. *ցուցի, ցուցիր , ցուց , ցուցինք, ցուցիք, ցուցին:*
Հրամայական . *ցուր , ցնենք , ցուցէք :*
Անցեալ ընդ. *ցուցած :*

90. *Խոցնել , ջինել , պագնել , առնել , ըսել , բերել , ընել , դնել , տանիլ, շալ և տալ բայերուն արմատ ժամանակները զարտուղութիւններ ունին :*

Ծանօթ. — *Դասատուն այս բայերը խոնարհել կուտայ և կը ցուցնէ զարտուղութիւնները :*

91. *Միավանկ բայեր խոնարհման մէջ կու մասնիկը կ'առնեն և ոչ կը : Ինչպէս՝ կու շատ , կու տայի :*

92. *Ձայնաւորով սկսող բայերէ առաջ կը մասնիկն ը գիրը կը կորսնցնէ և ապաթարց կ'առնէ : Ինչպէս՝ կ'առնեմ , կ'երգես , կ'ուզէ , կ'օրհնենք , եւայլն :*

Գիտելիք . — *Դիտեմ , կրնամ , ունիմ , կամ , եմ բայերը մասնիկ չեն առներ :*

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՑԵՐ

93. Անկանոն *են այն բայեր որոնց արմատը բոլորովին կը փոխուի խոնարհման մէջ* (Կանոն 79, էջ 63):

94. *Անկանոն են. ուտել , երթալ , գալ , ղրկել :*

Ծանօթ . — *Դասատուն ասոնց խոնարհման ձեւը կը գրէ տախտակին վրայ և աշակերտներն իրենց տետրակին մէջ օրինակելով կը սորվին :*

ԳԻՏԵԼԻՔ. — *Մէկ երկու բայեր կան որ ում կը վերջաւորին : Ասոնք ալ Ա. լծորդութեան կը հետեւին , քիչ բացառութեամբ :*

ՀՐԱՀԱՆԳ 69. — Արմատ ժամանակները գրեցէք :

1. *Խաղցնել , լուսցնել , մեռցնել , կպցնել , հասկցնել :*
2. *Խածնել , թքնել, պագնել , առնել , ըսել , բերել , ընել , դնել , տանիլ , լալ , տալ :*
3. *Ուտել , երթալ , գալ , ըլլալ , թողել :*

ՀՐԱՀԱՆԳ 70. — Իբր մեկ բայ խոնարհեցէք :

Մեծցնել , թքնել , խառնել , ուտել , ուզել , ընել :

ԹՌՈՒՑԻԿ

Դուք ամէնքդ ալ գիտէք թէ ի՞նչպէս կը շինուի Թռուցիկը։ Երբ հով կայ, Թռուցիկը թող կուտան օդին մէջ և երկար առասանով մը զայն կը բռնեն։ Թռուցիկը լայն է և վերի կողմը սրածայր, Թռչունի կը նմանի. սուր ծայրը օդը կը ճեղքէ և թեւերն ու տափակ պոչը դիւրաւ կը կենան օդին վրայ։ Ա՛յս է պատճառը որ Թռչունի պէս կը Թռչի։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք եւ գտէք բայերը. ի՞նչ դիտողութիւններ կրնաք ընել նոյն բայերուն վրայ։

Հրահանգ Բ. — Նոյն հատուածին մէջ, գոյականներէն որո՞նք յօդ ունին եւ որո՞նք յօդ չունին։

Հրահանգ Գ. — Աշակերտը գրաւոր եւ ապա բերանացի պատասխանէ սա հարցումներուն։

1. Ի՞նչ կ'ըլլայ կը մասնիկը՝ ձայնաւորով սկսող բայերէ առաջ։ 2. Ո՞ր բայեր կու մասնիկ կ'առնեն։ 3. Ո՞ր բայեր կը և կու մասնիկ չեն առներ։ 4. Ո՞ր ժամանակներ կը մասնիկ կ'առնեն, որո՞նք պիտի մասնիկ և որո՞նք կ'առնեն որ չաղկապ։

Հրահանգ Դ. — Սա արմատներէն ծագող բառերը գտէք։

1. Մատ, քար, գիր, տէր, չէն դաս, ճառ, լոյս, ծուխ։
2. Սուտ, լուռ, բարձր, անուշ, դառն, նեղ, հիւանդ, ցուրտ, մի։

Օրինակ. — Ներկ, ներկել, ներկարար, ներկայն։

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

89. Ի՞նչպէս կը խոնարհին ցնել վերջաւորող բայեր. գտէք տասը հատ։ 90. Ո՞ր բայեր արմատական ժամանակներու մէջ կը զատուին։ 91. Ո՞ր բայեր կու մասնիկ կ'առնեն։ 92. Ձայնաւորով սկսող բայերուն կը մասնիկն ի՞նչպէս կ'ըլլայ։ Ո՞որոնք են մասնիկ չառնող բայերը։ 93. եւ 94. Ո՞ր բայեր ա՛կանոն են։ Օրինա՞կ։

ԲԱՑԵՐՈՒՆ ՏԵՍԱԿԸ

95. Բայերը գլխաւորաբար չորս տեսակ են. Էական, Ներգործական, Կրաւորական, Չեզոք։

96. Ներգործական բայերը կը ցուցնեն թէ տէր բային կ'ազդէ ուրիշի մը վրայ։

Օրինակ. — Արեւը կը լուսաւորէ երկիրը։

97. Կրաւորական բայը, Ներգործականին հակառակն ըլլալով, կը ցուցնէ թէ ենթական ուրիշէն բան մը կը կրէ, կ'ազդուի։

Օրինակ. — Աշխարհ կը լուսաւորուի արեւէն։

Գիտելիք. — Կրաւորական բայերը կը շինուին Ներգործականէն՝ ծայրը ուիլ կամ ացուիլ ձեւին փոխելով։

98. Չէզոք են այն բայեր որոնց գործողութիւնն ենթակային վրայ կը մնայ և չ'անցնիր՝ չի ներգործեր ուրիշին։

Օր. — Ծովը կը փրփրի։ Ջուրը կը վազէ։ Ձիւնը վրնջէ։

Գիտելիք. — Չէզոք բայեր ցնել մասնիկով Ներգործական բայ կ'ըլլան։ Օրինակ. Մեծնալ՝-մեծցնել, փիչնալ՝-փիչցնել։

99. Կան չէզոք բայեր որ միայն եզակի Գ. դէմքով կը գործածուին. ասոնք կը կոչուին Միադէմ։

Օր. — Կ'անձրեւէ, կը ձիւնէ, կ'որոտայ, կը լուսնայ, մթնեց։

100. Երբ Ներգործական բայը ցուցնէ թէ տէր բային գործողութիւնը ուրիշի մը կատարել կուտայ, կը կոչուի Անցողական։

Օրինակ. — Ես պիտի կարդացնեմ այս գիրքը (ուրիշի մը)։

Գիտելիք. — Անցողական բայը կը կազմուի՝ Ներգործականին կցելով ցնել մասնիկը կամ տալ բայը։

ՀՐԱՀԱՆԳ 71. — Ներգործական բայերը Կրաւորական ըրէք եւ փոխադարձաբար։

Խզել, ծածկել, հնձուիլ, հրամայուիլ, որոշել, կարդալ, խաղալ, լուացուիլ, նեղուիլ, փռել, քաշուիլ, հոգալ, քաղուիլ, սուլել, պարարուիլ, փակել, պրկել, գրկուիլ։

ԲԱՐԻ ԱՂՋԻԿ ՄԸ

Զապէլ փողոցէ մը կ'անցնէր, թեւն անցուցած ծրար մը՝ ղրկելու հիին կը տանէր։

Փոքրիկ աղջիկ մը, որ քովէն կ'անցնէր վազելով, սահեցաւ և գետինն ինկաւ։

Իսկոյն ծրարը վար կը դնէ Զապէլ, փոքրիկ աղջիկին ձեռքէն կը բռնէ և վեր կ'առնէ։ Կը նայի որ խեղճին ճակատն ուռեցք մը կայ, ձեռքով կը շոյէ կը շփէ որ ցաւն անցնի։

Բայց փոքրիկը կուլար։ Զապէլ անուշ խօսքեր ըսաւ անոր, համբուրեց և ճամբան շարունակեց։

Այսպէս, պէտք է որ միշտ մարդիկ իրարու բարիք ընենք, ղիրար սփոփենք։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք այս հատուածը եւ բայերը գտնելով որոշեցէք անոնց տեսակը (*ներգործական, կրաւորական, չեզոք*, եւայլն)։

Հրահանգ Բ. — Ներգործական բայերը կրաւորակա՞ն ըրէք։

1. *Կիւղէնպէրկ հնարեց տպագրութիւնը* 1436 *ին։* 2. *Մենք կ'արհամարհենք ծոյլ տղաքը։* 3. *Դուն տեսա՞ր մեր կովերը։* 4. *Մենք հնձեցինք ցորենը։* 5. *Այդեկութքին կը քաղենք խաղողը։* 6. *Վարժապետը պատժեց պզտիկ Սիմոնը։* 7. *Դո՛ւն ծնծէ սա անպիտան տղան։* 8. *Պարապ հասկերը լեցուն հասկերը կը կլլեն։* 9. *Կեղծաւորները մարդ կը խաբեն։* 10. *Բարակները թող հետապնդեն զանոնք։*

Հրահանգ Գ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

95. *Քանի՞ տեսակ բայ կայ։* 96. *Որո՞նք են ներգործական բայերը։ Օրինակ։* 97. *Ի՞նչ կը ցուցնէ կրաւորական բայը։ Օրինակ։ Ի՞նչպէս կը շինուի։* 98. *Ո՞ր բայեր չեզոք են։ Օրինակ։ Չեզոք բայերն ի՞նչպէս ներգործական կ'ըլլան, տուէք տասը օրինակ։* 99. *Որո՞նք են միադիմ բայերը։ Օրինակ։* 100. *Ո՞րն է Անցողական բայը։ Օրինակ։ Ի՞նչպէս կը կազմուի։*

ԲԱՑԻՆ ՀԱՐՑԱԿԱՆ ՁԵՒԸ

101. *Բայը հարցական կ'ըլլայ՝ երբ վերջին ձայնաւորը երկար հնչուի։ Գրութեան մէջ նոյն ձայնաւորին վրայ կը դրուի պարոյկ (՞)։*

Ինչպէս. Կրնա՞մ, կրնա՞ տարակուսի՞ք, պիտի կարդա՞ն։

ՀՐԱՀԱՆԳ 72. — Սա բայերը հարցական ըրէք։

Ձիւն կուգայ. — Ճերմկեղէնները չփռեցիր. — Կատուէն կը վախնաս. — Դեղ պիտի խմես. — Խօսքերը մտիկ կ'ընես. — Միայն հացով կ'ապրի մարդս. — Ձեր շունը հաւատարիմ է. — Ուտել կ'ուզէիք. — Մէջտ կը վարձատրես աշխատասէրները. — Կարելի է որ դասը չգիտնայ. — Մեռելներն յարութիւն պիտի առնեն. — Կեանքը գերեզմանով չի վերջանար. — Ցիսուս խաչին վրայ մեռաւ. — Մարդուս կեանքն անվերջ բաղձանքներու շղթայ մ'է։

ՀՐԱՀԱՆԳ 73. — Սա խօսքերուն մէջ ո՞ր բառերը բայ են եւ ի՞նչ տեսակ բայ են։

Վարժապետը խրատեց իր աշակերտները. — Արեւը ծագեցաւ. — Հագուստ կարել կու տամ. — Գրիչդ ո՞վ կտարեց. — Անդին գնա. — Ուսկի՞ց առիր այս ոսկին. — Ճամբան գտայ. — Ցիսուս խաչուեցաւ. — Մանկիկը ժպտեցաւ. — Ինչո՞ւ խօսիլ կու տաք. — Ցաւերս մոռցուցիր. — Որո՞ւ գողցնել տուիր գիրքդ. — Երկինքը կ'որոտայ. — Ո՞րչափ շուտ մթնեց. — Աս հացը մգլեր է, չ'ուտուիր. — Դուռը կղպուեցաւ. — Ղազարոս մեռաւ և Քրիստոս զայն կենդանացուց չորս օր վերջը. — Տղա՛ք, շուտ հագուեցէք, գրքերնիդ առէք, դպրոց վազեցէք. — Սմբերը կը գոռան։

ՀՐԱՀԱՆԳ 74. — Հետեւեալ բառերը իբրեւ ենթակայ գործածեցէք մէյմէկ նախադասութեան մէջ։

Ես, դուն, ան, դպրոցը, մեր հայրը, հաւերը, իմ դասս, վարժուհին, զմրուխտը, կաղամարս։

ԼՈՒՍԱՒՈՐՈՒՄ

Լուսաւորման համար կը գործածենք ճրագ ու, մեղրամոմ, բուսական իւղ, քարիւղ և օդային կաղ։

Մոմը կը շինուի կենդանիներու փորէն ելած ճարպով կամ մեղրամոմով՝ (մեղրը հալեցնելով)։

Բուսական իւղը կը գոյանայ բոյսերէ, (ձիթենի, խաշխաշ ևն.)։ Քարիւղը բնական աղբիւրներէ կամ հորերէ կը բղխի քանի մը երկիրներու մէջ, ինչպէս հիւսիսային Ամերիկա և Կովկասի Պաքու քաղաքը։ Կաղը գետնածուխէն կ'արտադրուի։

Վերջապէս կայ նաև էլեկտրական լոյսը որ մեր ճանչցած լոյսերուն մէջ ամէնէն գեղեցիկն է, բոլորովին նոր գիւտ է ան, և օրէ օր կը կատարելագործուի։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք եւ որոշեցէք բայերուն տեսակը, յեսոյ գտէք նոյն բայերուն անորեւոյթը։

Հրահանգ Բ. — Ցարմար տեր-բայիները դրէք կէտերուն տեղ։

ՏԷՐ ԲԱՑԻ. — Լոյս, ջրվէժ, քամի, շողի, ակն, անձրև, գետ, գետակ, վտակ կամ առուակ, աղբիւր։

1. . . . ամպերէն կ'իջնէ։ — 2. . . . կու գայ արեւէն։ — 3. . . . ժայռերէն վար կը գահավիժի։ — 4. . . . գետինէն կը բղխի։ — 5. . . . կը փչէ հիւսիսէն։ — 6. . . . ծովէն կը գոյանայ։ — 7. . . . կը վազէ առուակին մէջ։ — 8. . . . կը հոսի գետակին մէջ։ — 9. . . . կը հոսի գետին մէջ։ — 10. . . կը թափի ծովուն մէջ։

Հրահանգ Գ. — Վերլուծեցէք հետեւեալները։

Հագայ, զողցար, փրթաւ, դարձաք, հրամցուցի, խաւծած, թքնող, պագաւ, առնել, ըսինք, դի՛ր, կը տանիմ, լացաւ, տուինք, կ'ընէի, կերար, եկանք, պիտի ուտէ, եղի՛ր։

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

101. Բայը ե՞րբ հարցական կ'ըլլայ։ Օրինա՞կ։ Դուրեան մէջ ի՞նչ կը գրուի հարցական բային վրայ։

ԲԱՑԻՆ ԺԽՏԱԿԱՆ ՁԵՒԸ

102. Բայը ժխտական կամ բացասական կ'ըլլայ և մի՛ մակբայներով որոնք կը գրուին բայէն առաջ։

103. Սահմանական ներկան և անկատարը բացասական կ'ըլլան եմ և էի բայերով և գլխաւոր բային անորեւոյթով, որուն ղ գիրը կը փոխուի ր ի (¹)։

Օրինա՛լ — Չեմ սիրեր, չես սիրեր, չի սիրեր, չենք սիրեր, չէք սիրեր, չեն սիրեր։ Չէի սիրեր, չէիր սիրեր, չէր սիրեր։

Գիտելիք — Ինչպէս կը տեսնուի, ներկայ եզակի Գ. դէմքը առանց օժանդակի կը գործածուի։ Նաև բաղաձայնով սկսող բայերէն առաջ, չ գրին քով կը գրուի։ Օրինակ՝ չի սիրեր, չի գար, չի տար, չի կարդար, եւայլն։

104. Մի՛ ժխտականը միայն հրամայական եզակի և յոքնակի Բ. դէմքերուն հետ կը գործածուի։

Օրինակ — Մի՛ սիրեր, մի՛ սիրէք, մի՛ խօսիր, մի՛ խօսիք, մի՛ կարդար, մի՛ կարդաք։

ՀՐԱՀԱՆԳ 75. — Սա բայերը խոնարհեցէք դէմ առ դէմ հասատական եւ ժխտական։

Քաղել, դանդաղիլ, մոռնալ, թողել։

ՀՐԱՀԱՆԳ 76. — Հետեւեալ խօսքերը ժխտական ըրէք։

Ո՞վ կը տեսնէ զիս. — Յովսէփ կը լսէ քու ձայնդ. — Շուտ կ'ուտես. — Այսօր զուարթ կը տեսնեմ զձեզ. — Խաղացէք չարունակ. — Դասատուն զձեզ կանչեց. — Շուտ ըրէ՛. — Առեղով փայտ կը կտրէն. — Փորձանքէ ազատեցաւ. — Ո՞վ է կերեր. — Ես ըրի. — Ծովը կը փրփրի. — Մերթ կ'ուրուտաս, մերթ կ'ամպես, մերթ կը մթնես մուայլ, մերթ կը տեղաս անձրև. — Բժիշկը հիմա կու գայ. — Տա՛ր զմեզ փորձութեան. — Կ'ուտեմ, կ'աշխատիս, կ'աղայ, կը խընդրենք, կը թողուք, կը դրուին, կ'երթայի։

(¹) Ունիմ և կամ բայերուն ժխտականը կ'ըլլայ. չունիմ, չունիս, չունի, եւայլն. չկամ, չկաս, չկայ, եւայլն։

Հրահանգ Ա. — 82 էջի հատուածը (ԼՈՒՍԱՒՈՐՈՒՄ) փոխեցէք ժխտական հարցական ձեւի :

Հրահանգ Բ. — Սա աներեւոյթներուն *Սահմանական ներկան*, *Անկատարը* և *Հրամայականը* գրեցէք հաստատական եւ ժխտական դէմ առ դէմ :

Առնել, *տանիլ*, *վախնալ*, *դնել*, *իջեցնել* :

Հրահանգ Գ. — Օրինակին համեմատ խօսքեր շինեցէք :

ՏԷՐ ԲԱՅԻ. — *Մուկ*, *աղուէս*, *եզ*, *ոզրուկ*, *կէտ*, *ճընճղուկ*, *չուն*, *կատուն*, *գազան*, *արծիւ* :

ԲԱՅ. — *Կրծել*, *կը լրտեսէ*, *ճարակել*, *ծծել*, *կլլել*, *կացել*, *խածնել*, *լակել*, *լափել*, *դիշատել* :

ՍԵՌԻ ԽՆԴԻՐ. — *Արմատներ*, *խոտ*, *մանր ճուկեր*, *արիւն*, *ցորեն*, *գող*, *կաթ*, *որս*, *դիակ*, *հաւեր* :

Օրինա՛լ. — *Մուկը արմատներ կը կրծէ* :

Հրահանգ Դ. — Վերլուծեցէք սա բայերը :

Պիտի խնդայի, *կը պատժուէր*, *լսեցինք*, *մտան*, *կարգացուած*, *կը փրփրի*, *Թող քիչնայ*, *մեծցո՛ւր*, *ամպեց*, *կը խաղցնեն*, *կը դրուի*, *կ'անցնիմ*, *կ'անցընես*, *կը մթնէ*, *մնա՛*, *ելէ՛ք*, *հանուի*, *զրկե՛նք*, *ուտել*, *կերցուց* :

Օրինակ. — *Պիտի խնդայի՝ չէզոք բայ*, *երբորդ լծորդութիւն*, *ապառնի անկատար ժամանակ*, *եզակի Ա. դէմք*, *աներ եւոյթն է խնդալ* :

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք :

102. *Ի՞նչպէս ժխտական կ'դրչայ բայը* : 103. *Ի՞նչպէս ժխտական կ'դրչան Սահմանական ներկան ու Անկատարը* : *Օրինա՞կ* : *Ի՞նչ գիտէիք կայ Սահմանական ներկայ եզակի Դ. դէմքին վրայ* : 104. *Ե՞րբ կը գործածուի մի՛ ժխտականը* : *Օրինա՞կ* : *Ի՞նչ գիտէիք կայ ունիմ եւ կամ բայերուն ժխտականին վրայ* :

Բային եւ ենթակային համաձայնութիւնը

105. *Բայը թիւով և դէմքով պէտք է համաձայնի ենթակային հետ* :

Օրինակ — *Դուն կը կարդաս: Ախթարները կը փայլին: Կը կարդաս եզակի Բ. դէմք է որովհետեւ Դուն ենթական եզակի Բ. դէմք է : Կը փայլին յոգնակի Գ. դէմք է, վասն զի ախթարները ենթական յոգն. Գ. դէմք է :*

ՀՐԱՀԱՆԳ 77. — *Տէր բային* եւ *բայը* յոգնակի ըրէք :

Սպասուհին կը վառէ ճրագը. — Դասախարակը կը կրթէ մանուկը. — Տղան պիտի սերտէ դասը. — Շեփորը կը հրաւիրէ որսորդը. — Քոյրդ կ'աւլէ և կը մաքրէ սենեակն ու սանդուխը. — Վաճառականը ծախեց իր գոյքը և մեկնեցաւ. — Եզը կը վարէ արտը. — Քահանան պատարագ կ'ընէ, իսկ վարդապետը քարոզ կու տայ. — Պահապանը թող հանդչի, չունը կը հակէ. — Անձրեւ կը տեղայ և փողոցը ջուրով կը լեցուի. — Հիւանը տախտակ կը կտրէ. — Վարդը այլ և այլ գոյներով կրնայ ըլլալ :

ՀՐԱՀԱՆԳ 78. — Եզակիի վերածեցէք *ենթակայ*, *բայ* եւ *խնդիր* :

Գործաւորները կը սրէին իրենց գործիքները. — Սպասաւորները կը բանային պատուհանները. — Աքաղաղները պիտի խօսին. — Օտարականներ այցելեցին քաղաքները. — Նաւաստիները պարզեցին առագաստները. — Գողերը ուզեցին տունները կողոպտել, բայց ոստիկանները վրայ հասան և ձերբակալեցին զիրենք. — Ուղեցոյցներ կ'առաջնորդէին ուղեւորներուն. — Ուղտերը անապատի նաւերն են. — Բանւորներ ջրհորները փորեցին. — Ջաղացպանները ցորեն կը գնեն, կ'աղան և կը ծախեն. — Այգեպանները կը կթեն այգիները և գինի կը շինեն. — Մենք համեմեցինք աղցանները. — Պայտարները կը լուսնեն ձիերը :

Հրահանգ Ա. — Սահմանները համապատասխանող նըմանաձայն բառերը գտէք :

1. Ա. *Հատու գործիք մը որով հաց, միս, եայլն կը կտրեն :*
   Բ. *Հեղուկ մը որուն մէջ թաթխելով գրիչը՝ կը գրենք :*
2. Ա. *Այն տեղը ուր հաց կ'եփեն :*
   Բ. *Սպիտակ փխրուն հող մը զոր ջուրով կը մարեն պատ ծեփելու համար :*
3. Ա. *Գործիք մը որով կը փչեն հնոցներուն կրակը :*
   Բ. *Զմրան՝ ցուրտ և սաստիկ քամի :*
4. Ա. *Տեսակ մը փեղոյր՝ զոր կը կրեն իշխաններ և քահաներ :*
   Բ. *Փայտէ գործիք մը որով լուացքի ատեն լաթերը կը ծեծեն՝ աղտ մաքրելու համար,*
5. Ա. *Մեռած կենդանիի մը մարմինը :*
   Բ. *Փայտէ գործիք մը ձողաձև՝ որով ջուրին մէջ կը քալեցնեն նաւակները :*

Հրահանգ Բ. — Շեղագիր բայերը յոճնակի Ա. դէմք ըրէք փակագիծի մէջ ցուցուած ժամանակներով :

1. *Մենք գոհ ըլլալ* (*Սահմանական ներկայ*) *երբ մեր դասը լաւ սորվիլ* (*Սահմանական ներկայ*) :
2. *Եթէ դուք առաքինի ըլլալ* (*Ստորադ. Անկատար*), *երջանիկ սեպուիլ* (*Ապառնի Անկատար*) :
3. *Թէպէտ չմանչնալ* (*Սահմ. Անկատար*), *սակայն քանի մ'անգամ տեսնուիլ* (*Կատարեալ*) *հետը :*
4. *Երբ մեծնալ* (*Ստորադ. ներկայ*) *մեր ծնողքին օգնելու ջանալ* (*Ապառնի*) :
5. *Մենք ցաւիլ* (*Սահմ. ներկայ*) *որ պատճառ ըլլալ* (*Կատարեալ*) *քու վնասուելուդ :*
6. *Մենք չկրնալ* (*Կատարեալ*) *ընդունիլ ձեր հրաւէրը, ինչու որ հիւանդ ըլլալ* (*Անկատար*) :

Հրահանգ Գ. — Սա նմանաձայններով խօսքեր շինեցէք :

1. *Դանակ. թանաք.* — 2. *Փուռ, բուռ.* — 3. *Փոշ, բոշ.* — *Դիակ, թիակ :*

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք:

105. *Ինչպէս կը համաձայնի բայը տէր բայիին հետ :*

106. *Երկու եզակի կ'արժեն մէկ յոգնակի. — Բայ մը որ ունի քանի մը եղակի ենթակայ, յոքնակի կը գրուի :*

107. *Եթէ ենթակաները երրորդ դէմքի անուն կամ դերանուն են, բայը կը գրուի յոքնակի Գ. դէմք։ Ինչպէս. Հայր եւ որդի կ'աշխատին : Քու հայրդ եւ իմ եղբայրս պիտի գան :*

108. *Եթէ ենթակաները զանազան դէմքերով են, բայը կը գրուի յոքնակի և կ'առնէ նախապատիւ դէմքը։ Ա. Դէմքը երկրորդ էն նախապատիւ է, երկրորդն ալ երրորդ էն։ Ինչպէս. Դուք եւ ես կ'երթանք այգի : Դուք եւ իմ եղբայրս կրնամ կարդալ :*

ՀՐԱՀԱՆԳ 79. — Փակագծուած բայերը սահմ. ներկայ դրէք եւ համաձայնեցուցէք ենթակայի՛ն :

Պետրոս և Նշան (*խաղալ*). — *Այծն ու ոչխարը* (*ուտել*) *խոտ.* — *Արդարութիւն և խաղաղութիւն* (*իշխել*) *երկրի վրայ.* — *Ձին և էշը* (*տանիլ*) *մեր բեռները.* — *Ծիծառն ու սոխակը* (*երգել*) *ծառերուն մէջ.* — *Վարդն ու մանիշակը անուշ* (*բուրել*). — *Գիւղացին և քաղաքացին* (*դիմել*) *վաճառականոյը.* — *Հացն ու միսը* (*անուշանալ*) *զմեզ։*

ՀՐԱՀԱՆԳ 80. — Բայերը ապառնի ըրէք եւ ենթակային համաձայնեցուցէք :

Հայրս և ես (*սիրել*) *զձեզ.* — *Դուն և Պօղոս* (*հերկել*) *այս դաշտը.* — *Ընկերներս ու ես* (*լողալ*) *լիճին մէջ.* — *Այս աղջիկն ու դուն* (*փետտել*) *հաւերը.* — *Ան ու ես* (*գալ*) *ձեր տունը.* — *Քոյրդ և դուն հեռաւոր երկիր* (*ճամբորդել*). — *Դուն և ես* (*չինել*) *տուն մը.* — *Մովսէս և ես այգի* (*երթալ*). — *Դուն, Մարկոս և փոքրիկ Մինաս* (*խաղալ*) *պարտէզին մէջ։*

ՓՈՔՐԻԿ ԲՌԶՈՒՆՆԵՐԸ

Ան փոքրիկ երաժիշտները որ, դարունը, զուարթօրէն կը թռչտին պարտէզներու և պուրակներու մէջ, ի՞նչ կ'ըլլան արդեօք ձմեռ ատեն։ — Անոնք կ'երթան հեռու տեղեր, մեր երկրէն աւելի տաք երկիրներ, ուր կը վայելեն դեղեցիկ եղանակը, մինչ ձմեռուան ցուրտն ու արտմութիւնը կը պաշարէ մեզ։ Ցեռոյ, երբ նորեկ դարունը վարդեր ցանէ մեր պարտէզներուն ու հովիտներուն վրայ, անոնք նո՛ւրէն կուգան մեր քով։

Հրահանգ Ա. — Եզա'լի վերածեցէք այս հատուածը։

Հրահանգ Բ. — Գտէք նոյն հատուածին մէջի դերանունները եւ որոշեցէք անոնց տեսակը, դէմքը, թիւը, հոլովը։

Հրահանգ Գ. — Էջ 86 ի Բ. Հրահանգը Եզ. Ա. դէմքի վերածեցէք, այսպէս. Ես գոհ կ'ըլլամ, երբ դասս լաւ սորվիմ։

Հրահանգ Դ. — Նոյնը Եզակի Բ. դէմքի վերածեցէք։

Հրահանգ Ե. — » Յոգն. Բ. » »

Հրահանգ Զ. — » » Գ. » »

Հրահանգ Է. — » Եզակի Գ. » »

Հրահանգ Ը. — Օրինակին համեմատ խօսքեր շինեցէք։

Հորթ, ուլ (կամ ամիկ), թոժիւն, կորիւն, գառաղ, եղնորթ, վառեակ, մորուկ (կամ բուչոյ), քուռակ (կամ յաւանակ), լակոտ (սկունդ կամ կոռնակ), գառնուկ (որոջ կամ բուծ), խոճկոր, ձագ, երախայ (կամ մանուկ), կոզուկամ բուծ), խոճկոր, ձագ, երախայ (կամ մանուկ), կոզուկ

Օրինակ. — Հորթ կը կոչուի փոքր կովը։

Հրահանգ Թ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

106. Բանի մը եզակի տեր բայի ունեցող բայը ի՞նչ թիւ կ'առնէ։ Օրինա՞կ։ 107. Բա՞ը ե՞րբ յոգնակի Գ. դէմք կը դառնայ։ Օրինա՞կ։ 108. Տարբեր դէմքով տեր բայի ունեցող բայը ի՞նչ դէմք կ'առնէ։ Օրինա՞կ։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

109. Նախադասութիւն կը կոչուի խօսք մը որուն մէջ կայ էական բայ, Տեր բայի և Սոորոգելի։

Ինչպէս. Հացն ու միսը ուտելի են։ Օդը զով է։

110. Շատ անգամ սոորոգելին էական բային հետ միացած կ'ըլլայ։ Ինչպէս. Տղան կը կարդայ իր դասը։

Կը կարդայ բայը կը պարունակէ սոորոգելի մը՝ կարդացող և էական բայ մը՝ է։

Գիտելիք. — Այս տեսակ բայեր կը կոչուին ածական բայ։

111. Խօսքի մը մէջ այնքան նախադասութիւն կայ որքան դիմաւոր բայ։

Գիտելիք. — Բային անորոշութիւն և ընդունելութիւններին զատ, միւս բոլոր եղանակները դիմաւոր են։

ՀՐԱՀԱՆԳ 81. — Գտէք հետեւեալ հատուածին մէջ նախադասութեան զանազան մասերը (¹) (ենթակայ, բայ, սոորոգելի, խնդիր)։

Հրաշալի բոյսեր են ծաղիկները որոնք գարնան կը ծաղկին. գոյնզգոյն և անուշ բուրումներ ունին։ Պարտէզներու մէջ կը մշակուին վարդը, շահպրակը, շահոքրամը, մանիշակը, յակինթը և յասմիկը։ Մարգերու մէջ կը բուսնին զանակի ծաղիկը, շուշանը, առուոյտը, և այլն։

Ծաղիկներէն եաքը կուգան պտուղները։ Տեսակ տեսակ պտուղներ կան. կուտաւոր կ'ըսուին այն պտուղները որոնք մսոտ ու ջրոտ են. բայց մէջը ունին կուտ մը, ինչպէս են դեղձը, ծիրանը, սալորը, կեռասը։ Թիւնաւոր պտուղներն ալ ջրոտ ու մսոտ են, բայց ներքին կողմը ունին հատիկներ կամ թիւեր, ինչպէս են խնձորը, տանձը, զրեարը և այլն։ Հատաւոր կ'ըսուին այն պտուղներ որոնք կակուղ ու կլոր են և ունին շատ մանր հատիկներ, ինչպէս են խաղողը, նարինջը և ելակը։ Փետեկաւոր են նուշը, ընկոյզը, կաղինը, շագանակը։

(¹) Դիւրութեան համար նախ թիւերով զատեցէք նախադասութիւնները՝ իրենց վերաբերեալ մասերով, յետոյ պատշաճ հարցումներով գտէք իւրաքանչիւր բառի պաշտօնը։

ՄՕՐ ՄԸ ԽՐԱՏՆԵՐԸ

Աղջի՛կս, աշխատէ՛, կայա՛ռ եղիր, համարձա՛կ շարժէ և խօսէ, զուարթ ու ժպտա՛ն վարուէ։ Ժի՛ր գործէ։

Երբ ես մեռնիմ, խորհէ՛ իմ վրաս՝ որ քեզի համար աշխատած ու տանջուած եմ։ Բարի՛ եղիր։ Ջանա՛, առանց վարանելու, բարիք ընել ուրիշին. մի՛ ցաւիր կորսնցուցածիդ վրայ, վաստկէ՛ առանց վատութեան և ստորնութեան։ Քու քոյրերուդ երջանկութիւնը ուելցնել աշխատէ։

Հրահանգ Ա. — Շեղագիր բառերը յոռնակիի վերածեցէք։

Հրահանգ Բ. — Գտէք ածական բայերը (կանոն 110) եւ զատեցէք ստորոգելին եւ հական բայը։

Հրահանգ Գ. — Հետեւեալ շեղագիր բառերուն տեղ, համապատասխան դէմքով ու թիւով դերանուններ դրէք։

1. *Երկրագործը կը հնձէ ցորենը, յետոյ երկրագործը կը կապէ ցորենը։* 2. *Յովսէփ սրբագրեց Յակոբին դասը, և Յակոբ չնորհակալ եմ ըսաւ Յովսէփին.* 3. *Կառապան Յակոբ լծեց իր կառքը, կառապան Թադիկ ալ լծեց իր կառքը։* 4. *Ամէնքդ դիտէք ձեր դասերը, ե՛ս ալ իմ դասերս դիտեմ։* 5. *Սալորները — մենք քաղեցինք սալորները — հասունցած և անուշ էին։* 6. *Աս տղաքը կը սիրեն իրենց դրացիները, դրացիներն ալ կը սիրեն և կը մեծարեն աս տղաքը։*

Հրահանգ Դ. — Յոռնակիի վերածեցէք՝ նեռնակը գրելով։

1. *Ես կը ճերմկցնեմ։ Դուն կը խնդայիր։ Ան սկսաւ։ Որ ան օրհնէ։ Ես կը հեռանէի։ Դուն կ'իջնէիր։ Որ ան խնդար։ Ես լալու եմ։ Դուն խօսեցար։*

Օրինակ. — *Ես կը ճերմկցնեմ = մենք կը սեւցնենք։*

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

109. *Ի՞նչ է նախադասութիւն։ Օրինա՞կ։* 110. *Ստորոգելին ի՞նչ կ'ըլլայ շատ անգամ։ Օրինա՞կ։* 111. *Խօսքի մը մէջ ո՞րչափ նախադասութիւն կայ։ Օրինա՞կ։ Ո՞ր եղանակները դիմաւոր են։*

ԳԼՈՒԽ Զ.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԴԵՐԲԱՅ

112. *Ընդունելութիւն կը կոչուին այն բառերը որոնք թէ՛ ածականի և թէ՛ բայի դեր (դերբայ) կը կատարեն։*

Ա. Բայի պաշտօն կը կատարեն երբ գործ կը ցուցնեն և այն ատեն դիմաւոր բայի հետ կը գտնուին ընդհանրապէս։

Օրինակ. — *Սիրող եմ, տեսած ես կամ տեսեր ես, լսելու է։*

Բ. Ածականի դեր կը կատարեն երբ վիճակ կամ որպիսութիւն կը ցուցնեն և պարզապէս իրը ածական գրուած են գոյականի մը քով.

Օրինակ. — *Սիրող մարդ, տեսած գործ, լսելիք ձայն, գրելու թուղթ, ցանկալի բարեկամ, ուսեալ կին, եայլն։*

113. *Երեք տեսակ ընդունելութիւն կայ։*

1. *Ներկայ ընդունելութիւն որ կը վերջաւորի ող կամ իչ։*
2. *Անցեալ՝ որ կը վերջաւորի ած, եր կամ եալ։*
3. *Ապառնի՝ որ կը յանգի լու, լի, լիք։*

ՀՐԱՀԱՆԳ **82.** — Որոշեցէք ընդունելութիւնները։

Եկող տղան բարեկամս է. — Աստուած ներող և արդարադատող է. — Այս կինը հաղուստ կարող է. — Հասունցած պտուղները կ'ուտուին. — Պարտէզին պտուղները հասունցած ըլլալու են. — Ուսեալ կիները յարգելի են. — Իրիկուան քանի՞ ժամ մնացած է. — Մնացած ցորենը աղքատներուն բաժնեց. — Հինցած կօշիկներդ նետէ՛. — Լաթերս շատ հինցած են. — Մեռած մարդը տեսայ. — Ե՞րբ մեռած է պապդ. — Խմելու ջուր չկա՞յ. — Ի՞նչ է ընելիքդ։

ՀՐԱՀԱՆԳ **83.** — Որոշեցէք սա դերբայները։

Հնձող, փրկիչ, գրուած, անցեալ, ուսելիք, ցրուիչ, մկրտիչ, արարիչ, հրաժարեալ, հրաւիրեալ, երդիչ։

Ա Ղ

Ածուխն և ուրիշ հանածուներու պէս, աղն ալ կը գտնուի երբեմն հողին տակ։ Բայց ընդհանրապէս ծովէն կը հանեն զայն, ծովին ջուրը դարձնելով ցամաքեկ աւազաններու մէջ որոնք կը կոչուին աղաշիճ։ Արեւուն ջերմութիւնը կը շոգիացնէ այդ ջուրը որ կը ցնդի, և հողին վրայ կը մնայ աղը։

Հրահանգ Ա. — Որոշեցէք դիմաւոր բայերը եւ ապա գտէք անոնց անեղեւոյթներն ու դերբայները։

Հրահանգ Բ. — Գրաւոր եւ բերանացի պատասխանեցէք սա հարցումներուն։

1. Ի՞նչ ըսել է հանածու։ 2. Ուրկէ՞ կը հանուի։ 3. Աղը ո՞ր տեղերէ կը հանեն։ 4. Ի՞նչպէս կը հանեն։ 5. Ի՞նչ է աղաշիճը։ 6. Ջուրը ի՞նչ կ'ըլլայ արեւուն ջերմութեամբ։ 7. Հողին վրայ ի՞նչ կը մնայ։ 8. Ի՞նչ բանի կը գործածուի աղը։

Հրահանգ Գ. — Սա դերբայները խոնարհեցէք եակաց բային հետ, ժխտական ձեւով։

1. Օրհնող։ 2. Լացած։ 3. Հրաւիրեալ։ 4. Առեր (միայն Սահմ. ներկայ եւ անկ.)։ 5. Ցուցնելու։ 6. Նստելիք։

Օրինակ. — Ուտող չեմ, ուտող չես Եայլն։ Լացած չեմ, լացած չես Եայլն։ Չեմ առեր, չես առեր, Եայլն։ Ցուցնելու չեմ, Եայլն։ Նստելու չեմ, նստելու չես Եայլն։

Հրահանգ Դ. — Սա անեղեւոյթներեն ծագող բոլոր դերբայները գրեցէք։ Փրկել, զրգռել, նեղել, զսնել, գործել, զեղչել։

Օրինակ. — Փրկած, փրկեր, փրկելիք, փրկող, փրկիչ։

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

112. Ո՞ր բառեր դերբայ են։ Ե՞րբ բայի պաշտօն կը կատարեն եւ ե՞րբ ածականի։ Օրինակներ տուէք։ 113. Քանի՞ ընդունելութիւն կայ, ի՞նչպէս կը վերջաւորի ներկայ ընդունելութիւնը, անցեա՞լը, ապառնի՞ն։

ԳԼՈՒԽ Է.

ՄԱԿԲԱՅ

114. Մակբայը անփոփոխ բառ մ'է որ կը ճշդէ՝ բայի մը, ածականի մը կամ ուրիշ մակբայի մ'իմաստը։

Օրինակ. — Քիչ խօսիլ։ Շատ աղուոր դիմի։ Աւելի կանուխ կ'արթնամ։

Քիչ մակբայը կը ճշդէ՝ խօսիլ բային իմաստը, շատ մակբայը կը ճշդէ՝ աղուոր ածականին իմաստը։ Եւ աւելի մակբայը կը ճշդէ՝ կանուխ մակբային իմաստը։

115. Դիմաւոր մակբայներն են.

1. Ժամանակական. — Հիմա, երբ, կանուխ, ուշ։
2. Տեղական. — Հոս, հոն, վար, մէջ, ներս, վեր։
3. Քանակական. — շատ, քիչ, աւելի, միայն, ա՛լ։
4. Հաստատական. — այո՛, հարկաւ, իրաւ, ճիշդ։
5. Ժխտական. — ոչ, չ, մի՛, երբեք, բնաւ։
6. Հարցական. — Ի՞նչպէս, ե՞րբ, ինչո՞ւ, ո՞ւր, ուրկէ՞։
7. Տարակուսական. — գուցէ, արդեօք, միթէ։
8. Եղանակական. — չուտ, կամաց, աղէկ, դէշ, լաւ։
9. Ցուցական. — անա, անաւասիկ, աւասիկ։

ՀՐԱՀԱՆԳ 84. — Որո՞նք են մակբայ եւ ո՞ր բայերուն կը վերաբերին։

Ի՞նչպէս իմացար այս խօսքը. — Կամաւ քանանայ եղաւ. — Իսպառ մինակ մնացի. — Դեռ կը անտնա՞ս. — Երկու տարի միասին ապրեցանք. — Մերթ զուարթ է մերթ տխուր. — Երբեմն ակարութիւն կը զգամ։ — Երբ դուն եկար, արդէն լմնցած էր հանդէսը. — Շատ կանուխ է. — Նախ խորհէ՝ և ապա խօսէ. — Ըսածիդ վրայ՝ եռքը պիտի զղջաս անշուշտ. — Ինչո՞ւ տխուր ես. — Ժամը քանի՞ն է արդեօք. — Հո՛ս եկուր։

ԾՈՅԼԸ

Միշտ ուրիշներուն բեռ կ'ըլլայ, ուշ կ'արթննայ, կանուխ կը պառկի, բնաւ հաճոյք չի զգար աշխատութենէ, աղուոր աղուոր կը յօրանջէ, բոյսի կեանք կը վարէ քան թէ կենդանիի։ Չի դրեր, չի կարդար, շարունակ յոգնած լսկած է, երբեք համ չ'առներ կեանքէն։ Ահա՛ ծոյլին վիճակը։

Հրահանգ Ա. — Ո՞ՐՆԻՑ ԵՆ մակբայները եւ ի՞նչ տեսակ են:

Հրահանգ Բ. — Թիւերով զատեցէք նախադասութիւնները եւ որոշեցէք նախ բառերու պատճառը, յետոյ անոնց տեսակն ու կրած փոփոխութիւնները:

Հրահանգ Գ. — Ցոհնակիի վերածեցէք այս հատուածը:

Հրահանգ Դ. — Շեղագիր մասնիկներով մակբայներ կազմեցէք: Այսպէս. *հայրաբար, մեծապէս, կուրորեն, շեղակի:*

ԱԲԱՐ = *Հայր, մտերիմ, բարեկամ, խոհեմ։*
ԱՊԷՍ = *Մեծ, ճշմարիտ, գաղտնի, յայտնի, արագ։*
ՕՐԷՆ = *Կոյր, լուրջ, վեհ, թեթեւ, զուարթ։*
ԱԿԻ = *Շեղ, շեշտ, երբեմն, ուղիղ, կողմն, յաճախ, թեթեւ, յանկարծ, ուժգին, վաղվաղ, փոփոխ, որոշ։*
ԳԻՆ = *Ոյժ, ողբ, տրտում, ցաւ, սիրտ, զուարթ, լալ։*

Հրահանգ Ե. — Խօսքեր շինեցէք հետեւեալ մակբայներն ու անոնց ներհակը գործածելով:

Քիչ, կանուխ, աղէկ, շուտ, աւելի, հեռու, հոս, երբեք, կամաւ, ճշմարիտ։

Օրինակ. — *Քի՛չ խօսէ, շա՛տ կարդա։*

Հրահանգ Զ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք:

114. *Ի՞նչ է Մակբայը։ Օրինա՞կ։* 115. *Որո՞նք են ժամանակ ցուցնող մակբայները, տեղ ցուցնող, խանակուրիւն, հաստատութիւն, ժխտում, հարցում, ցաւակոյս, եւ այլն ցուցնող մակբայները։*

ԳԼՈՒԽ Ը.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

116. Նախադրութիւնը *անփոփոխ բառ մ'է որ գոյականին կամ դերանունին կցուելով՝ կը ցուցնէ ուրիշ բառի մը հետ նոյնին առնչութիւնը։*

Օրինակ. — *Ծառին վրայ եղաւ։ Ինծի հետ եկուր։*

117. *Նախադրութիւն ունեցող բառը կը կոչուի նախադրութեան խնդիր։*

Ինչպէս, վերի օրինակին մէջ, ծառին և ինծի բառերը։

118. *Նախադրութիւններէ ոմանք իրենց խնդիրէն առաջ կը դրուին, ոմանք ալ՝ վերջը։*

119. *Գլխաւոր նախադրութիւններն են.*

Մէջ, տակ, ներս, դուրս, քով, մօտ, առաջ, վրայ, առջեւ, եսք, ետեւ, համար, հետ, չափ, պէս, զատ, եւայլն։

Գիտելիք. — *Քանի մը նախադրութիւններ կրնան հոլովուիլ և յոդ առնել, ինչպէս. Քովս, քովիս, քովիս, ներսովս, մօտէդ, վրան։*

120. *Վերոյիշեալներէն ոմանք կրնան իբրև մակբայ ալ գործածուիլ։*

1. *Մակբայ են, երբ բայի մը քով են։*
2. *Նախդիր են, երբ գոյականի կամ դերանունի քով են։*

ՀՐԱՀԱՆԳ 85. — Ո՞ՐՆԻՑ ԵՆ *նախադրութիւնները* եւ անոնց *խնդիրները։*

Այս մարդը իբրև յանցաւոր պիտի պատժուի. — Զայնդ մինչև ինծի հասաւ. — Ուղեւորները լեռն ի վեր մագլցեցան. — Զմեռն ի բուն ձիւնեց. — Պարիսպին վրայէն իջաւ. — Զքեզ տեսնելէ վերջը անոր հանդիպեցայ. — Որսորդներուն հետ ճամբայ ելանք. — Մեզմէ հեռու պիտի ըլլաս. — Լեռան անդիմի կողմը կը բնակին. — Դատաւորին առջև եկաւ. — Յովսէփ դէպի իր եղբայրները վազեց. — Ես ալ ձեզի չափ գիտեմ. — Ընկերոջս համար է. — Միծեռնակը կ'երգէ ծառին վրայ. — Քրոջը հետ կը խօսէր։

Հրահանգ Ա. — Կեսերուն տեղ նախադրութիւն դրէք :

Ծառին . . . նստայ : — Գիրքերդ դարակին . . . դիր : — Այդ հովանոցը ինծի . . . է : — Ծովուն . . . ձուկ կայ և օդին . . . թռչուններ : — Ցիսուս այրի մը . . . ծնաւ և խաչին . . . մեռաւ : — Երկու չարագործներ ալ խաչուեցան Անոր . . . : — Հայրս կ'աշխատի առաւօտէ . . . իրիկուն մեր ապրուստը ճարելու . . . : — Տասը պատուէրները գրուած էին քարէ տախտակներու . . . : — Աստուած պատուիրեց որ իր անունը բերան չառնենք պարապ բաներու . . . :

Հրահանգ Բ. — Դնէք սա բառերուն հականիշը :

Համեմատ , մօտ , առանց , վար , եռա , վրայ , դուրս , մէկտեղ , հեռու , զատ , առջև , մէջ :

Հրահանգ Գ. — Աս նախդիրները մէյմէկ խօսքի մէջ գործածեցէք , սա'պէս .

Քու պատուէրիդ համեմատ կարդադրեցի ամէն ինչ :

Հրահանգ Դ. — Վերլուծեցէք սա խօսքերը :

Հիմա կուգայ : — Հոս կը բնակէր : — Շուտ կ'ուտես : — Հարկաւ բան մը պիտի առնեմ : — Չեմ ընդունիր : — Ինչո՞ւ չկրցար քնանալ : — Արդեօք պիտի ընդունի՞ : — Աղէ՛կ ըսիր : — Ահա ձեր բաժինը :

Օրինակ . — Հիմա՝ ժամանակական մակբայ՝ կուգայ բային : Կուգայ՝ չէղոք բայ , անկանոն , Սահմանական եղանակ , ներկայ ժամանակ , եզակի Գ. Դէմք : Տէր բային է ան՝ զօրութեամբ :

Հրահանգ Ե. — Բերանցի եւ գրաւոր պատասխանեցէք :

116. Ի՞նչ է նախադրութիւնը եւ ի՞նչ կը ցուցնէ : Օրինա՞կ : 117. Ո՞ր բառերը կը կոչուին նախադրութեան խնդիր : Օրինա՞կ : 118. Նախադրութիւնները իրենց խնդիրին առա՞ջ կը դրուին թէ ետը : 119. Նախադրութիւնը կրնա՞յ հոլովուիլ : 120. Նախադրութիւնները ե՞որ կրնան մակբայ դլլալ : Օրինա՞կ :

ԳԼՈՒԽ Թ.

ՇԱՂԿԱՊ

121. Շաղկապը անփոփոխ բառ մ'է որ իրարու կը կապէ միեւնոյն տեսակէ բառերը կամ նախադասութիւններ :

Օրինակ — Ձին եւ էշը օգտակար կենդանիներ են : Աշխատութիւնը դառն կը թուի, բայց իր պտուղը քաղցր է :

122. Գլխաւոր շաղկապներն են

Եւ, ու , բայց , այլ , թէ , երբ , սակայն, ալ, այլեւ, թէորդ, թէպէտ , թէեւ , ինչպէս , զի , վասնզի , քանզի , որովհետեւ , երբ, կամ, մինչ , մինչդեռ, իսկ, որ, մանաւանդ , նաեւ , ո՛չ թէ, ո՛չ միայն, քան թէ, անգամ, նոյն իսկ, արդ, ուստի, ուրեմն, հապա, ապա, ապա թէ ոչ, թո՛ղ թէ, բայց թէ, իբր թէ, գրեթէ, այսինքն , գոնէ, գէթ , զոր օրինակ , այն է , եւայլն :

ՇՐԱՋԱՆԳ 86. — Ստորագծեցէք շաղկապները :

Պետրոս և Յովհաննէս կ'երթային.— Ուզէ՛ առնելիքդ, բայց նաև վճարէ՛ պարտքերդ. — Ո՞ւրչափ կ'ուզէի որ հայրս տեսնէի . — Նամակն հասա՞ւ թէ չհասաւ . — Եղբայրդ կամ քոյրդ պէտք է հոս գայ . — Աստուած Սոդոմ Գոմոր քաղաքները այրեց , վասն զի անոնց բնակիչներն անզգամ էին, բայց միայն Դովտ ազատեցաւ . — Եթէ ուզես , կրնաս զիս հրաւիրել . — Եղբայրս տունն է , իսկ քոյրս՝ ոչ . — Եթէ ուզես՝ քեզի ալ կուտամ :

ՇՐԱՋԱՆԳ 87. — Զանազանեցէք մակբայներն ու նախադրութիւնները :

Սպասէ՛ , մինչեւ որ գամ . — Մինչև մահը հաւատարիմ մնաց. — Հակառակ իմ կամքիս մեկնեցար բնակավայրէդ . — Ինչու հակառակ կը խօսի . — Օրէնքի համաձայն գործէ . — Համամիտ և համաձայն պիտի վարուի . — Ծառին վրայ թառեցաւ . — Զինուորները վրայ հասան և ձերբակալեցին յանցաւորը . — Իմ եռեւէս կուգայ . — Հագուելէ ետքը դուրս ելաւ . — Ինծի հետ կուգա՞ս :

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ամէն մարդ կը խօսի և կը գրէ. բայց մինչև որ քերականութիւն սորված չըլլայ, խօսածին ու գրածին մէջ սխալներ կ'ընէ։ Քերականութիւն գիտցողը լաւ կը գրէ և ճիշդ կը խօսի, հոլովներն և խոնարհումները սխալ չի գործածեր, եղակի տէր բայերին հետ յոգնակի բայ չի դներ։ Այս տեսակ սխալներ շփոթութիւն կը պատճառեն և խօսքը չի հասկցուիր. ուրեմն ինչո՞ւ հոգ չտանինք՝ այսքան կարեւոր ուսում մը լաւ սորվելու։

Հրահանգ Ա. — Օրինակեցէք հատուածը եւ գտէ՛ք մակբայները, նախադրութիւնները եւ շաղկապները։

Հրահանգ Բ. — Որոշեցէք նախադասութիւնները եւ բառերու պատճառն ու տեսակը ճշդեցէք։

Հրահանգ Գ. — Էջ 60 Հրահանգ Բ.ի դերանունները մէյմէկ խօսքի մէջ գործածեցէք։

Օրինակ — *Ես ձեր բարեկամն եմ։*

Հրահանգ Դ. — Վերլուծեցէք սա խօսքերը՝։

Ընկերիդ քովէն մի՛ բաժնուիր։ — Ինծի մօտ պիտի ըլլայիր։ — Լեռան վրայէն անցաւ։ — Դանէն դուրս չելանք։ — Սրտիդ մէջ չարութիւն չունիս անշուշտ։ — Ճամբորդներուն վրայ խուզարկեցի, բայց բան մը չգտայ։

Օրինա՝լ — *Ընկերիդ՝ հասարակ անուն եզակի սեռական դիմորոշ, քովէն նախադրութիւնին խնդիրն է։ Քովէն նախադրութիւն՝ հոլովուած՝ եզակի բացառական, և դիմորոշ յօդով։ — Մի՛ ժխտական մակբայ՝ բաժնուիր բային։ Մի բաժնուիր՝ բայ կրաւորական, հրամայական եղանակ, եզակի Բ. դէմք. տէր բային է դուն՝ զօրութեամբ։*

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

121. *Ինչ է շաղկապը։ Օրինա՞կ։* 122. *Ո՞ռոնք են գլխաւոր շաղկապները։*

ԳԼՈՒԽ Ժ.

ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

123. Միջարկութիւն *կամ* Յայնարկութիւն *կը կոչուի այն բառը որ կը բացատրէ մեր հոգիին կիրքը կամ յուզումը, ինչպէս զարմանք, ցաւ, բարկութիւն, ուրախութիւն, արհամարհանք, երկիւղ, զղջումանք, և այլն։*

124. Գլխաւոր միջարկութիւններն են։

1. *Զարմանք յայտնող — ո՜հ, զարմանք։*
2. *Ուրախութիւն » — ո՜հ, ա՜հ։*
3. *Ցաւ, գութ, զղջում յայտնող — վա՜հ, ափսո՜ս, աւա՜ղ, մե՜ղմ, բարէ՜, մեղա՛յ։*
4. *Անէծք յայտնող — վա՛յ, անէ՛ծք։*
5. *Բաղձանք յայտնող — երանի՜ թէ, ո՜ւր էր թէ, իցի՜ւ թէ։*
6. *Խրախոյս յայտնող — օ՛ն, հապա՛, աղէ՛, ապրի՛ս, կեցցէ՛, ազնի՛ւ, հա՛։*
7. *Զզուանք յայտնող — ո՛հ, գարշելի՜, պի՛ղծ, է՜հ։*
8. *Բարկութիւն յայտնող — ա՛յ, հա՛յ։*
9. *Արհամարհանք » — վա՜շ, բէ՜հ։*
10. *Մերժում, սոսկում յայտնող — օ՛ն անդր, քաւ լիցի։*
11. *Կանչելու համար. — ո՛, ո՛վ, ա՛յ, հէ՛։*
12. *Դովելու համար. — ազնի՛ւ, կեցցե՛ս, քա՛ջ է։*
13. *Ողջունելու համար. — բարե՛ւ, ողջո՛յն։*

ՀՐԱՀԱՆԳ 88. — Որոշեցէք *միջարկութիւնները։*

Ա՜հ, ինչ գեղեցիկ է արեւը. — Ո՜հ սիրելիս, կը ցաւիմ վրադ. — Մե՜ղք որ չկրցայ տեսնել. — Վա՜յ չար, ինչպէս յանդգնեցար. — Ո՜հ մի խոցեր կարեվէր սիրտս. — Ո՜վ տէր, մի՛ մերժեր խնդիրքս. — Երանի՜ համբերող մարդուն, վասնզի ան պիտի ժառանգէ երկինքը. — Ապրի՛ս, որդեակ իմ. — Հա՛յ չարաճճի. — Աւա՜ղ վառացս անցաւորի։

ԳԻՏՆԱԼՈՒ ԲԱՆԵՐ

Գիտեմ թէ խօսած բառերս այլ և այլ խումբերու կը բաժնուին։ Անձ, կենդանի և առարկայ ցուցնող բառերը կը կոչուին ԳՈՅԱԿԱՆ (¹)։ Որպիսութիւն ցուցնող բառերը կը կոչուին ԱԾԱԿԱՆ (¹)։ Գործողութիւն կամ վիճակ, այսինքն ընել կամ ըլլալ նշանակող բառերը ԲԱՅ (¹) կը կոչուին։ Կրնամ նախադասութիւն մը վերլուծել, այսինքն բառերուն տեսակն ու պաշտօնը որոշել։

Հրահանգ Ա. — Ուղղագիր գիծերով որոշեցէք նախադասութիւնները եւ անոնց մասերը։

Հրահանգ Բ. — Կէտերուն տեղ յարմար մակբայներ դիր։

1. *Ազնիւ ծերունին . . . կը բնակի շատ ատենէ ի վեր։* — 2. *Ցանցաւոր աչակերտները . . . կայնեցան սրահին դուռը։* — 3. *Մաքուր օդը . . . կը նպաստէ մեր առողջութեան։* — 4. *Ագահ մարդը . . . իր շահին կը զոհէ իր հանգիստը։* — 5. *Ժիր երկրագործը . . . կարօտ չ'ըլլար չապիկի։* — 6. *Ծոյլ տղաները . . . կը զբաղին անպէտ բաներով։*

Հրահանգ Գ. — Օրինակին համեմատ խօսքեր շինեցէք։

Բրուտ, բժիշկ, դարբին, դայեակ, դերձակ, լպուտ, խաղախորդ, հիւսն, հովիւ, ձկնորս, ոսկերիչ, ոստայնանկ, որսորդ, պայտար, պարտիզպան, ջաղացպան, սափրիչ, սեղանաւոր, ստնտու, վարժապետ, փայտահար, քահանայ։

Օրինակ — *Բրուտը կը շինէ հողէ ամաններ։*

Հրահանգ Ե. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

123. *Ո՞ր բառեր ձայնաւորութիւն կը կոչուին։ Օրինա՞կ։* 124. *Որո՞նք են գլխաւոր միջաւորութիւններ։ Ի՞նչ բաներ կ'արտայայտեն։*

(¹) *Օրինակներ տուէք։*

ԲԱՑԱՅԱՅՏԻՉ

125. *Բացայայտիչ կը կոչուին այն բառերը որոնք ուրիշ բառի մը իմաստը բացայայտ ընելու համար գործածուած են։*

Օրինակ. — Մեր փրկիչը՝ Յիսուս՝ ծնաւ այրի մը մէջ։ Մովսէս Մարգարէն Իսրայէլացիներուն բերաւ՝ տասնաբանեայ պատուիրանքը։

Այս խօսքերուն մէջ բացայայտիչ են Յիսուս և Մովսէս բառերը, իսկ աշխարհի փրկիչը և մարգարէ բառերը բացայայտեալ են։

126. *Բացայայտիչը բացայայտեալէն առաջ կամ ետքը կրնայ դրուիլ։*

Օրինակ. — Յորդանան գետ կամ գետ Յորդանան։ Եղբայր Յակոբ՝ կամ Յակոբ եղբայր։

Հրահանգ Ա. — Բացայայտիչին տակ մէկ գիծ եւ բացայայտեալին տակ երկու գիծ քաշեցէք։

Յովհաննէս Մկրտիչ Յորդանան գետին մէջ մկրտեց աշխարհի փրկիչ Յիսուսը։—Մայր եկեղեցիի ժամօրհնողն է Մամբրէ վարդապետ։ — Հռովմ քաղաքը եօթը բլուրի վրայ շինուած է։ — Շաթ-էլ-Արապ գետը կը թափի Պարսկական ծոցը։ — Անգղիայի մայրաքաղաքը, Լոնտոն, շինուած է Թէմզ գետին վրայ, իսկ Ֆրանսայի մայրաքաղաքը՝ Բարիզ՝ Սէն գետին վրայ։ — Յակոբ Նահապետ շատ լացաւ իր սիրական որդիին՝ Յովսէփի մահը լսելով։ — Մեր դպրոցին անտեսն է Ղուկաս եղբայր։

Հրահանգ Բ. — Գրեցէք սա բայերուն *Սահմանական* ներկան, անկատարը, ապառնին, եւ սռորադասականը։

Մորթել, յորդել, երդուընալ, խորդալ, հագնիլ, հագցնել, հագուիլ, առնել, արթննալ, երթալ, քնանալ։

Հրահանգ Գ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

125. *Ի՞նչ է բացայայտիչը եւ բացայայտեալը։ Օրինա՞կ։* 126. *Ո՞րը առաջ կը դրուի։*

ԿՈՉԱԿԱՆ

127. *Կոչական կ'ըսուի այն բառը որ կը յուցնէ անձը կամ իրը զոր կը կոչենք, անոր ուղղելով մեր խօսքը։*

Օրինակ — *Մովսէ՛ս, կոչիկդ հանէ։ Հայրի՛կ, հրաման կու տա՞ս որ երթամ պտտիմ։*

128. *Կոչականը ստորակէտով կը բաժնուի խօսքին միւս մասերէն, և վրան կը դրուի շեշտ կոչուած նշանը (՛)։*

Օրինակ — *Սիրելի՛դ իմ բարեկամ, սիրելի՛ բարեկամս, Հոս եկուր, տղա՛ս։ Հոգեա՛կս։ Թռչնի՛կ իմ սիրուն։*

Հրահանգ Ա. — Կոչականներն usnրագծեցէք։

Տէ՛ր Աստուած, ներէ՛ մեղքերուս։ — Կ'աղաչեմ, քո՛ւրիկս, ինծի օգնէ քիչ մը։ — Յո՛վսէփ, ինչո՞ւ քովս չես գար։ — Մայրի՛կ, նայէ ի՛նչ աղուոր ծաղիկ մ'ունիմ։ —«Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ զիս թողուցիր» ըսաւ Յիսուս։ — Ո՛վ մարդ, միշտ պիտի ուքնիս, և պիտի յոգնիս։ — Վարժա՛պետ, հրաման կ'ուտա՞ս որ խաղանք։ — Ո՜հ, ինչ անուշ և ինչպէս զով, առաւօտուց փչես, հո՛վիկ։

Հրահանգ Բ. — — Կէտերուն տեղ շաղկապներ դրէք։

Անձրեւն . . . ձիւնը երկինքէն կ'իջնեն։ — Ջուրը հեղուկ է . . . սառոյցը՝ պինդ մարմին։ — Ինծի ալ տուէք . . . կը հաճիք։ — Չեմ կրնար քնանալ . . . շատ յոգնած եմ։ — Շատ ցաւեցայ իմանալով . . . հիւանդ էք։ — Պէտք է ցանես . . . հնձես։ — Այդ արգիլեալ պտուղէն մի՛ ուտեր . . . կը մեռնիս։ — Մարդ չի հաւատար քեզի . . . անդամ մը սուտ խօսած ես։ — Աս վարդապետը լաւ կը խօսի . . . շատ կը խօսի։ — Հին ատեններ կը կարծէին . . . երկիրը տափարակ է։ — Օրինակն աւելի աղդու է . . . խօսքը։

Հրահանգ Դ. — Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք։

125. *Ի՞նչ է կոչականը։ Օրինա՞կ։* 126. *Ի՞նչ գիտէիք կայ կոչականին վրայ։*

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Հրահանգ **1**. — Օրինակին պէս խօսքեր շինեցէք։

1. *Ասեղ, գնտասեղ — Գիրք, լրագիր — Եղ, կով — Ձի, զամբիկ — Ոչխար, գառնուկ — Խալկին, սան — Դեղձանիկ, թռչնակ — Հիւանդ, վիրաւորեալ — Սպայ, զինուոր — Լիրա և մէճիտիէ։*

2. *Դրագարան, զօրանոց, քսակ, աղամանդ, գոմ, փաթախ (մանտրա), ախոռ, վանդակ, խոհանոց, հիւանդանոց։*

Օրինակ. — *Ասեղն ու գնտասեղը աղամանդին մէջ են։*

Հրահանգ **2**. — Սա խօսքերը յոգնակիի վերածեցէք։

1. *Ես կը հերկեմ արտս։ Ես կը փորեմ պարտէզս։ — Ես կը քաղեմ խաղողս։ — Ես կը շահիմ ապրուստս։*

2. *Դուն կը քաղես խոտդ։ — Դուն կը հնձես ցորենդ։ — Դուն կը լեցնես պարկերդ։ — Դուն կը տնկես ծառդ։*

3. *Ան կը կորէ իր ծառը։ — Ան կը զատէ իր ոչխարը։ — Ան կը կրէ իր բեռները։*

Հրահանգ **3**. — Որոշեցէք շեղագիր բառերուն տեսակն ու պատճառը։

1. *Խօսիլն արծաթ է, լռելն՝ ոսկի։*
2. *Դրածդ չի կարդացուիր։*
3. *Մեռնողներն յարութիւն պիտի առնեն։*
4. *Կարդացածդ չմոռնաս։*
5. *Կարդալիքը առանց թող սերտէ։*
6. *Ըսելիքս հարկաւ դուշակեցիր։*
7. *Հրաւիրեալները ժամանակին եկան։*
8. *Առնելիքը պիտի սեղմի։*

Հրահանգ **4**. — Գիծերուն տեղ դրէք պատշաճ նախդիրը։

Դասագիրքիս — դեղեցիկ պատկերներ կան։ Վաղը հօրս — այդի պիտի երթանք։ Սանդուխտ կոյս նահատակուեցաւ Թադէոս առաքեալին —։ Օդը ցուրտ ըլլալուն համար, մայրս արգիլեց որ դուրս ելլեմ։ Ջուրը կը լեցնեն գոյլին —, իսկ գինին տակառի —։ Ծառին — նստինք։ Պարտէզին — ցանկ կը քաշեն։ Մեր տան — աղբիւր մը կայ։ Թռչունն իր բոյնը կը շինէ ծառերուն կամ տանիքներուն —։ Առտուընէ — իրիկուն խաղա՞լ կ'ուզես։

Հրահանգ 5. — Խօսքերը ամբողջացուցէք կէտերուն տեղ դնելով սա բառերը :

1. *Սեր , սեր , սեռ :* 2. *Երեկ , երեք :* 3. *Գունս , կունս :* 4. *Մեկ , մեգ :* 5. *Հարթ , յարդ :*

1. *Մայրը իր տղոյ վրայ շատ . . . ունի : — Ագարակն էինք ուր մեզի հրամցուցին կաթ , . . . և կարագ : Մարդիկ և կենդանիներ երկու մեծ խումբ կը ձեւացնեն . արական . . . և իգական . . . :*

2. *. . . ամսուն 19 ն էր , այսօր 20 ն է : — Բերականութեան մէջ դէմքը . . . է . խօսողը , մտիկ ընողը և բացակայ անձը որուն վրայ կը խօսուի :*

3. *Աշխարհս կլոր է , ինչպէս . . . մը : — Ծերերուն և շատ տքնող անձերուն գլուխը . . . կամ ճաղատ կ'ըլլայ :*

5. *Ատուած . . . է : — Երբ արեւը ծագի . . . կամ մշուշը կը փարատի :*

4. *Ամէն դաս դիւրին չէ , ինչպէս ամէն ուղի . . . չէ : — Եղն ու ձին կ'ուտեն գարի . . . և խար :*

Հրահանգ 6. — Ո՞ւր կը բնակի . *Թռչունը , օձը , գիւղացին , հովիւը , արջը , մարդը , ձին , ոչխարը , հարուստը , աղաւնին , առիւծը , ձուկը , սարդը , մուկը , կրիան , մեղուն , չերամը , քահանան , ճամբորդը , կրօնաւորը :*

Գրեցէք այսպէս . *Օձը կը բնակի հողին մէջ :*

Հրահանգ 7. — Սա մասնիկներով վերջացող հինգ հինգ ածական գտէք :

Ական , աւոր , ային , եան , ելի , ալի , ոտ , ուտ , եղէն , եայ , եղ , ող , ած , իչ , աւէտ , գին , գոյն , եայ , երէն , որդ , իկ , ակ , ուկ , ուն , կոտ , ուրդ , ատ , բար , պէս , օրէն , ակի :

Հրահանգ 8. — Ցոհնակի վերածեցէք եւ ստորագծեցէք Տէրբայիները :

Ձին կ'արշաւէ : Նապաստակը կը վազէ : Էշը կը ցատքէ : Եղը կը քալէ : Գառնուկը կը վազվզէ : Այծը կ'ոստոստէ : Կատուն կը ցատքէ : Գորտը կը ցատքէ : Մողէսը կը սահի : Օձը կը սողայ : Կրիան կը դանդաղի : Թռչունը կը թռչի : Ձուկը կը լողայ : Որդը կը զեռայ : Դրոշը կը ծածանի : Սկիւռը կը մագլցէ : Երկիրը կը թաւալի : Արծիւը կը ճախրէ եւ կը սաւառնի : Առիւծը կը խոյանայ : Կոյրը կը դանդաղէ և կը խարխափէ : Մանուկը կը կայտռէ : Նեռը կը սլանայ : Ատուպը կը սուրայ : Արեւը կը ծագի : Եղջերուն կը վազվզէ : Ա-

նիւը կը հոլովի : Ջուրը կը հոսի , կը վազէ կամ կը թափի : Ժամացոյցին սլաքը կը յառաջէ և կը դառնայ : Ճօճանակը կը ճօճի : Նաւը կը սուրայ : Կառախումբը կը թաւալի : Անձրեւը կը տեղայ :

Հրահանգ 9. — Հետեւեալ բառերը միացնելով բարդ բառեր կազմեցէք , այսպէս . *գիր-գրող գրագիր :*

Պտուղ-բերող , քուն-բերող , Աստուած-սիրող , արծաթ-սիրող , նիւթ-պաշտող , ուսմունք-սիրող , մարմին-մարզող , Աստուած-ծնող , լուսով-փայլող , արագ-հոսող , բեռն-կրող , լեռն-բնակող , հուր-բղխող , այգի-գործող , երկիր-գործող , աստղով-զարդարուած , կուռք-պաշտող , Աստուծմէ-շնչուած , նոր-ծնած , երկաթով-կռուած , ոսկիով-ձուլուած , արծաթով-օծուած :

Հրահանգ 10. — Սա խօսքերուն մէջ ջնջեցէք վերադիրները (*ածական եւ մակբայ*) :

1. *Այն աղնիւ ծերունին հոս կը բնակի շատ ատենէ ի վեր :* 2. *Ցանցաւոր աչակերտները կարգաւ կայնեցան սրահին դուռը :* 3. *Մաքուր օդը շատ կը նպաստէ մեր առողջութեան :* 4. *Ագահ մարդը միշտ իր շահին կը զոհէ իր հանգիստը :* 5. *Ժիր երկրագործը բնաւ կարօտ չըլլար շապկի :* 6. *Ծոյլ աղաքը շարունակ կը զբաղին անպէտ բաներով :* 7. *Ճշմարիտ բարեկամը հաղուագիւտ գանձ մ'է ստուգիւ :*

Հրահանգ 11. — Խօսքերն ամբողջացուցէք շեղագիր բառերը դնելով կէտերուն տեղը :

1. *Զախ , ցախ :* 2. *Հատ , յատ :* 3. *Պարկ , բարկ , բարք :* 4. *Որթ , որդ :*

1. *Փոքրիկ Կարապետ կը խաղար պարտէզին մէջ ուր դէզ մը . . . կար , յանկարծ ինկաւ և . . . ձեռքը արիւնեցաւ :*

2. *Աւելի լաւ է . . . ըլլալ քան ստախօս : Ծերունի մը կ'անցնէր . . . քայլերով :*

3. *. . . մը ալիւր գնեցին : — Ամէն ժողովուրդ ունի մասնաւոր նկարագիր , սովորոյթներ և . . . : — . . . քացախը շատ թթու կ'ըլլայ :*

4. *Փոքրիկ . . . մը կրնայ կրծել ոչնչացնել ահագին ծառ մը : — . . . մեզի կուտայ խաղող որմէ կը շինենք գինի :*

Հրահանգ 12. — Առաջին բառը սեռական ըրէք յետոյ բայ մը կցեցէք , յետոյ խնդիր մը , վերադիրներ , եւայլն :

Արև ջերմութիւն : Թթենի տերև : Սէր անկեղծութիւն : Պօլիս կլիմա : Գարուն ծաղիկ : Ծնունդ շարական : Աչուն հովերը

Հրահանգ **13**. — Սա բայերեն ծագող ուրիշ բայեր գտեք:

Օրինակ. — *Պատռել* (*Ներգործ.*), *պատռիլ* (*Չեզոք*), *պատռուիլ* (*Կրաւ.*):

Պատռել, կոտրել, կոտրտել, կտրել, կտրտել, այրել, աւրել, ըստկել, պարտկել, հալել, մաշել, խաշել, ընկճել, վառել, արածել, վաթել, թափել, չփոթել, համարել, գըրգռել, քրքրել, կործանել, թաւալել, գլորել, շրջել:

Հրահանգ **14**. — Գտեք սա բառերուն հանգիտը:

Այժմ, ի զուր, տակաւին, խկոյն, խպառ, մերթ, մերձ, ստէպ, հզօրապէս, միասին, գաղտնի, կամաց, սաստիկ, արագ, ստոյգ, երբեք:

Հրահանգ **15**. — Սահմանիներուն համապատասխան բառերը գտեք եւ ապա անոնցմով խօսքեր կազմեցէք:

1. *Էական Դերանուն Բ. Դէմքի յոգնակի ուղղականը:*

Մարդոց և կենդանիներու բերանին մէջ գոյացած ջուրը կամ լորձունքը:

2. *Ծովային կենդանիներու ամէնէն մեծը:*

Ամենափոքրիկ նշանը զոր գրիչը թղթին վրայ կրնայ թողել:

3. *Երկու բանակներու կռիւը: Տարուան երրորդ ամիսը:*

4. *Տան մը դստիկոնը:*

Տուրքը զոր հպատակները կը վճարեն:

5. *Կենդանիներուն փոքրը:*

Տախտակի, քարի կամ ուրիշ առարկայի մը վրայ բաց մնացած տեղ:

Հրահանգ **16**. — Հետեւեալ բառերը յոգնակի շինեցէք այսպէս. *Թուղթերու պրակներ*:

Պրակ մը թուղթ, տրցակ մը բանալի, կապոց մը մանած, խուրձ մը հասկ, ձեռք մը հագուստ, ծրար մը կտաւ, փունջ մը ծաղիկ, հատոր մը գիրք, գլուխ մը սոխ, լոհ մը կամ դիր մը սապոն, հոյլ մը ախթար, շարք մը ստուգիւն, ընթացք մը դատ, կարգ մը աշակերտ, գունդ մը ոստիկան, բեռ մը փայտ, պարկ մը ածուխ, շիղջ մը ջուր, կոյտ մը հող, շեղջ մը յարդ, դէզ մը ցախ, ափ մը չամիչ, պտղունց մը աղ, բուռ մը խոտ, տորմիզ մը նաւ, ծալք մը պաստեխ, կոմ մը կամ փերթ մը ապուխտ, շերտ մը հաց, պճեղ մը ախտոր, շիթ մը արցունք, կաթիլ մը անձրեւ, կայլակ մը քրտինք:

Հրահանգ **17**. — Հետեւեալ բառերը դրեք կէտերուն տեղ՝ իմաստին յարմարցնելով:

ՍԵՌԻ ԽՆԴԻՐ — *Փողոցները, հունձքերը, մարգագետինը, ամպերը, երկիրը, լեռները, դաշտերը, կերակուրները, հողը:*

1. *Գետը կ'ոռոգէ . . . :* — 2. *Առուակը կ'արգասաւորէ . . . :* — 3. *Հովը կը ցրուէ . . . :* — 4. *Անձրեւը կը զովացնէ . . . :* — 5. *Արեւը կը տաքցնէ . . . :* — 6. *Կարկուտը կ'աւերչտկէ . . . :* — 7. *Ձիւնը կը պատէ . . . :* — 8. *Կաղը կը լուսաւորէ . . . :* — 9. *Կրակը կ'եփէ . . . :*

Հրահանգ **18**. — Հետեւեալ բառերով բարդ բառեր կազմեցէք, այսպէս. *հազիւ-գտնուող* — հազուագիւտ:

Առաջ—դրուած, վաղ (կանուխ) մեռած, բարձրէն—դիտող, միշտ-դալար, նախ-ընծայուած, միշտ-ըզխող, շատ-խօսող, սակաւ-ուտող, ամուր-կռած, պինդ-կազմուած, յառաջ-դասուած, կարի-վիրաւորուած, սաստիկ-կոծուած, բարձր-դրուած, կանխաւ-որոշուած, վաղ-ծանօթ, դիւրաւհաւանող, ստոյգ-պատմուած, ուժգին-պրկուած, յանկարծհանող, շատ-շրջող, մեղմով-տատանող, յամր-քալող, խստիւ-պահանջող:

Հրահանգ **19**. — Օրինակին համեմատ վեց հոլովով գործածեցէք սա բառերը:

Պարիսպ, եկեղեցի, արեւ, վերմակ, քաղաքավարութիւն:

Օրինակ — *Ծառը չորցաւ: Ծառին քար մի՛ նետեր: Ծառը կտրեցինք: Ծառէն խնձոր քաղեցինք: Ծառով զարդարեցինք մեր պարտէզը:*

Հրահանգ **20**. — Գտեք սա բառերուն հականիշը:

Ոչ, առջև, դուրս, առանձին, արագ, հեռու, քիչ, ուշ, դրսէն, վար, վարէն, առջեւէն, վաղը, երեկոյին, վերջապէս, ետք, բնաւ, ծանր, առաջ, սաստիկ, տխրագին, ուժգին, ցրտագին, յայտնի, սուտ, դիւրաւ, կամովին:

Հրահանգ **21**. — Ի՞նչ հոլով են շեղագիր բառերը:

Աս բանտորները գիւղ տարէք: Նամակը թղթատարով յղեցի Պոլիս: — Երկու վայրկեանէն դպրոց հասայ: — Շուտ մը դասարան մտէք: — Վարժապետը դպրոցն է: — Ութ օրէն Իզմիր պիտի ըլլամ: — Տարին վեց անգամ կ'այցելեմ ազարակներս: — Մօրաքոյրս Եգիպտոս հաստատուած է:

— *Մեռաքսեղէն կերպասները Լիսն կը չինուին։* — *Գղուխս ցաւ մը մտաւ։* — *Մէջքս գօսի չկայ։* — *Գրպանդ ո՞րչափ ստակ ունիս։* — *Թուղթը ծոցդ դիր։* — *Քեզ տեղ պիտի ղրկեմ։* — *Ամէն բան տեղն է։*

Ծանօթ. — *Նոյն հրահանգին մէջ պէտք է զանազանել անանախդիր տրական հոլովներն ու անանախդիր ներգոյականները։*

Հրահանգ **22**. — Օրինակին համեմաս խօսքեր շինեցէք։

ՏԷՐ ԲԱՑԻ — *Եզ, ձի, խոզ, կատու, կէտ, փիղ, գայլ, խեցգետին կամ խեչափառ, կրիայ, խղունջ, պիծակ, բազէ, արծիւ, առիւծ, ոչխար, թուխակ, ոզնի։*

ԽՆԴԻՐ — *Եղջիւր, փուշ, սմբակ, կտուց, ժանիք, կըճղակ, թաթ, ճիրան, տտուն, մագիլ, պատիճ, ճանկ, հերձատամներ, խայթոց, խեցի, չօչափուկ, պատեան։*

Օրինակ — *Եզը եղջիւր ունի։*

Հրահանգ **23**. — Հետեւեալ նոյնաձեւ բառերը մէկ մէկ խօսքի մէջ գործածեցէք։

Այ (*շաղկապ*) *ա՛յ* (*մակբայ*) *իր* (*դոյական*) *իր* (*ստաց. ած.*) *թէ* (*շաղկապ*) *թէ՛* (*մակբայ*) *որ* (*յարաբ. դեր.*) *որ* (*շաղկապ*)։

Հրահանգ **24**. — Օրինակին պէս, չորս ձեւով գործածեցէք սա բառերը։

Դաշտ, սեղանատուն, բանտ, երկինք, անտառ։

Օրինակ — 1. *Դպրոցը* (*ուղղական*) *նոր շինուեցաւ։* — 2. *Եղբայրդ այցելեց դպրոցը* (*հայցական*)։ — 3. *Ուսմունքը դպրոցը* (*ներգոյական*) *կը սորվինք։* — 4. *Կանուխ դպրոց* (*տրական*) *գացի։*

Հրահանգ **25**. — Սա բառերուն արմատները գտէք։

Գտնել, եռալ, ելնել, չինել, քաղել, տեսնել, փախչ, անցնիլ, սահմանել, ցանել, խաղալ, գրել, տնկել, բուսնիլ, խաչել, շարել, ծագիլ, արտօրալ, վազել, հնձել, օձել, օրօրել, փորել, խոցել, դատարկել, փութալ, զբօսնել, արթընալ, մածնել, մակրդել, խազել, ճարել, ճառել, երդուընալ։

Օրինակ — *Գտնել — գիւտ, եռալ — եռք։*

Հրահանգ **26**. — Դեմ առ դեմ խոնարհեցէք։

Փթթիլ — փրթիլ, ճռնչել — հանգչիլ, մխել — մխալ, ընկերանալ — ընկերակցիլ։

Հրահանգ **27**. — Սա բառերը *մակբայ* են, անոնց հով գրեցէք *բայեր։*

Շատ, քիչ, կրկին, նորէն, դուրս, ներս, հոս, հոն, հիմա, վերջը, վաղը, այսօր, միշտ, երբեմն, գիշեր, ցորեկ, հերու։

Հրահանգ **28**. — Գրեցէք սա բայերուն արմատական ժամանակները (*կատարեալ, հրամայական* եւ *անցեալ դերբայ*)։

Բերել, ըսել, ընել, դնել, ուտել, զարնել, ըլլալ, նստիլ, տանիլ, գալ, տալ, լալ, գնալ, երթալ, իյնալ, առնել, թքնել, խառնել, խածնել, պագնել, դառնալ, ոռնալ։

Հրահանգ **29**. — Ցոհնակիի վերածեցէք էջ 12ի հատուածը (ՄԵՐ ՊԱՐՏԷՐԸ)։

Հրահանգ **30**. — Նոյնը առաջին դէմքով գրեցէք այսպէս. ԻՄ ՊԱՐՏԷՐԵՐՍ. — *Ես պէտք է սիրեմ, եւայլն։*

Հրահանգ **31**. — Էջ 30ի հատուածը (ԴԱՍԱՐԱՆԻ ՄԷՋ) յոհնակիի վերածեցէք։

Հրահանգ **32**. — Էջ 34ի հատուածը (ՓՈՔՐԻԿ ՎԵՐԳԻՆԷՆ) գրեցէք ուրիշ կերպով. ներկայացուցէք անոգ եւ անուշադիր աղջիկ մը, այսպէս. *Վիրգինէ մեծկակ աղջիկ մ'է, դանդաղ ու թթամիս, եւայլն։*

Հրահանգ **33**. — Էջ 46ի հատուածը (ՀՈՎԻՐԸ) յոհնակիի վերածեցէք, այսպէս. *Իրենց ոչխարներուն հովիկը* . . .։

Հրահանգ **34**. — Գծեցէք տասը սիւնակ եւ անոնց մէջ զատ զատ գրեցէք էջ 78ի հատուածին (ԹՌՈՒՑԻԿ) բառերը, որոշելով բառերուն տեսակը (*գոյական, ածական, եւայլն*)։

Հրահանգ **35**. — Էջ 88ի հատուածը (ՓՈՔՐԻԿ ԹՌՉՈՒՆՆԵՐ) եզակիի փոխեցէք։

Հրահանգ **36**. — Էջ 94ի հատուածը (ԾՈՑԼԸ) յոհնակի ըրէք։

Հրահանգ **37**. — Կեսադրուքեան կանոնները գրելով՝ օրինակներ գտէք։

Հրահանգ **38**. — Սա դերբայները խոնարհեցէք եակա՛ն բայի հետ (= բաղադրեալ ժամանակներ)։

Քալող, քալած, քալեր, քալելու։ — *Հալող, հալած, հալեր, հալելու։* — *Լուացող, լուացած, լուացեր, լուալու։* — *Թողող, թողած, թողեր, թողելու։*

Գիտելիք — *Անցեալ դերբային եր վերջացող ձևը՝ միայն Սահմանական ներկայ և անկատար կրնայ խոնարհուիլ։*

Հրահանգ **39**. — Սոյն հրահանգի բայերը խոնարհեցէք նաեւ ժխտական ձեւով։

Հրահանգ **40**. — Սա երեք կարգ բառերով խօսքեր կազմեցէք օրինակին պէս։

Ա. *Ստնտու, ոստայնանկ, խաղախորդ, պայտար, որսորդ, ձկնորս, ջաղացպան, պարտիզպան, հիւսն, լպուտ։*

Բ. *Մաքրել, աղալ, գործել, բռնել, մշակել, դիեցնել, որսալ, լուսնել, տաչել, գզել։*

Գ. *Ցորենը, ձիերը, ծաղիկները, փայտը, թռչունը, մորթը, ձուկը, կտաւը, բամպակ, մանուկը։*

Օրինակ — *Ստնտուն կը դիեցնէ մանուկը։*

Հրահանգ **41**. — Գտէք սա բառերուն նմանաձայնները. անոնց սահմանը տուէք. անոնցմով մէյմէկ խօսք կազմեցէք։

Քայլ, սառ, բարք, ճար, վանկ, դեւ, դի, դոյլ, դաղար, բուռ, դուք, լուռ, սեր, ձիւն, գիրկ, կնիք, հօտ, հարկ, կառք, ցախ, պապակ, թանաք, բակ, յամր, ուխտ, թաս, քեռի, յամառ, հառաչ, ճանկ, հոյն, դուր, ախտ, ծագ, որթ, երէկ, մարտ, յարդ, գուշտ, հերու, դանկ, փերթ, մէջ։

Հրահանգ **42**. — Գտէք անցեալ դերբայները։

Տեսնել, մտնել, իջնել, գտնել, հասնիլ, հագնիլ, մեռնիլ, անցնիլ, բուսնիլ, գողնալ, գիտնալ, կենալ, ունենալ, հասկնալ, հասկցնել, բարկանալ, բարկացնել, փախչիլ, թռչիլ, դպչիլ, փչիլ, կպչիլ, կառչիլ, մեղանչել, գոչել, հաչել, մոռնալ, դառնալ, համբառնալ, երդուիլնալ, առնել, հասցնել, փախցնել, լացնել, պագցնել, խածնել, թքնել, պագնել, զարնել, ըսել, բերել, ընել, դնել, տանիլ, լալ, տալ, ուտել, երթալ, գալ, ըլլալ։

Հրահանգ **43**. — *Ինչ գիտէք արմատին ծայրը և ունեցող բայերուն վրայ։*

ՎԵՐՋ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.P.A. Публичная Библиотека
7/XI 1922
ԱՄԵՍԻԱ, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0245662

6242